




ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ
ԺԱՐԱՆԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱԲԵՐՆԵՐՈՒՆ
ԴԻՄՆՑ

ԴՈԿՏ. ԱՐԷԼ ՔՀՆՅ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ
ԺԱՐԱՆԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱԻԷՐՆԵՐՈՒՆ
ԴԻՄԱՑ

ԺԸՆԵԻ
2003



ՀՈԳԵԻՈՐ ԾՆՈՂԻՍ՝

ՆՈՐԻՆ Ա. ՕԾՈՒԹԻՒՆ

Տ. Տ. ՎԱԶԳԷՆ Ա.

ԵՐԶԱՆԿԱՅԻՇԱՏԱԿ

ՀԱՅՐԱՊԵՏԻ

ԽՆԿԵԼԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին ինք-պինք ճանչցած է իբրև ժողովուրդի Եկեղեցին: Ազգ եւ Եկեղեցի իրարու հետ նոյնացած եւ դարձած են մարմին եւ հոգի մէկ ամբողջութիւն՝ կապարեալ ներդաշնակութեան, միութեան եւ հաղորդութեան մէջ:

Հաղորդութիւնը Եկեղեցոյ միութեան երաշխիքն է: Ան Եկեղեցոյ էութիւնն է պարզապէս. հաղորդութիւն՝ Տիրոջ Խորհուրդի եւ հաւատարեալ ժողովուրդի միջեւ:

Եկեղեցին կապմող այս պոյգ իրականութիւններուն մէջ առկայ հոգեւոր հաղորդութիւնը իր շօշափելի ար-պայայտութիւնը կը գտնէ հաղորդակցութեան մէջ: Հաղորդակցութիւնը միջոցն է՝ կենդանի խօսքը, գիրը, աւանդութիւնը, ծէսը, պաշտամունքը, օրէնքն ու իրաւունքը, ոյժը, հեղինակութիւնը, նուիրապետութիւնը, վարդապետութիւնը, ի վերջոյ, այն բոլորը, որով բացատրելի եւ ըմբռնելի կը դառնայ հաղորդութիւնը:

Հաղորդութիւնը մնայուն արժէքն է կրօնքին: Հաղորդակցութիւնը մինչդեռ արարուող մշակոյթ կամ ըստ-տեղծագործութիւն է, իր վերայնող գեղեցկութեամբ, բայց եւ անխուսափելի պայմանականութեամբ:

Հաղորդակցութիւնը արարող է այնքան ժամանակ որ սերտօրէն առնչուած է հաղորդութեան հետ: Այսինքն, որպէս միջոց, ան պիտի կարենայ ամէն ժամա-

նակ հաւարացեալ անհարը կամ հաւաքականութիւնը հաղորդակից դարձնել ու առաջնորդել Եկեղեցոյ այն հոգեւոր աղբիւրին՝ որ հաղորդութիւնն է:

Տուրք տալով իր պայմանական եւ ենթակայական բնոյթին, մշակութային փոփոխութիւններուն, ժամանակի հրամայականներուն եւ պահանջներուն, եթէ երբեք հաղորդակցութիւնը տկարացած է հաղորդակից դարձնելու իր կարողութեան եւ գործունէութեան մէջ, անկախ մեր կամքէն, անհատական տրամադրութեանէն, մերժելու կամ ընդունելու վճռակամութենէն, զայն իբրեւ անձեռնմխելի ասանդ պահելու ցանկութենէն, միեւնոյն է, եկեղեցիի առօրեային համար ան ուրիշ արժէք մը չէ, եթէ ոչ պատմութեան մէկ ստացուածքը, որ երբեմն անշուշտ թէ ծառայած էր իր բուն նպատակին, բայց այսուհետեւ ի վիճակի չէ մնալու միջոցի մը ծառայական իր իսկական առաքելութեանը մէջ, դիմագրաւել կարենալու համար ժամանակի առաջադրած նոր մարտահրաւիրները:

Հաղորդակցութեան պակասը հետզհետէ կ'ընդարմայնէ Եկեղեցոյ կենսունակութիւնը եւ անտարակոյս կ'անդամալուծէ անոր առաքելութիւնը՝ «էքքլէսիա» մը, հաւաք մը կազմելու դերին մէջ, ընդհակառակը եւ ակամայ՝ սրտէղծելով ցրտում:

Եկեղեցի դառնալու կամ հաւաք մը կազմելու բուն նպատակն է մնալ միութեան մէջ, անընդմիջելիօրէն հաղորդակցիլ Տիրոջ խորհրդատր ներկայութեան հետ, հոգեկան բարձր կեանքի մը սնունդը ուղղակի Անկէ ընդունիլ եւ միայն Անով առաջնորդուելու համար դէպի փրկութիւն:

Հաղորդակցութեան պակասի, ցրտումի, ընդարմացումի, կորոզացումի եւ հաստատութեանականութեան, վաղնջական եւ սին սովորամոլութիւններու սրտէղծած վրանգատը փակուողներէն դուրս գալու, կենդանութիւն եւ դէպի Եկեղեցոյ մնայուն արժէքն ու կենսատու աղբիւրը վերստին հաղորդակցութիւն սրտէղծելու ապրու եւ

հիմնական միջոցը՝ բարեկարգությունն է:

Իրաքանչիւր քաղաքակրթութիւն, հասարակարգ, մեծ ու փոքր ընկերություններ, կրօններ ամբողջ ու մշակոյթներ, ժամանակի ընթացքին մէջ անպայմանօրէն կը դիմեն ներքին բարեկարգութիւններու, կարենալ վերապրելու, նաեւ իրենց բնութեանն ու իսկական նպատակին համապատասխանելու համար:

Ժամանակին հրամայականը, առանց երրորդ այլընտրանքի մը, երկու տարբերակ կը ներկայացնէ կեանքին: Առաջինը՝ համապատասխանել իրեն ու հետեւիլ իր առաջացումին, եւ կամ հետզհետէ մնալ անցեալի էջերուն մէջ ու դառնալ ընդամէնը պարմութիւն: Իսկ երկրորդը՝ ինքզինք բարեկարգել, կարենալ հետեւելու համար իր արագ եւ շարունակական ընթացքին:

Առկայ հատորին մէջ ամփոփուած յօդուածները այս մասին անդրադարձներ են՝ Եկեղեցոյ կորդայած դաշտը լրջօրէն մտածուած բարեկարգութեամբ մը ոռոգանելու, անցեալը ներկային մէջ արժեւորելու, ասանդութիւնը այժմու ժամանակին հրամայականներովն ու պահանջներովը արգասատրելու եւ արով իսկ Եկեղեցոյ կեանքը հիմնապէս արդիւնատրելու փափաքով:

Ժամանակի էական պահանջքէն բխած բարեկարգութեան կենսատէր շունչը մեր Եկեղեցոյ անդաստանէն ներս՝ ծիսական, վարչական ու կանոնական ծիրերուն տուգահեռ, իր մասնատր ուշադրութիւնը կը կեդրոնացնէ հետեւեալ հիմնահարցերուն վրայ.

- ա) Եկեղեցոյ աշխարհական տարրը, պարմականօրէն իր ունեցած վարչական պատասխանատւութիւններուն առընթեր, պէտք է անպայմանօրէն ներգրաւուի նաեւ Եկեղեցոյ կրօնական, քարոզչական ու առաքելական գործունէութեան մէջ: Պատահական չէ, որ մեր Եկեղեցին իր աշխարհական դասուն՝ «հաւատարայեալներ» անուանումը կու տայ. ան է որ կը կազմէ Եկե-

ղեցոյ հիմը ու կը ստեղծէ ի Քրիստոս հաւա-
րացեալներու այն հաւաքը, որ նոյն ինքը՝ Եկե-
ղեցին է: Եղով, որ Եկեղեցոյ այդ հիմնական
եւ հօր ներոյժը մնայ կրօնական դիրքի մէջ,
ու իր մասնակցութիւնը եկեղեցոյ կեանքին բե-
րէ ընդամէնը հանդիսարեսի մը կարգավիճա-
կով:

- բ) Եկեղեցոյ իշխանութիւնն ու բարձրաստիճան
պաշտօնները պէտք է արդարօրէն տրամա-
դրելի ըլլան բոլոր արժանատիներուն, միան-
գամայն անկախ այն փաստէն, որ անոնք վի-
ճակով կուսակրօն թէ ամուսնացեալ են: Հարկ
է հիմ ընդունիլ թեկնածուներուն *արժանիքը*,
այսինքն՝ անոնց մտաւոր եւ հոգեւոր պատ-
րաստութիւնը, անոնց կոչումը եկեղեցականու-
թեան, անոնց նկարագիրը, եւ ո՛չ թէ անոնց
ամուրի կամ ամուսնացեալ ըլլալու խտիրը:

Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին մեր
ազգի հոգեւոր կեանքի գերագոյն արտացոլումն է: Ժա-
մանակի յեղաշրջումներուն ու քաղաքակրթութեան բա-
րիքներուն մնալով հաղորդ, ան գերազանցապէս բարե-
պարդած է Թորգոմայ տունը, եւ պատմութեան հողմա-
ծուփ կոհակներուն ընդմէջէն առաջնորդած է հայու-
թեան նաւը դէպի ներկայի խաղաղ նաւահանգիստը:
Պէտք չէ խունացած եւ մոլի պահպանողականութեամբ
անշարժութեան եւ փոքրութեան ենթարկել մեր ազգային
գոյութեան սրբազան նաւուն առագաստները. ընդհա-
կառակը՝ հարկ է ըլլալ խոհեմ ու արի, թոյլ տալով որ
Հայաստանեայց Առաքելականը իր սպիտակաթոյր ու
անբիծ առագաստները լայն բանայ ներկայի բարեջունչ
հովերուն՝ առաջնորդելու համար իր հայկապուն հօտը
դէպի պայծառ ապագան:

ԴՈՒՏ. ԱԲԷԼ ԹՇՆՅ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՏԱՐԻ ՄԸ՝ 1700-ԱՄԵԱԿԷՆ ԵՏՔ⁽¹⁾...

Հայաստանի մէջ Քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700-ամեակը անցաւ ժամանակի հոսքին հետ: Ժամանակը բերաւ եւ ժամանակն ալ տարաւ՝ այնքա՛ն բնականօրէն եւ այնքա՛ն արագ: Ապագայէն եկած ներկան՝ ակնթարթ մը ետք, արդէն անցեալ էր: Անցեալը անհուն մըն է, ամայութեան ծով մը, որուն մէջ անպայմանօրէն կ'երթայ անհետիլ ապագայէն ներկայի վերածուած ամէն իրականութիւն:

Ապագան կարելի չէ գնահատել, վասնզի ան իրական չէ, իսկ արդիւնաւորել անցեալը՝ նոյնքան անիմաստ է, վասնզի արդէն իսկ անցած է եւ տրամադրելի չէ մեր կամքին կամ տնօրինումներուն: Ոսկին՝ շօշափելի ներկան է, այն «հիմա»ն է, որ ուղղակի մեր տրամադրութեան տակ է. ան մեզի շնորհած մեծագոյն եւ թանկագին նուէրն է ժամանակին. ան ստոյգ մե՛րն է այժմ, որ պահ մը ետք, աւա՛ղ, պիտի դադարի՝ մերը ըլլայէ, դառնալով մնայուն եւ անկապտելի սեփականութիւնը անցեալին:

Անկարելի է առարկայացնել ներկայէն անցեալին դարձող ամէն ինչ: Մեր երեւակայածէն շատ ա-

(1) Առկայ յօդուածին մէջ նկատի առնուած չեն երկու հիմնահարցեր. ԼԵՋՈՒՆ ԵՒ ԿԱՆՈՆԱԿԱՆ ԻՐԱԽՈՒՆՔը: Հայ Եկեղեցւոյ մէջ կիրարկուող ծիսական-պաշտօնական լեզուին, ինչպէս նաեւ կանոնական իրաւունքի բարեկարգութեան մասին պիտի փորձենք արտայայտուիլ այլ յօդուածով մը:

ւելի մեծ պաշար մը՝ իրողութիւններ, դէպքեր ու դէմքեր անհետ կը կորչին ու կ'անէանան անցեալի ծովուն մէջ: Բայց այն մնացորդացը՝ որ անցեալէն առարկայաբար տրամադրելի կը դառնայ մեզի՝ պատմութիւնն է, որմէ, լաւագոյն պարագային, կրնանք սորվիլ, զայն առարկայաբար ուսումնասիրել, պեղել հոն ընդհանրապէս ապրուած կեանքը, մարդուն ունեցած զգացումները, անոր կուտակած մշակութային բարիքները, ձեռք բերած փորձառութիւնները, բոլոր տեսակի նուաճումներն ու անկումները, ի վերջոյ, յիշատակութեան արժանի այն ամէնը, որու լայն պրիսմակին վրայ կ'արտացոլուի մե՛ր իսկ դէմքը, ու ճանաչելի կը դառնայ երկնքի տակ ու երկրի վրայ բանականութիւն ունեցող միակ արարածը՝ մարդը:

Անմիջականօրէն արդիւնաւորելին, իմաստի մը պարունակին մէջ՝ պիտանին, ու իրականի մը ենթահողին վրայ միակ օգտակարը՝ «հիմա»ն է. այսինքն այն ներկան, որու իմաստաւորումէն եւ արժեւորումէն կախուած է մեզմէ իւրաքանչիւրին թէ՛ անձնական եւ թէ՛ հաւաքական կեանքը:

«Ի՞նչ է կեանքին իմաստը» ընդհանրացած հարցումին գոհացուցիչ պատասխանը կարելի է գտնել ներկան իմաստաւորելուն մէջ. այլ խօսքով՝ կեանքին իմաստը՝ ներկայի իմաստաւորումն է, արդիւնաւորումը այն վայրկեաններուն ու երկվայրկեաններուն, որոնք մեզի կը շնորհուին ապագայէն, կը դառնան ներկայ, ապա ակնթարթ մը ետք՝ կը վերածուին անցեալի:

Երէկ, 1700-ամեակը դարձաւ պատմութիւն: Դեռ երէկ, համապգային այս կարեւոր իրադարձութիւնը հանդէս կու գար 1700-ամեակի եկեղեցական Յանձնախումբին կողմէ որդեգրուած եռասին խորհրդանշանով մը, զոր իր յօրինուածքին մէջ այնքան պեր-

ճախօս կը ցոլացնէր Ազգ, Եկեղեցի եւ Պետութիւն միութիւնն ու ամբողջութիւնը:

Արդարեւ, որքանո՞վ կրցան անոնք արժեցնել, շատ աւելի ճիշդ՝ մեր կեանքին մէջ արդիւնաւորել, ժամանակին մեկի ընձեռած այս ոսկի առիթը՝ Քրիստոնէութիւնը Հայաստանի մէջ պետական կրօն հռչակուելու 1700-ամեակը: Արդեօ՞ք արդարացան յոյսերը շատերուն, որոնք 1700-ամեակին մէջ կը տեսնէին «Նոր Հոգեգալուստը» համայն հայ ժողովուրդին՝ ի Հայաստան եւ ի Սփիւռս աշխարհի: Հարցադրումներ, որոնց արծարծման իրաւունքը անպայմանօրէն «ստորադաս» քահանայից վերապահած չեն մեր Եկեղեցւոյ բարձրաստիճան նուիրապետականները, իսկ պատասխանելը՝ ամենեւին ո՛չ:

Հարցն, անշուշտ, տօնախմբելը չէ, տօնախմբութիւնը երեւոյթին լոկ մակերեսային մասն է. այլ էականը՝ տօնախմբութեան գոյութենական իմաստ տալն է եւ պայն կեանքի շարունակական ուժին հետ առնչելն է: Այս պարագային, 1700-ամեակը Եկեղեցւոյ անդաստանին մէջ պիտի ըլլար ստեղծագործ երկունք առաջացնող բարեբաստիկ առիթ մը՝ նոր առաքելութիւններու կամ նուազագոյնը՝ նոր շարժումի մը:

22 Մայիս 1994 թուականին, 1700-ամեակի տօնակատարութիւնները պաշտօնապէս սկսելէ եօթ տարիներ առաջ, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց, այդ ժամանակ՝ Գարեգին Բ. Մեծի Տանն Կիլիկիոյ Երջանկայիշատակ Կաթողիկոսը, Հայաստանէ վերադարձին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, իօսած է մարգարէական ներշնչումով վեհացնող քարոյ մը, որուն կուռ վերտառութիւնը՝ «1700-ամեակը՝ Նոր Հոգեգալուստ», կատարեալ արտայայտիչը եղած է ոգեշունչ նոյն քարոյի բովանդակութեան:

Հետեւելով «Գործք Առաքելոց»ի հաղորդած տեղեկութիւններուն (Գործք Բ., 1-42), նախնական եկեղեցւոյ զարգացման պատմութեան մէջ Հոգեգալուստը կը հանդիսանայ այն կարեւոր պահը, երբ Երուսաղէմի նեղ շրջանակին մէջ, փոքրիկ եւ հալածական Եկեղեցին, յանձինս առաքեալներու, ծուարած Վերնատան մութ կիսաստուերին մէջ, ընդունելով Ս. Հոգին, Քրիստոնէութիւնը կը դարձնեն աշխարհաքարոյ կրօն մը:

Հակառակ անոր որ Երջանկայիշատակ Վեհին այդ քարոյը լայն տեղ գտաւ այդ օրերու հայ մամուլին մէջ, եւ առանձին հրատարակութիւն⁽²⁾ մըն ալ ունեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան տրպարանէն, այնուամենայնիւ, ինչպէս նման գործերու դժբախտ բնութիւնն է, ընդամենը քանի մը ամիս ետք, մոռացութեան տրուեցաւ, իսկ 1700-ամեակի երէկուան շոնդալից աղմուկին մէջ բոլորովին անհետացաւ. լսելի չեղաւ Վեհին խօսքը հակամին մասին, ու շատեր տարուեցան գոյներու շլացնող շողշողումի մը անցողակիութեամբ:

Գարեգին Ա. Վեհափառի վերոյիշեալ քարոյի միտք բանին՝ հարկ է կարդալ իր խոհուն մտածումներու հետեւեալ դրսեւորումներուն մէջ.

«Ինչպէ՞ս պէտք է արժեցնել 1700-ամեակը մեր ժողովուրդի կեանքին եւ աշխարհի պատմութեան մէջ: Բացառիկ առիթ մըն է այս, որ մեզի ընծայուած է: Ես չեմ կարծեր որ աշխարհի մէջ գտնուի այգ մը որ կարենայ իր եկեղեցւոյ 1700-ամեակը տօնել: Ասիկա մեզի տրուած առանձնաշնորհում նկատեցէք, ըմբռնեցէք եւ ըստ այնմ մօտեցէք անոր⁽³⁾»:

(2) Գարեգին Բ. Կաթողիկոս, 1700-ամեակը՝ Նոր Հոգեգալուստ (Խոհեր եւ Ապրումներ), Ի Պատրաստութիւն Հայաստանի Մէջ Քրիստոնէութեան Պետական Կրօն Հոչակման 1700-ամեակի Տօնակատարութեան, Անթիլիաս, 1994:

(3) Անդ, 46:

«Սիրելիներ, արժանիք ունենալը մէկ բան է, արժանիք ունենալու գիտակցութիւնը ուրիշ բան է: Որպէս ազգ այս արժանիքը շահեցանք. արժէքը ունեցանք, բայց եթէ չենք գիտեր մեր այդ արժանիքը ունենալու արժէքը, ունենալը ի՞նչ արժէ: Մենք պատիւը ունինք այսօր աշխարհի մէջ մեր հայրերու մեզի ժառանգ կտակած արժանիքը ունենալու. հպարտութեամբ կ'ըսենք երբեմն օտարներուն, թէ մենք աշխարհի առաջին ազգն ենք, որ պետականօրէն ճանչցաւ քրիստոնէութիւնը որպէս ազգային կրօն: Այո՛, ըսելը դիւրին է, բայց զայն արժեցնելը մեր կեանքով, մեր գործով, մեր վկայութեամբ, մեր ստեղծագործականութեամբ, ա՛յդ է մեր բուն, սեփական արժանիքը: Չեր հայրերուն ձեզի տուածովը հպարտացէք, բայց մի՛ գոհանաք. անոր վրայ անլցուցէք ձե՛ր պատիւը, ձեր կենդանի վկայութեամբ շահելիք պատիւը»⁽⁴⁾:

«1700-ամեակը (պէտք է) դառնայ ոչ թէ անցեալի դէպքի մը պարզ վերլիշումը կամ սոսկ պանծացումը, այլ մեր ժողովուրդի այսօրուան եկեղեցական կեանքին վերաշխուժացումը, տեսակ մը ներքին հոգեւոր վերանորոգումը հայ եկեղեցիին»⁽⁵⁾:

«1700-ամեակը կ'ընծայեմ Աստուծոյ, սկիհի մը նման, ինդրելով որ Ինքը զայն օրհնէ եւ նոր Հոգեգալուստի մը վերածէ մեր ազգի կեանքին մէջ»⁽⁶⁾:

Անդրադառնալով Ս. Գրիգոր Լուսաւորիչի գործին, պարթեական տոհմի այդ ավնուական եւ առաքելատիպ ներկայացուցչի արիութեանն ու տեսլապաշտ ոգիին, Երջանկայիշատակ Վեհափառը կ'ընդգծէ, թէ Լուսաւորիչ՝

«Գիտցաւ տեսնել քրիստոնէութեան մէջ այն

(4) Անդ, 45:

(5) Անդ, 47:

(6) Անդ, 447-48:

սկզբունքները եւ հրաշապօր գաղտնի ոյժը, որոնցմով մարդկային կեանքը թռիչք կ'անէ եւ ստեղծագործական թափով ազգերն ու երկիրները կը կերպարանափոխէ: Այդ թռիչքը տեսնելն ու անով անձնապէս բռնուիլը չէր հիմնական արժէքը Ս. Գրիգոր Լուսաւորչին, այլ վայն վերածելն էր ազգային շարժումի եւ երեւոյթի»⁽⁷⁾:

Արդարեւ, Գարեգին Ա. Երջանկայիշատակ Վեհափառը 1700-ամեակին ընդմէջէն կը յուսար տեսնել իրականացումը մարգարէական իր տեսիլքին, հայ ժողովուրդի այսօրուան կեանքին մէջ երկունքը նոր Հոգեգալուստի մը, որ պիտի վերածուէր ազգային շարժումի մը՝ ի նպաստ մեր ժողովուրդի «հոգեւոր վերապարթօնքին, կերպարանափոխութեան, պայծառակերպութեան» եւ, Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետին խօսքերով՝ «նոր ժողովուրդ» մը դառնալու իրողութեան:

Հակառակ անոր որ ազգովին, գործօն մասնակցութեամբը նաեւ հայ կաթողիկէ եւ աւետարանական յարանուանութեանց, ամբողջ տարի մը տօնախմբեցինք, փորձեցինք մեր կեանքերուն մէջ այժմէականացնել պատմական դէպքին յիշատակումը, գիտաժողովներով գնահատել 301 թուականին Հայաստանի մէջ Քրիստոնէութեան պետական կրօնք հռչակման փաստը, կապակերպեցինք ջերմեռանդութիւն գօտեպնդող ուխտագնացութիւններ, օժեցինք 1700-ամեակի սրբալոյս միոռոնները Էջմիածնի ու Անթիլիասի մէջ, իբրեւ մնայուն յուշակոթողը յոբելեանական իրադարձութեանց, քաղաքամայր Երեւանի մէջ արձանացուցինք Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարը, ձեռնադրեցինք թեմակալ առաջնորդներ, եպիսկոպոսներ օժեցինք ներքին եւ արտերկրի թեմերուն վրայ, այս առթիւ ընդունեցինք հայ եւ օտար քաղաքա-

(7) *Sbu' Ս. Լուսաւորչի Շուկչով, էջ 58-59:*

կան հեղինակութիւններ, մեծ եւ փոքր եկեղեցիներու հոգեւոր պետեր, եւ այլն. այս բոլորով հանդերձ, 1700-ամեակի տօնակատարութեանց հետ առնչուող գնահատելի եւ իրական ճիգերուն ենթախորքին մէջ, սակայն, թող ներուի մեզի ըսել, կը պակսէր էական բան մը, այսինքն՝ այն գոյութենականը, որուն մասին այնքան ներշնչուով ու առինքնող շեշտով մը մատնացոյց կ'ընէր Երջանկայիշատակ Գարեգին Ա. Կաթողիկոս, իր վերոյիշեալ «1700-ամեակը՝ Նոր Հոգեգալուստ» քարոզով:

Հնչե՞ց Գերբնականին ձայնը հողմածուփ հայ հաւաքականութեան ունկերուն մէջ, լեցուեցա՞ւ ամբողջ Թորգոմայ տունը արթնութեան ոգիով, իջա՞ն լեզուները հրեղէն մե՛ր ալ համապգային արժէքներուն՝ ազգին, եկեղեցիին ու պետութեան վրայ. դըժուա՛ր է ըսել: Ո՞ւր է այն 1700-ամեակը, որ «ոչ թէ անցեալի դէպքի մը պարզ վերոյիշումը կամ սոսկ պանծացումը պէտք էր ըլլար, այլ մեր ժողովուրդի այսօրուան կեանքին վերաշխուժացումը, տեսակ մը ներքին հոգեւոր վերանորոգումը Հայ Եկեղեցիին»:

«Վերանորոգում» ըսինք, ահաւասի՛կ գերապանց կարգախօսը այսօրուան էական պահանջքին. հրամայական պահանջք, որ վերջին նախապայմանն է մեր այժմու ազգային-եկեղեցական կեանքէն ներս նոր հնարաւորութիւններու փթթումին: Առանց այս վերոյիշեալ բառացոյցի՝ «վերանորոգում»ի մը լուրջ իրականացումին, դժուա՛ր է երեւակայել, այո՛, նոյնիսկ յուսալ կրկնուիլը «Նոր Հոգեգալուստ»ներուն Հայ Եկեղեցոյ հաւաքական Վերնատան մէջ:

Որքան ալ շոնդալից ըլլան տօնախմբութիւնները 1700-ամեակին, գուցէ եւս քան Վեւս աղմկայոյց 1800-ամեակինը, հուսկ՝ հանդիսութիւնները հետեւեալ դարերուն, միեւնոյնն է, արարչագործ զօրութիւն մը կարելի չէ երկնել մեր եկեղեցոյ երբեմնի դալար

անդաստանին մէջ, եթէ հինը պատուաստուած չէ նորին աւինով կամ անցեալը թէկուզ իր ամբողջ նր-
ւիրականութեամբ բեղմնաւորուած չէ ներկայի կեն-
սատու սաղմերով, դիմանալ ու պայքարիլ կարենա-
լու համար ժամանակի անդիմադրելի մաշումին դէմ:
Միամտութիւն է կարծել թէ Եկեղեցին յարատեւ կըր-
նայ մնալ իր նախկին գաղափարախօսութեան եւ
բարոյական վեհութեան վրայ, իր պատմական առա-
քելութեան գործադրութեան մէջ՝ նաեւ ներկայի եւ
վաղուան յարափոփոխ կեանքի հորիվոններուն վը-
րայ, արտայայտուիլ իր միեւնոյն դրական դերովն ու
կենսապօրութեամբը, առանց թարմացնելու եւ վերա-
նորոգելու իր ներքին ուժերը:

Անդրադառնալով Հայ Եկեղեցւոյ բարեկարգու-
թեան, 1700-ամեակի տօնակատարութեանց ծիրէն
ներս, եկեղեցւոյ հեղինակաւոր ատեանէն յոյժ կարե-
ւոր ներդրում մը բերաւ Արամ Ա. Մեծի Տանն Կիլի-
կիոյ Կաթողիկոսը, 2001 թուականի Յունիս 26-30-ին,
Ժընեւի մօտ՝ Պոսէ արուարձանին մէջ, Մեծի Տանն
Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կողմէ կազմակերպը-
ւած «Հայ Եկեղեցւոյ Հոգեւոր Մշակոյթը» ընդհանուր
խորագիրը կրող համագումարին⁽⁸⁾ առթիւ:

Գնահատելով հանդերձ մասնակիցներուն աշ-
խատանքը, վերոյիշեալ համագումարին գործնական
արդիւնքը եւ անփոփած եկրակացութիւնը⁽⁹⁾ այնքան
հետաքրքրական չէ մեր Եկեղեցիին համար, որքան
Արամ Ա. Վեհափառին ատենախօսութիւնը⁽¹⁰⁾ 1700-
ամեակի բուն պատգամին մասին.

«Հայ Եկեղեցւոյ դիմաց կանգնող մեծագոյն

(8) Համագումարի մանրամասն նկարագրութիւնը (Տես՝ «Հասկ», Հ.
Տարի 2001, թիւ 6-7, Յունիս-Յուլիս, էջ 518-528):

(9) Անդ, 468:

(10) Խօսուած է Ժընեւ, ԵՂԽի կեդրոնին մէջ, 29 Յուլիս 2001, անգլերէն
բնագիրը հրատարակուած է Անթիլիաս, Aram I, The Armenian Church
Beyond 1700th Anniversary, Անթիլիաս, Լիբանան, 2001:

մարտահրաւերը Հայ Եկեղեցւոյ վերականգնումն է, անոր բարեկարգումը, որ պէտք է ընդգրկէ մեր Եկեղեցւոյ Համայնական կեանքը: Այս աշխատանքին մաս պէտք է կապեն մեր ժողովուրդի բոլոր պաւակները: Պէտք է Եկեղեցւոյ բոլոր հարցերը քննարկուին իրապաշտ մօտեցումով եւ նկատի ունենալով մեր կեանքի իւրայատուկ պայմանները: Ա՛յս պէտք է ըլլայ 1700-ամեակի մեծագոյն պատգամը»⁽¹¹⁾:

Խնդրոյ առարկայ հարցին ամբողջ կարեւորութիւնը շեշտելով, Կաթողիկոսարանի պաշտօնաթերթ՝ «Հասկ»ի խմբագրականը ստորագրող Հոգշ. Տ. Գրիգոր Վրդ. Չիֆթճեան այս առթիւ կը բացագանչէ.

«Վերանորոգում, վերանորոգում, վերանորոգում...

Այլընտրանք չունի մեր Եկեղեցին, եթէ կ'ուզէ շարունակել Քրիստոսի աւետարանին "բարի լուր"ը աշխարհին տարածել, ինքզինք ծառայութեան վերածելով: Հինին մէջ թաղուած եկեղեցի մը չի կրնար ծառայել այսօրուան ընկերութեան»⁽¹²⁾:

Սփիւռքեան պայմաններուն մէջ, ի տես ազգային ինքնութեան տկարացումի, ցեղային ուժացումի եւ, ի վերջոյ, ձուլուելու բազմակողմանի վտանգներուն, Կիլիկեան Աթոռը, որ իր կրօնական, վարդապետական եւ յատկապէս աւանդական ըմբռնումներուն մէջ շատ աւելի պահպանողական, ընդհուպ անվիջող կը թուէր ըլլալ, բարեկարգութեան ջանն ի ձեռին, մեր Եկեղեցւոյ նուիրապետական միւս Աթոռներէն մեծ ուսումով մը դրականապէս առաջ անցած է, վամսկի գիտական հարուստ փորձով կրցած է իրապաշտօրէն յանգիլ այն եպրակացութեան, թէ երբեմն անցեալի հարուստ աւանդութիւնն անգամ, որ ներկային մէջ ներդնելով կարելի չէ շահարկել, նման

(11) Անդ, 521:

(12) Անդ, 468:

է արժեպրկուած դրամանիշի մը, որով ոչինչ կարելի է գնել:

«Ex nihilo nihil», «Ոչինչէն ոչինչ կը գոյանայ» կ'ըսէ լատինական քաջածանօթ առածը: Այս պարագային, ոչ թէ աւանդութիւնն է որ ինքնին ոչինչ կ'արժէ, այլ՝ անոր անգործածականութիւնը, այլ խօսքով՝ անպիտանի ըլլալու պարագան՝ արդի կեանքի պահանջներուն եւ պայմաններուն համար:

Թող ներուի մեպի ըսել, թէ Եկեղեցին կը նմանի այսօր ճոխ շուկայի մը, ուր շատ բան կայ, որոնց ժամանակակից մարդը կարիքը չունի: Սոկրատ իմաստասէրն էր որ օր մը շուկայ մտնելով բացագանչած էր. «Ո՛հ, այստեղ որքան շատ բան կայ, որոնց ես պէտք չունիմ»: Ներկայիս, հայ հաւատացեալն ալ կանգնած մեր Եկեղեցիին մէջ, բազկատարած եւ սրտատոչոր կ'աղաղակէ. «Որքա՛ն հոգեւոր հարըստութիւն ունի հրամցնելիք մեր Եկեղեցին, բայց, եղո՛ւկ, իցիւ թէ անոր վտիտ տոկոսն ըլլար ամօքիչ սպեղանի հանապապօրեայ մտահոգութեանցս սեղանին»:

Անդրադառնալով եկեղեցի եւ աւանդութիւն ըմբռնումներուն, գերմանահայ երիտասարդ աստուածաբան-մտաւորականներէն՝ Վապրիկ Պապիլ, «Յառաջ»ի սիւնակներուն⁽¹³⁾ մէջ հետեւեալ մտահոգութիւններն արձանագրած է.

«Հայ Եկեղեցին ծանօթ է իբրեւ "աւանդապահ" մի հաստատութիւն: (...) Մի քանի երեւոյթներ ապացուցում են հակառակը: "Աւանդապահութիւն" յաճախ նշանակում է ժամանակի ընթացքին դրսեւորուած կարգի, ծէսի, կառոյցի եւլն. "կրկնութիւնը": Սակայն այսպիսով ոչ թէ "աւանդութիւնն" է պահպանում, այլ՝ "աւանդուածը", այն որ կայական է, ծանօթ եւ

(13) Տե՛ս՝ «Յառաջ», 77րդ տարի, թիւ 20.252, Ուրբաթ, 14 Սեպտեմբեր 2001, էջ 2:

ցուցանելի: "Աւանդութիւնը" մինչդէռ ուժական է, աւանդուածը ստեղծելու արարքը, նոր եւ անծանօթ: Ամէն սերունդ իր իւրովի փորձառութեամբ եւ կենսաշխարհով պէտք է ստեղծի նոր եւ անծանօթ "աւանդուածը": Հետեւաբար, այն ինչ որ պիտի "կրրկնուի" ոչ թէ սահմանելի "աւանդուածն" է, այլ ստեղծագործելու արարքը ինքնին, այսինքն "աւանդութիւնը" իբրեւ գործողութիւն: Այս տեսակէտից Հայ Եկեղեցին ոչ թէ "աւանդապահ", այլ "աւանդուածապահ" է»⁽¹⁴⁾:

«Քրիստոնէական տեսանկիւնից Աստուած ոչ միայն գոյութիւն ունի, այն նաեւ կենդանի է, կենդանի գոյութիւն, որի էութիւնը հաղորդակցութիւն է՝ ինքն իր մէջ իբրեւ երրորդութիւն եւ արտաքնապէս իբրեւ յայտնութիւն: Եթէ ուրեմն Աստուած կենդանի հաղորդակցութիւն է եւ այդ հաղորդակցութիւնը "խորհուրդ" է, ապա եկեղեցւոյ "աւանդութիւնը" այնքանով է միայն վաւերական, ինչքանով այդ հաղորդակցութիւնը ծէսով, աստուածաբանութեամբ, արուեստով, եկեղեցական կառոյցներով եւ այլն ընթացքի մէջ է դրում: "Աւանդապահ" լինելը մինչդէռ ժատում է ճիշդ այս կենդանութիւնը, որովհետեւ անծանօթ եւ քրիստոնէական տեսակէտից մշտաթարմ "խորհուրդը" սահմանափակում է ծանօթով եւ ցուցանելիով, այսինքն՝ "աւանդուածով"»⁽¹⁵⁾:

Հսկայ տարբերութիւն մը կայ ուրեմն՝ «աւանդութեան», «աւանդապահութեան» եւ «աւանդուածապահութեան» միջեւ: Մին՝ կենդանութիւն եւ անսահման հաղորդականութիւն կը խտացնէ իր մէջ, սկիւբ տալով նոր կարելիութեանց, դէպի խորհրդաւորը վերանայու նոր փորձառութեանց ստեղծու-

(14) Հմմտ., նոյնը:

(15) Տե՛ս՝ «Յառաջ», 77րդ տարի, քիւ 20.253, Շաբաթ, 15-16 Սեպտեմբեր 2001, էջ 2:

մին, միւսը՝ խորհրդաւորին առարկայացումն է, աստուածային «անհաս եւ անսկիւբ խորհուրդ խորինի» հետզհետէ նիւթականացումն է տեսակ մը կռապաշտութեան մէջ. մարդը կրօնքին գերին դարձընող արուեստակեալ արարողութիւն մը, որը զուրկ է իմաստային խորքի եւ նպատակի հետ ամէն ճշմարիտ հաղորդականութենէ:

Վերադառնալով Հայ Եկեղեցւոյ վերանորոգումի մասին Արամ Ա. Կաթողիկոսի կարեւոր ներդրումին, զայն կարելի է ներկայացնել հետեւեալ սեղմ ամփոփայնքին մէջ.

ա) Հայ Եկեղեցւոյ աստուածաբանութիւնը պէտք է դուրս գայ անցեալէն, դասագիրքերէն, եկեղեցական արարողութիւններու նեղ պարունակէն եւ առընչուի ներկայ աշխարհի մէջ ապրող հայ ժողովուրդին կեանքին հետ:

բ) Հայ Եկեղեցին պէտք է դուրս գայ իր հաստատութենական կառոյցներէն ու մտածողութենէն ու մտնէ ժողովուրդի կեանքին մէջ որպէս հովուական առաքելութիւն: Քրիստոնէութիւնը դարձած է ձեւական ներկայութիւն հայ կեանքէն ներս: Պէտք է ան դառնայ ապրուած իրականութիւն:

գ) Հայ Եկեղեցին կարիքն ունի վերասահմանելու իր ազգային ինքնութիւնը:

դ) Հայ Եկեղեցին թէ՛ ընդհանրական եւ թէ՛ տեղական նկարագիր ունի: Սակայն նոյն եւ մէկ Հայ Եկեղեցին, ապրելով տարբեր շրջագիծերէ ներս, որդեգրած է յաճախ տարբեր կեանքի ոճ, տարբեր մտածելակերպ, ունի տարբեր մտահոգութիւններ ու առաջնահերթութիւններ: Ի՞նչպէս կարելի է տեղական պայմանները յարգելով հանդերձ, պահպանել մեր Եկեղեցւոյ ինքնութիւնն ու ամբողջականութիւնը⁽¹⁶⁾:

(16) Տե՛ս՝ «Հասկ», Հ. Տարի 2001, թիւ 6-7, Յունիս-Յուլիս, էջ 519-520:

Արամ Ա. Կաթողիկոսի պատգամը շատ յստակ ու մեկին է: Առ այս կը մնայ մաղթել եւ յուսալ, որ Հայ Եկեղեցւոյ բարեկարգութեան վերաբերեալ սոյն առաջարկները չդառնան՝ «Չայն բարբառոյ յանապատի»⁽¹⁷⁾, այլ անպայմանօրէն թարգմանուին մեր Եկեղեցւոյ կեանքին մէջ ու գտնեն իրենց գործնական արտայայտութիւնը նաեւ ազգային մակարդակներուն վրայ⁽¹⁸⁾:

Հայ Եկեղեցւոյ մասին բարեկարգութեան կոչը՝ իմաստին եւ հրամայական պահանջքին ամբողջ լըրջութեամբը, Աւետարանի գեղեցիկ օրինակին համաձայն, պէտք է իյնայ Եւեղեցւոյ պարարտ հողին մէջ, որպէսպի հացահատիկի սերմին⁽¹⁹⁾ նման արգասաւորուի՝ տալով մէկի փոխարէն երեսուն, վաթսուն եւ հարիւրապատիկ արդիւնք:

Ճիշդ հոս է որ լիբանանահայ մտաւորական եւ հայագիտութեան բազմավաստակ դասախօս՝ Դոկտ. Երուանդ Քասունի, «Չանասէր»ի⁽²⁰⁾ մէջ ստորագրած իր յօդուածով, հարցը կ'ուղղէ դիպուկ՝ «Ո՞վ պիտի բարեկարգէ»:

Արդարեւ, վերոյիշեալ հարցադրումը առկայ կարգութեան կարեւոր մէկ մասն է, ան կը հանդիսանայ

(17) Մտ. Գ, 3:

(18) Արամ Ա. Վեհափառի բարեկարգչական ներդրումի լոյս ընծայման առթիւ, Հոգշ. Հ. Գրիգոր Չիֆթեան, «Հասկ»ի էջերուն իր ստորագրած գրախօսականի աւարտին հետեւեալ կոչը կ'ուղղէ. «Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Վեհափառ Հայրապետը բացաւ նախապարհը դէպի ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ Եւ ներկայ հատորի մէջ շեշտուած ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ գաղափարով, անկեղծ ինքնաքննադատութեան կը հրաւիրէ ան, Հայ Եկեղեցւոյ ու ազգին ապագային նկատմամբ տեսիլք ունեցող գաւակները մեր ժողովուրդին, ռահվիրան հանդիսանալով բոլորի բարի ցանկութեան՝ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ» (Տե՛ս՝ «Հասկ», Հ. Տարի 2001, թիւ 9-10, Սեպտեմբեր-Հոկտեմբեր, էջ 724):

(19) Մարկ. Դ, 8, 20:

(20) Տե՛ս՝ Քասունի Ե., Ո՞վ Պիտի Բարեկարգէ, «Զանասէր», Յունիս Յուլիս, 2001, էջ 145-146:

բարենորոգչական շարժումի ելակետերէն մին. սակայն, հարկ է վայն արժարծել չորս ուղղութիւններով.

- ա) Ինչո՞ւ բարեկարգել,
- բ) Ի՞նչը բարեկարգել,
- գ) Ինչպէ՞ս բարեկարգել,
- դ) Ո՞վ պիտի բարեկարգէ:

Ա) ԻՆՉՈ՞Ւ ԲԱՐԵԿԱՐԳԵԼ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ

Այս հարցումին փորձած ենք պատասխանել յառաջագոյն: 1700-ամեակի հրատարակութեանց շարքին տպագրած ենք յօդուած⁽²¹⁾ մը, ապա նոյն գրքուկը⁽²²⁾ անգլերէն եւ ֆրանսերէն թարգմանութիւններով հանդերձ, ուր դիտած ենք մեր Եկեղեցին իր փառաւոր անցեալին մէջ, ներկայի մարտահրաւերներուն դիմաց եւ բարեկարգումի մը կարիքը ունենալու էական պահանջով: <Ետեւաբար միանգամայն աւելորդ է այստեղ մէկ առ մէկ կրկնութիւնը այն դիտարկումներուն կամ վերլուծումներուն, որոնք ուղղակիօրէն առնչուած են վերոյիշեալ հարցադրումին հետ:

Առ այս, միայն փոքրիկ ճշդում մը պիտի ուլէինք կատարել, որ Եկեղեցին բարեկարգելու անհրաժեշտութիւնը մղուած է ոչ թէ ամայացած եկեղեցիները բազմամարդ դարձնելու կամ արարողութեանց առթիւ անոնց նստարաններուն վրայ հետպիտէ շատ աւելի զգալի չափերով նօսրացած հաւատացեալներուն թիւը բազմապատկելու հեռանկարով, այլ թէ՛ ինչպէ՞ս կրնայ Եկեղեցին, իր «Էքքլէսիա» անունէն

(21) Տե՛ս՝ Դոկտ. Աբել Քիկյ. Օղլուգեան, Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ Ազգային եւ Կրօնական Անժամանցելի Արժէքը Հայ Ժողովուրդի Կեանքին Մէջ, «Յառաջ», 12 եւ 13 Հոկտեմբեր, 2000, թիւ 20.012 եւ 20.013:

(22) Նոյնը, Ժրնեւ, 2001:

բխող՝ «Տիրոջ առջեւ հաւաքուած» համայնքը ժողովելու, համախմբելու, Քրիստոսի սիրոյն եւ հաւատքին մէջ միացած պահելու, զայն պահպանելու եւ առաջնորդելու առաքելութիւնը արդիւնաւորել փոխուող քաղաքակրթութիւններու, մշակոյթներու եւ աշխարհահայեացքներու միջավայրին, եւս առաւել՝ ներկայի օրինաչափօրէն ընդհանրացող բազմազգ եւ բազմամշակութային կեանքի դրուածքին մէջ:

Ինչպէ՞ս կրնայ Եկեղեցին հաղորդակից դարձնել իր հոգեւոր կոչումը ժամանակակից մարդուն, որուն լեզուամտածողութիւնը, աշխարհահայեացքը, արժէքներ գնահատելու կերպը, ընկերային եւ հասարակական բարքերը, սովորութիւնները, բարոյական ընկալումները, ընդհուպ առօրեային հետ կապուած մտահոգութիւնները հիմնովին կը տարբերին անոնցմէ, որոնց համանուագը քրիստոնէական վարդապետութիւն կամ բարոյագիտութիւն կը կոչուի:

Հարցը ուրեմն, ոչ թէ Եկեղեցին ապրեցնելու մտահոգութենէն առաջադրուած է, ապա թէ Եկեղեցին ինչպէ՞ս պիտի կարենայ իր ծառայական ճամբով շարունակել օգտակար հանդիսանալ այսօրուան ու վաղուան մարդուն, ինչպէ՞ս պիտի կարենայ հիմնական պայմաններուն եւ գալիք ժամանակներուն մէջ, կանգնած կեանքի նոր եւ բազմազան մարտահրաւերներուն դիմաց, իրականացնել իր բուն առաքելութիւնը՝ զայն առաջնորդելով դէպի փրկութիւն, երբ մարդն, սհաւասիկ, էապէս փոխուած է Եկեղեցւոյ պատմական, աւանդական, վարդապետական եւ հաստատութենական դրուածքին համեմատութեամբ:

Բ) Ի՞ՆՉԸ ԲԱՐԵԿԱՐԳԵԼ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՉ

Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին կը հանդիսանայ արեւելեան հնագոյն եկեղեցիներէն

մին՝ իր առաքելական ծագումով, ուղղափառութեամբ, պատմութեամբ, նուիրականութեամբ եւ սրբապան աւանդոյթներով: Հակուած ենք խոստովանելու, որ կամայական ամէն մի փոփոխութիւն կամ նորամուծութիւն անոր աւանդական եւ վարդապետական սկզբունքներուն մէջ, կը թուի մեղանշում մը ըլլալ անոր ինքնութեան եւ սրբութեան դէմ, նման այն վճիտ աղամանդին, որուն վրայ առաջացող անեսափոքր բիծն իսկ կը նուազեցնէ անոր արժէքը:

Սակայն միւս կողմանէ անուրանալի է նաեւ այն փաստը, որ աւանդութիւններն ալ իրենք իրենց մէջ ենթակայ են փոփոխութիւններու եւ ազդեցութիւններու: Անոնց մէջ հիմնականները միայն կը մնան, մինչդեռ ուրիշներ, ժամանակին ու բարքերուն բերումով, ինքնրստինքեան գործածութենէ կը դադրին, իսկ կրօնական նոր շարժումներ ու ջերմեռանդական նոր սովորոյթներ կը սկսին հետպիտէ իրենց ծիլերը արձակել Եկեղեցւոյ անդաստանին մէջ:

Այս ուղղութեամբ կարելի է պատմական բազմաթիւ յարացոյցներ վկայակոչել, ցոյց տալու համար թէ ինչպէս յետասանուտ երեւոյթներ, հարկադրուած տարբեր ժամանակաշրջաններու ընկերային եւ հասարակական պահանջքներէ, պատմական դէմքերու եւ դէպքերու հետ առնչուած պարագաներէ, ընդհանրական եւ մեր ազգային Եկեղեցւոյ մէջ վերածուած են նուիրական եւ անձեռնմխելի ստացուածքներու:

ա) Նախնական եւ առաքելական շրջանի Եկեղեցին շատ աւելի պարզ էր, սակայն ունէր իր Հաւատոյ դաւանութիւնը, որ ամբողջապէս հիմնուած էր Յիսուս Քրիստոսի Անձին եւ յարութեան գաղափարին վրայ: Գործք Առաքելոց գիրքը նախնական Եկեղեցւոյ Հաւատամքը հետեւեալ կուռ դաւանութեամբ կը ներկայացնէ. «Նազովրեցին Յիսուս, որ մատ-

նուեցաւ, չարչարուեցաւ ու մեռաւ խաչին վրայ, եւ որուն Աստուած յարութիւն տուաւ մեռելներէն»⁽²³⁾:

Դ. եւ Ե. դարերուն հերետիկոսեան շարժումներու եւ աստուածաբանական բուռն պայքարներու հետեւանքով, Տիեպերական Ժողովներու կողմէ Եկեղեցւոյ մէջ որդեգրուեցաւ շատ աւելի բարդ կառոյց ունեցող Հաւատոյ Հանգանակ մը, բոլորիս քաջածանօթ Նիկիա-Կոստանդնուպոլսական դաւանութիւնը, որ այսօր կը դաւանինք մեր Պատարագի արարողութեանց ընթացքին:

Վերոյիշեալ փոքրիկ օրինակը կու գայ վկայելու այն մասին, թէ այսօրուան Եկեղեցին իր արտաքին կերպին մէջ նոյնը չէ, ինչ որ առաքելական դարերու Եկեղեցին էր: Ժամանակի պարգացումը, մշակութներու եւ մտայնութեանց փոփոխութիւնները, ընկերային կեանքի բարեկարգումը Եկեղեցիին եւ նոյնիսկ Քրիստոնէութեան ու անոր վարդապետութեան մէջ փոփոխած կամ աւելցուցած են շատ մը տարրեր, որոնք վստահաբար անծանօթ էին նախնական Եկեղեցիին:

բ) ԺԳ. դարէն սկսեալ, կիլիկեան շրջանի լատինական ապդեցութեան ներքոյ, եւ շնորհիւ Գրիգոր Գ. Կեսարացի լատինասէր կաթողիկոսի, մեր շարակնոցին մէջ մուտք գործած է Աստուածամօր շերմեռանդութեան նուիրուած շարականներու մասնաւոր կանոն մը, այսպէս յորջորջուած՝ «Մեծացուցէ»ներու կարգը: Հակառակ ԺԳ.-ԺԴ. դարերուն, մեր եկեղեցական կեդրոններու եւ լատկապէս Արեւելեան Վարդապետներու կողմէ կազմակերպուած հակալատինական եւ լատիններու հետ հակամիութենական բուռն պայքարին, ինչպէս նաեւ մեր պատմութեան մէջ Գրիգոր Գ. Կեսարացի Կաթողիկոսի ալ ինդրական անձ մը ըլլալու փաստը, «Մեծացուցէ» շարա-

(23) Հմմտ. Գործք, Բ, 22-24, Գ, 13-15, Դ, 10:

կաններու կարգը վաղուց արդէն դարձած է մեր ժամակարգութեան անբաժանելի մէկ մասը, միաժամանակ՝ Շարակնոցի թանկագին գոհարներէն մին:

գ) Մեր Եկեղեցւոյ հնամենի աւանդութիւններէն մին եղած է պահոց շրջանը անցընել միմիայն բուսական մնունդով: ԺԹ. դարէն սկսեալ, ոչ միայն Հայաստանի եւ Սփիւռքի շատ մը շրջաններու, այլ նոյնիսկ վանական համալիրներու մէջ պահոց ուտիք համարուեցաւ նաեւ ձկնեղէնը: Գէթ այսքանով գոհանալինք, ընդհակառակը, ներկայ կեանքի պայմանները արդէն հսկայ մեծամասնութեան մը համար լուսանցքային անգործածելի վիճակի մը մատնած են Եկեղեցւոյ այս եւ նման սովորոյթները, մինչդէռ որոշ քոյր Եկեղեցիներ պահոց սովորութիւնները փոխարինած են անձնական բարեգործութեամբ:

դ) Ժամակարգութիւնները մեր եկեղեցական կեանքի արաժան մէկ մասը կը կազմեն: Գիշերային, Առաւօտեան, Արեւագալի, Ճաշու՝ իր երրորդ, վեցերորդ եւ իններորդ ժամերու բաժանումներով, ինչպէս նաեւ Երեկոյեան, Խաղաղական ու Հանգստեան ժամերգութիւնները ե՛լ Հայաստանի, ե՛լ Սփիւռքի շատ մը եկեղեցիներէն ներս ամբողջապէս դադրած են կատարուելէ, որովհետեւ այսօրուան կեանքի, աշխատանքային եւ ընկերային պայմանները, իրենց գործնական ու պարտաւորեցնող դրուածքով, հնարաւորութիւն չեն ընձեռեր այսօրուան մարդուն մասնակից դառնալու այս հոգեպարար արարողութեանց: Իսկ եկեղեցւոյ դատարկ պատերուն քահանայի ու դպիրի մը բարձրացուցած արձագանգը որքա՞ն կրնայ իր բուն իմաստին ծառայել, այդ ալ ուրի՛շ իմդիր:

ե) Ս. Պատարագի արարողութեան առթիւ հաղորդութիւն ընդունիլ ապաշխարութեամբ եւ ծոմա-

պահութեամբ՝ հնագոյն կանոն է: Սոյն կանոնի խրատութիւնը ընդհանրապէս մեր Եկեղեցւոյ մէջ ակամայ ստեղծած է անփառունակ կացութիւն մը, որ միայն քիչեր կը համարձակին, Պատարագի աւարտին, «երկիւղիւ եւ հաւատով» ընդունելու Ս. Հաղորդութիւնը: Այս անբնական իրավիճակը բարեփոխելու միտումով, շատ մը հովիւներ իրենց հովուութիւններուն մէջ արտօնած են Հաղորդութենէ առաջ ծնապահութեան կանոնին չափաւոր խախտումը, որպէսզի հաւատացեալներ ստիպուած չըլլան միայն Ծրնունդի եւ Զատիկի տօներու Հաղորդութեամբ գոհանալ, այլ ընդհակառակը, կարելիութիւնը ունենան անարգել մօտենալու Հաղորդութեան Խորհուրդին՝ նաեւ Տէրունի եւ միւս Կիրակիներու Պատարագներուն առթիւ:

զ) Մկրտութեան եւ Պսակի խորհրդակատարութեանց առթիւ, պատշաճ սովորութիւն է, որ հաւատքի վկայութիւն տալու պաշտօն ունեցող կնքահայրը կամ խաչեղբայրը, պարտադիր կարգով, ըլլան վաւակները Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ՝ հոգեւոր ծնունդները անոր աւապանին, ու օրհնութիւնները անոր Ս. Պսակին: Յատկապէս Արեւմուտքի մէջ, Եւրոպայի եւ Հիւսիսային Ամերիկայի ամբողջ տարածքին, խառն ամուսնութիւններու բերումով, հայ ընտանիքներ այլեւս կապմուտած են այլ դաւանանքներու պատկանող հայ եւ օտար անդամներով: Էքումենիզմի դարուն այլեւս կարելի չէ պարտադրել անոնց անպայման ընդունիլ Հայ Եկեղեցւոյ դաւանանքն ու վարդապետական սկզբունքները, եւ ոչ ալ կարելի է պահանջել անոնցմէ հրաժարիլ իրենց դաւանական տոհմիկ պատկանելիութենէն: Հետեւաբար, Մկրտութեան եւ Ս. Պսակի խորհրդակատարութեանց առթիւ, դժուար է արգելք ըլլալ այլադաւան քրիստոնէականներուն ստանձնելու համար կնքահայ-

րութեան կամ խաչեղբայրութեան պաշտօնները Հայ Եկեղեցիի յարկէն ներս: Ահաւասիկ, նոր երեւոյթ մը, որուն մասին յառաջագոյն կարելի չէր անգամ երեւակայել:

Այս եւ նման բազմաթիւ յարացոյցներ, որոնց շարքը տեղին չէ այստեղ երկարել, կու գան աներկբայ վկայելու, որ Եկեղեցին մէջ շատ մը սովորոյթներ ու աւանդութիւններ, գործնական կամ պիտանի ըլլալու հիմքէ պրկուելով, մինչեւ մոռացութեան ենթարկուիլը հետպիտէ կը դալկանան, մինչդեռ նորերը՝ կեանքի նոր օրինաչափութիւններուն եւ պահանջներուն տակ ծնունդ կ'առնեն ու կ'արձակեն իրենց դալար ընձիւղները Եկեղեցոյ պարարտ դաշտին մէջ:

Այստեղ կրկին անգամ վերոյիշեալ հարցադրումը՝ ի՞նչը բարեկարգել: Վստահաբար ոչ այն որ հարկաւոր չէ, եւ ոչ ալ այն՝ որուն բարեկարգումը ոչ միայն Եկեղեցոյ կեանքին համար առաւելութիւն մը չէ, այլ միայն վնասակար է:

Այս առնչութեամբ՝ օրինակ մը: Հայ Եկեղեցոյ մէջ ծիսական աւանդութիւն է Ս. Հաղորդութեան մատակարարումը դէպի հաւատացեալի շրթունքը կամ բերանը: Հաւատացեալ անհատի մեղանչական ըլլալու փաստը, Մարմնոյ եւ Արեան Խորհուրդին վստմութեան առջեւ, պինք անարժան կը դարձնէ ունենալու Անոր հետ ձեռքի որեւէ շփում:

Պարագան այսօր բոլորովին այլ է Հիւսիսային Ամերիկայի ու Գանատայի շատ մը ծովներուն մէջ: Նորելուկ հիւանդութիւններու եւ չարագուշակ վարակներու մտավախութենէն թելադրուած, գրեթէ ամբողջ Հիւսիսային Ամերիկայի հայ համայնքներէն ներս, սկսած է լայն տարածում գտնել Ս. Հաղորդութեան ձեռքի վրայ մատակարարման ձեւը: Այսինքն՝ հաղորդուելու պահուն, հաւատացեալը իր ձեռքին

վրայ կ'ընդունի Ս. Հաղորդութիւնը եւ ապա զայն կը տանի իր բերանը:

Եկեղեցւոյ մէջ նման երեւոյթի մը առաջացումը ուղղակի աղերս մը չունի բարեկարգութեան հետ, այլ ան նորարարութիւն մըն է, որ իցի՛ւ թէ առաւելութիւն մը բերէր Եկեղեցւոյ կեանքէն ներս:

Նմանապէս, ծիսարանին ու Պատարագի տեւողութեան կրճատումներով կարելի չէ բարեկարգուած նկատել Եկեղեցին, եւ ոչ ալ յոյս ունենալ այդպիսի միջամտութիւններով աստղաբաշխական թիւ ապահովել եկեղեցիներու նստարաններուն վրայ:

Հարկ է բարեկարգել ու մասնաւոր զարկ տալ Եկեղեցւոյ մէջ անտեսուած բնագաւառներուն՝ քրիստոնէականին (Cathéchisme) ու երիտասարդական շարժումներուն: Առանց Աւետարանի եւ Հայ Եկեղեցւոյ մասին հիմնական գիտելիքներու, առանց վերջինիս վկայողական պատմութիւնը ճանչնալու եւ ըմբռնելու անոր բարենպաստ դերն ու առաքելութիւնը մեր ժողովուրդի կեանքին մէջ, կը նշանակէ այժմէն խոստովանիլ սեփական Եկեղեցիին տկարութիւնն ու ձախողութիւնը վաղուան սերունդը հայադրոշմ բոյրով մը կերտելու պատասխանատուութեան մէջ:

Որքա՛ն ուրախալի էր տեսնել 1700-ամեակի ծիրին մէջ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ երիտասարդական շարժումի մը գոյատուր եւ կայմակերպումը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ, Հայաստան, Արցախ եւ Սփիւռք միատեղ գործակցութեամբ: Այս առթիւ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ հաստատուեցաւ յատուկ գրասենեակ մը, եւ յատկապէս 2001 թուականի Յուլիս եւ Օգոստոս ամիսներուն իրագործուեցան քանի մը կարեւոր միջոցառումներ, որոնց ընթացքին հայրենիքէն եւ Սփիւռքի տարբեր գաղթօճախներէն համատեղուեցան շուրջ 3000 հայ երիտասարդներ: Թերեւս յիշուած թիւը զարմանք եւ

մասնաւոր հիացմունք մը առթող մեծութիւն մը չէր, սակայն, միւս կողմանէ, աննշան սկիւբ մըն ալ չէր, կարելոր հանդիպում մը, ի վերջոյ կայծ մըն էր, որ կրնար հայ երիտասարդութեան եկեղեցասէր շարժումին վաղուան հորիպոնները բոցավառել:

Այս ուղղութեամբ, ինչքա՛ն տխուր է հաստատել, թէ Եկեղեցւոյ հովանիին ներքոյ ծլարձակած երիտասարդական այդ շարժումը շուտով անշքացաւ, նոյն 1700-ամեակի աշունին հետ: Երիտասարդութիւնը պէտք էր իսանդավառուած պահել 1700-ամեակի գաղափարով ու անոր տուած պատգամով: Ան պէտք է իր ուրոյն տեղը գրաւէր մեր Եկեղեցւոյ կառոյցին մէջ, հետպիտէ ստեղծէր իր վարչական յատուկ մարմինը եւ գտնէր զինք մնուցանող Մայր եւ Ս. Եկեղեցւոյ այն հարապատ պորտալարը, որուն բաշխած հոգեւոր աւելնով ան պիտի դառնար հինին մէջ մի՛շտ մշտաւորոգ վաղուան նորածնունդ Եկեղեցին:

Եթէ կայ երբեք ուրիշ բնագաւառ մը, որ մեր Եկեղեցւոյ ներկայի դաշտին մէջ եւս քան զեւս բարեկարգուելու կարիքն ունի՝ եկեղեցական իշխանութեան արդար բաշխումն է աշխարհական անդամներու եւ նուիրապետական դրուածքի՝ սարկաւազներու, կուսակրօն եւ ամուսնացեալ քահանաներու, ինչպէս նաեւ եպիսկոպոսներու միջեւ:

Եկեղեցին իբրեւ ի Քրիստոս հաւատացողներու հաւաք՝ կազմուած չէ կոտորակեալ միաւորներէ, այլ կը ներկայացնէ ամբողջութիւն մը, որ հիմնուած է Եկեղեցւոյ մէջ Քրիստոսի մնայուն ներկայութեան խորհուրդին եւ Հաղորդութեան վրայ: Հաղորդութիւնը պարպապէս կը հանդիսանայ Եկեղեցիին էութիւնը. Հաղորդութիւն՝ Տիրոջ Խօսքի, Մարմնի ու Արեան Խորհուրդի:

Աստուծոյ Խօսքը, այսինքն՝ Աւետարանը եւ Ս. Հաղորդութիւնը, գերագոյն եւ իրական գրաւական-

ներն են Քրիստոսի ներկայութեան՝ Եկեղեցիին մէջ եւ իր հաւատացեալներուն միջեւ: Քրիստոսի այս խորհրդաւոր ներկայութեան շուրջ եւ այս ներկայութեան առջեւ է որ կը հաւաքուի հաւատացեալներուն դասը, ու այսպէ՛ս կը կապմէ Տիրոջ առջեւ ներկայութիւն դարձած Եկեղեցին կամ Աստուծոյ ժողովուրդը՝ աշխարհականներու եւ հոգեւորականներու դասով:

Եկեղեցւոյ այս զոյգ դասերը՝ աշխարհական եւ հոգեւորական, իրարմէ բաժան եւ իրարու հակադիր բնւեռներ չեն Եկեղեցի կոչուած այս ամբողջութեան մէջ, այլ մէ՛կ ժողովուրդ եւ մէ՛կ Մարմին են Քրիստոսի՝ Աստուծոյ Խօսքի սպասարկութեան եւ ծառայութեան համապատասխան պաշտօններով:

Իւրաքանչիւր քրիստոնէայ անհատ, Աւազանի Ս. Մկրտութեամբ, որդեգրուած ըլլալով Քրիստոսի Եկեղեցիին կողմէ, ինքնաբերաբար իրեն շնորհուած հեղինակութեամբ, կոչուած է Քրիստոսի Մարգարէութեան, Քահանայութեան եւ Թագաւորութեան առաքելութիւններուն:

Այս իմաստով, Հայ Եկեղեցին իր առաքելական ծագումով, այո՛, եղած է նուիրապետական, բայց երբեք չէ եղած կղերապետական: Դեռ եւս Ե. դարէն սկսեալ, իր ազգային-եկեղեցական պատմութեան առանձնայատուկ զարգացումով եւ պատմական դէպքերու բերումով, ան ստեղծած է իր մէջ ժողովրդավարական իւրայատուկ դրոյթ մը, եւ զայն իբրեւ մեծագոյն բարիք պահած է մինչեւ մեր օրերը: Մեր ազգային եւ եկեղեցական կեանքին մէջ, քաղաքական թէ չլուտ եկեղեցական կամ աստուածաբանական մակարդակներուն վրայ առնուած կարեւորագոյն որոշումները եղած են ազգ եւ Եկեղեցի միութեան եւ անընդմիջելի համագործակցութեան մէջ:

Հայ Եկեղեցւոյ ժողովրդավարական կարգը որքան ալ խրթին թուի իր գործնական ձեւերուն մէջ,

կ'արտայայտուի սա մէկ հատիկ նախադասութեամբ. ժողովուրդը կ'ընտրէ իր հոգեւոր առաջնորդները՝ ամենամեծերէն մինչեւ ամենափոքրերը: Այսպէս օրինակ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը կ'ընտրուի Ազգային-Եկեղեցական Ժողովէն, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Ազգային-Պատգամաւորական Ժողովէն, Թուրքիոյ Հայոց Պատրիարքը՝ իր վիճակի Պատգամաւորական Ընդհանուր Ժողովէն, Եպիսկոպոսը՝ Թեմական Պատգամաւորական ժողովներէ եւ, եպիսկոպոսական ձեռնադրութիւն ստացած չըլլալու պարագային, օծումով կը հաստատուի Կաթողիկոսէն, իսկ հովիւները՝ ծուխին կողմէ ու, նոյնպէս, ձեռնադրութեամբ կամ օծումով, կը վաւերացուին Թեմակալ Առաջնորդէն:

Այս կարգին միակ բացառութիւնը Երուսաղէմի Պատրիարքի ընտրութիւնն է, որ կը կատարուի ոչ թէ ժողովուրդին, այլ Սրբոց Յակոբեանց վանական միաբանութեան անդամներու կողմէ:

Եկեղեցւոյ վարչական կառոյցին մէջ ահաւասիկ կը տեսնենք, որ գնահատելի եւ պատասխանատու իրաւասութիւններով օժտուած է հայ աշխարհական դասը: Բայց նոյնը պիտի չկարենանք պնդել հոգեւոր մարզին մէջ, ուր աշխարհական մարդը ոչ մէկ տուչութիւն ունի Եկեղեցւոյ առաքելական դաշտին մէջ աւետարանական եւ քարոզչական համապատասխան գործունէութիւն ծաւալելու:

Աւետարանին Բարի Լուրը եւ Քրիստոսի մասին հաւատքի վկայութիւն տալը պարտականութիւնն է իւրաքանչիւր քրիստոնէայի: Հասկնալի է, որ հիմնական տարբերութիւն մը կայ աւետարանելու կամ քարոզելու եւ վարդապետելու միջեւ: Քարոզելու կոչուած է իւրաքանչիւր քրիստոնէայ անհատ, Եկեղեցւոյ կողմէ սահմանուած միջամտութիւնը կ'առաջանայ միայն վարդապետելու կամ դաւանաբա-

նական հարցեր ուսուցանելու պարագային, վասնզի այդ կը նախադրէ մամնաւոր պատրաստութիւն եւ համապատասխան գիտելիք:

Այսօր, երբ Եկեղեցին աշխարհի չորս ծագերուն՝ իր բոլոր թելերով ու դաւանանքներով զգալի տագնապ մը կ'արձանագրէ, երբ Սփիւռքի հողմացրիւ ամփերուն վրայ գոնուող հայ եկեղեցիներու թափուր նստարաններու բազմացնող թիւը լուրջ մտահոգութիւն կը դառնայ, իսկ Հայաստանի մէջ՝ աղանդաւորական շարժումներու աւերիչ գործունէութիւնը կը սկսի վտանգել մեր ազգին գոյութեանական հիմքերը, յայնժամ, պէտք է որ Հայ Եկեղեցին վերանորոգէ իր աշխարհիկ ուժերը, բացի վարչական պարտականութիւններէ ներգրաւէ զանոնք նաեւ կրօնական, եկեղեցական, քարոզչական ու առաքելական անյետաձգելի պատասխանատուութիւններու մէջ: Դժուար թէ Եկեղեցին, կարճ ժամանակահատուածի մը մէջ, կարենայ մեր ժողովուրդի ծոցը ներթափանցած վրտանգներու առաջքն առնել, եւ կամ զանոնք հեռու վանել իր հոգեւոր սպասաւորներու սահմանափակ թիւով:

Միւս կողմանէ, իրատես ըլլալու փափաքով, նաեւ պէտք է նշել, որ եկեղեցական եւ կրօնական գիտելիքներու պակասը այնքան համաւարած եւ գերակշիռ դարձած է, որ աշխարհական մարդը ինքնաբերաբար զրկուած է ինքնապաշտպանութեան դիմելու ազդու միջոցներէն: Եթէ հիւանդի մը ֆիզիքական կառոյցին մէջ տկարացած է պաշտպանողական (immun) համակարգը, ամենափոքրիկ մանրէն իսկ կրնայ վնասակար կամ նոյնիսկ ճակատագրական հետեւանքներ ունենայ անոր առողջական վիճակի վատթարացման մէջ:

Անդրադառնալով Եկեղեցւոյ մէջ իշխանութեան արդար բաշխումին, այս անգամ, նուիրապետական

կեցուածքի՝ սարկաւագներու, կուսակրօն եւ անուս-
նացեալ քահանաներու, ինչպէս նաեւ եպիսկոպոս-
ներու միջեւ, պէտք է ընդգծել, որ թերեւս առաջին
դարերու Եկեղեցւոյ դրուածքէն չկայ աւելի մեծ շե-
ղում մը՝ քան առկա ինդիքը:

Եկեղեցւոյ նուիրապետական կարգը եռաստի-
ճան է՝ սարկաւագութիւն, քահանայութիւն եւ եպիս-
կոպոսութիւն: Կաթողիկոս, որ նոյն ինքն եպիսկո-
պոսն է, կուսակրօն քահանայ, այսինքն՝ աբեղայ կամ
վարդապետ, բոլորն ալ քահանաներ են: Քահանա-
յութիւնն է այստեղ ամէնուն էական հիմքը եւ ոչ թէ
ծառայութեան մասնաւոր մարպերը, ուրկէ, բնակա-
նաբար, կ'առաջանան իրաւունքներն ու իշխանու-
թիւնները եկեղեցական համապատասխան կարգե-
րու:

Քահանայի մը հետ համեմատելով, եպիսկոպո-
սը մասնաւոր իշխանութիւն մը ունի՝ օծելու եւ ա-
ռաջնորդելու թեմական վիճակ մը: Այսուհանդերձ, ե-
պիսկոպոսն ալ ընդամէնը քահանայ մըն է, ինչպէս
նաեւ կուսակրօն աբեղան կամ վարդապետը: Կու-
սակրօնութիւնը առաւելութիւն մը չէ քահանայու-
թեան նկատմամբ: Կուսակրօնութիւնը անապատա-
կան շարժումի եւ վանական կեանքի մէկ արգասիքն
է, որ յետսամուտ է մեր Եկեղեցւոյ մէջ: Գիտենք, որ
մինչեւ Ե. դար, մեր կաթողիկոսներն ու եպիսկոպոս-
ները ամուսնացած էին, իսկ Կաթողիկոսական Աթոռն
ալ ժառանգական էր մինչեւ Ս. Սահակ Հայրապետ:

Եկեղեցւոյ մէջ չի կրնար ըլլալ աստուծապարգեւ
աւելի մեծ իշխանութիւն կամ խորհուրդ՝ քան այն
շնորհը, որ նոյն ամուսնացեալ քահանայի ձեռքերուն
մէջ ալ կը մարմնանայ եւ կ'արիւնանայ հացը եւ գի-
նին՝ Ս. Պատարագի Սեղանին վրայ: Աւելին՝ մեր Ե-
կեղեցւոյ մէջ նաեւ ամուսնացեալ քահանային վրս-
տահուած է օծելու իշխանութիւն, փաստօրէն՝ դրոշ-

մելու եւ հիւանդաց կարգը կատարելու առթիւ, որոնք խորքին մէջ ուրիշ բան չեն, եթէ ոչ օծելու խորհրդակատարութիւններ⁽²⁴⁾:

Անուանացեալ քահանայ մեր Եկեղեցւոյ ներկայի դրուածքին մէջ, տակաւին, ցաւօք, կը դիտուի ընդամէնը որպէս ծիսակատար մը: Ան ենթարկուած է ըլլալու Եկեղեցիին մէջ «երկրորդ աստիճանի» քաղաքացի մը, զուրկ առաջնորդական ու վարչական իշխանութիւններէ:

Ճիշդ է որ Եւրոպայի, Հիւսիսային Ամերիկայի ու Գանատայի թեմական վիճակներուն մէջ անուանացեալ քահանայներ այսօր աւելի բարեփոխուած դիրք մը ունին, սակայն եկեղեցական աստիճանի բարձրացում, առաջնորդական եւ վարչական յատուկ պաշտօններու փոխանցում դեռ նշմարելի չէ, հակառակ անոր որ անոնցմէ շատեր իրենց վարչական հարուստ փորձով եւ ուսմամբ շա՛տ աւելի կարողութիւնը ունին իրենց վստահուած հօտը պահպանելու եւ դեկավարելու, քան շատ մը կուսակրօններ:

Այստեղ խօսքը պիտի տանք մեր Եկեղեցւոյ պատմութեան կարկառուն դէմքերէն Մաղաքիա Արք. Օրմանեանին, Թուրքիոյ Հայոց Պատրիարք (1896-1908), բաժնելու իր համոզումը, իր հեղինակաւոր «Հայոց Եկեղեցին» գիրքէն.

«Անուանացեալ քահանայներու առջեւ բաց եղող պաշտօններն են աւագերէցութիւն, առաջնորդական փոխանորդութիւն [եւ] կրօնական ժողովականութիւն (...): Առաջնորդութիւններու պարսպութեան առեւն ալ տեղապահութեան կը կոչուին, բայց ոչ վարդապետական եւ ոչ եպիսկոպոսական աստիճաններու կը բարձ-

⁽²⁴⁾ Լատին Եկեղեցին միևնրեւ այդ պաշտօններն ալ վերապահած է միայն եպիսկոպոսի իշխանութեան, այլապէս, ի պահանջել հարկին, քահանայ մըն ալ կը կատարէ դրոշմի խորհուրդը, սակայն բացառաբար իր եպիսկոպոսին մասնաւոր արտօնութեամբ:

րանան (...): Ինչչափ ալ այդ սեղմեալ դրութիւնը մեր օրով օրէնքի կարգ անցածի չափ ընդհանրացած ըլլայ, սակայն ո՛չ հին օրէնք է եւ ո՛չ կանոնական պահանջ: Մանաւանդ թէ երբ եպիսկոպոսութեան բնութիւնը լաւ ուսումնասիրուի, պիտի տեսնուի թէ անհկա քահանայական պաշտօններու եւ “հոգ հոգւոց” կոչուած ծառայութեանց բովանդակութիւնն է, եւ տիրապէս ամուսնացեալ քահանայութեան յատուկ եւ սեփական պաշտօններուն լրումն է: Հին ատեն եպիսկոպոսներ երիցագոյն քահանաներուն մէջէն կ’առնուէին, եւ այս կերպով “քահանայապետ” անունը կ’առնէին, որ է ըսել ամբողջ վիճակի մը քահանաներուն պետը (...): Այսօր ալ բնաւ կանոնական արգելք մը չկայ, որ նորամուտ սովորութիւնը, որչափ ալ տարածուած ըլլայ, հնաւանդ եկեղեցական կանոններուն տեղի չտայ, եւ ամուսնացեալ կղերին առջեւ բաց ըլլան եկեղեցականութեան բարձրագոյն աստիճանները: Այս պարագային ալզը մեծապէս օգուտներ ալ կ’ունենար, որովհետեւ այս կերպով ամուսնացեալ կղերը կ’ապատէր ստորնութեան վիճակէ մը, որ ոչ մի կերպով չ’արդարանար, եւ որուն բուն պատճառները՝ իրենց վրայ դրուած պատահական պրկումներն են: Ներկայ դրութեան հետեւանքով, անոնք որ քիչ մը վարգացում ստացած են, ընդհանրապէս կը խուսափին ստանձնել եկեղեցական ընթացք մը, ուր թէ՛ շատ դժուարութիւններ կան, եւ թէ՛ բարոյական բարձր իղձեր գոհունակութիւն չեն գտներ, նիւթական օգուտներ ալ նուազ են: Հետեւաբար միայն համեստ եւ միջակ կարողութեան անձեր, որոնք բարձր ձգտումներ չունին, անոնք միայն քահանայական աստիճանին հետամուտ կ’ըլլան: Ահա իսկական իրականութիւնը, որուն պատճառաւ ամուսնացեալ քահանայութիւնը Արեւելքի մէջ ստորնութեան մէջ կը մնայ, եւ ըսելու իսկ պէտք չկայ, թէ հաւատացեալներն են որ այդ կացութեան վնասները կը կրեն:

Որպեսզի այդ բանին դարման մը մատուցուի, մենք կը կարծենք, թէ բաւական է որ եպիսկոպոսական ընտրելիներու մասին եկեղեցւոյ հնաւանդ եւ կանոնական ձեւը նորէն ձեռք առնուի:

Երբոր քահանայական դասակարգին առջեւ յառաջդիմելու ասպարէզը կ'ընդարձակուի, ազգայիններուն (իմա՛ աշխարհականներուն) դասակարգն ալ դժուարութիւն չզգար այլեւս ամուսնաւոր քահանայութեան շարքին մէջ մտնել, եւ ասով դասակարգին պատիւը ազգայնոց աչքին առջեւ կը բարձրանայ, եւ քահանաներն ալ արժանաւորագոյն կերպով կը լրացնեն իրենց կոչումին պարտաւորութիւնները, եւ կը համապատասխանեն դարուս վարգացման աստիճանին⁽²⁵⁾»:

Օրմանեան Սրբազան իր դասական երկը՝ «Հայոց Եկեղեցին», հրատարակած է Կ. Պոլսոյ մէջ, 1911 թուականին, այսօր, 91 տարիներ առաջ: Օրմանեանի կարծիքը մանաւանդ մեր եկեղեցական շրջանակներուն մէջ հեղինակութիւն է աներկբայ: Որեւէ մէկ ուսումնասիրութիւն Հայ Եկեղեցւոյ մասին կարելի չէ երեւակայել առանց Օրմանեանի մը յիշատակութեան: Թէ որքան հիմնական է Օրմանեան Սրբազանի գործը Հայ Եկեղեցւոյ համար՝ ապացուցանելի է պարզապէս այն փաստով, որ 1700ամեակի հրատարակութեանց ցանկին մէջ, հեղինակիս վերոյիշեալ երկը հայերէն եւ անգլերէն լեզուներով ունեցաւ մէկէ աւելի հրատարակութիւններ, իսկ նոյն Օրմանեանի կոթողային գործը՝ «Ազգապատում»ը արժանացաւ երկու հրատարակութիւններու, մին Երեւանի Պետական Համալսարանի կողմէ, ղեկավարութեամբ՝ Երեւանի Պետական Համալսարանի Աստուածաբանութեան Ամբիոնի Դեկան՝ Բարձր. Տ. Շահէ Արք. Աճեմեանի, իսկ միւսը՝ տպագրուեցաւ նոյն տարուան ընթացքին Անթիլիասի մէջ, հովանաւորութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան: Սա-

(25) Տե՛ս, ակն, 170-171:

կայն թե ինչն^օ ընթացք չէ տրուած Օրմանեան Սրբապանի, Բաբգէն Կաթողիկոս Կիւլէսէրեանի, Թորգոմ Պատրիարք Գուշակեանի եւ այլ լուսաւոր դէմքերու այնքան ժամանակակից հնչող վերոյիշեալ առաջարկներուն, «պատճառք բապում են», եւ ասոնց մէջ ծանրակշիռներէն մին պէտք է ըլլայ այն՝ թէ կուսակրօն կղերը պատրաստ չէ Եկեղեցւոյ մէջ իշխանութիւնը բաժնելու իրեն ստորադաս նկատուող ամուսնացեալ քահանաներուն հետ: Այլապէս մեր եկեղեցին դրակասապէս պիտի բացուի դէպի հանրութիւնը, ու շատ մը կոչումնաւոր անձեր քաջալերուած պիտի ըլլան անարգել ներգրաւուելու եկեղեցական ասպարէզէն ներս՝ կապմելով հանդերձ իրենց տոհմիկ ընտանիքները⁽²⁶⁾:

Անդրադառնալով սարկաւազներուն, ցաւով պիտի հաստատենք, որ մեր Եկեղեցւոյ վարչական եւ ընկերային կեանքին մէջ ընդհանրապէս զգալի չէ անոնց ներկայութիւնը: Սարկաւազը խորանի «գեղգեղող» երգիչ մը չէ միայն: Անոր ծառայութեան դաշտը Եկեղեցիին մէջ շատ աւելի ընդարձակ էր քան ինչ որ կը տեսնենք ներկայիս: Ի վուր չէ որ Ընդհանրական Եկեղեցին սարկաւազութիւնը ընդունած է իբրեւ նուիրապետական կարգ: Արդարեւ, սարկաւազը իշխանութիւն ունի ոչ միայն եկեղեցւոյ բեմէն Աւետարանը ընթերցելու, այլ նաեւ աւետարանելու կամ քարոյելու: Ան ո՛չ միայն լիապօրուած է Պատարագի ընթացքին Ս. Սեղանին սպասարկելու, այլ նաեւ անհրաժեշտութեան պարագային աղօթելու, օրհնելու եւ քահանայի կողմէ սրբագործուած Հաղորդութիւնը մատակարարելու հաւատացելոց, հիւանդաց, վշտացելոց, ճանապարհորդաց եւ խոստովանողաց: Սարկաւազը կրնայ նաեւ ոչ թէ խորհուրդներ, այլ արարողութիւններ կատարել, ինչպէս օ-

(26) Մեր տեսութեանց տեսակէտէն խիստ յանձնարարելի է կարդայ՝ Դոկտ. Տ. Զաւէն Արզումանեանի, Ազգապատում-ը, Դ, Նիւ Եորք, 1997, էջ 117-121:

րինակ քահանայի բացակայութեան պարագային թաղ-
ման կարգ եւ սեղանի օրհնութիւն:

Գ) ԻՆՉՊԷՍ ԲԱՐԵԿԱՐԳԵԼ ԵՒ Ո՞Վ ՊԻՏԻ ԲԱՐԵԿԱՐԳԷ ԵԿԵՂԵՑԻՆ

Վերոնշեալ վերջին հարցումներուն պատասխան-
ները սերտօրէն առնչուած են իրարու հետ եւ անպայ-
մանօրէն պիրար կ'ամբողջացնեն:

Արդարեւ, ո՞վ եւ ինչպէ՞ս պիտի բարեկարգէ Հայ
Եկեղեցին իր Հայաստան, Արցախ եւ Սփիւռք ընդարձակ
դաշտերով: Եկեղեցւոյ ո՞ր կալուածէն ներս անհրաժեշ-
տութիւն կը թուի բարեկարգութիւնը, եւ այս ուղղու-
թեամբ ո՞վ պիտի առնէ համապատասխան որոշումնե-
րը: Հայ Եկեղեցւոյ նուիրապետական չորս Աթոռներէն
ո՞ր մէկուն իրաւական հեղինակութեանը կը վերաբերի
բարեկարգութեան խնդիրը: Ամէնուն համար որքանո՞վ
պարտաւորիչ կրնան ըլլալ բարեկարգութեան վերա-
բերեալ առնուած վճիռները: Ո՞ր է գործընթացին սկիւ-
բը եւ ո՞ր՝ սահմանագիծը:

Բնական է, նման հարցադրում մը՝ ո՞վ պիտի բա-
րեկարգէ Եկեղեցին, ինքնին կը նախադրէ, թէ ամէնուն
ուշադրութիւնը առաջին հերթին կը կեդրոնանայ մեր
Եկեղեցւոյ բարձրագոյն հեղինակութեան՝ Կաթողիկոսի
անձին եւ պատմականօրէն իրեն շնորհուած հանգա-
մանքին վրայ: Բարեկարգութիւնը, մինչդեռ, չի կրնար
իրականանալ անհատի մը, թէկուզ Եկեղեցւոյ բարձրա-
գոյն հեղինակութեան ծրագրումով կամ փափաքով, այլ՝
հասարակաց պահանջքով:

Պահանջքը առաջնահերթ պէտք է համարել պայ-
մաններէն, վստակի վերջինները պիտի ծառայեն որպէս
միջոց միակ նպատակին՝ Հայ Եկեղեցւոյ ներքին բարե-
կարգումին եւ վերապարթօնքին:

Հասարակաց այս պահանջքը իր ամբողջական

արտայայտութիւնը կը գտնէ մեր Եկեղեցւոյ վարչական գերագոյն մարմինի՝ Ազգային Եկեղեցական Ժողովին մէջ:

Վերջին ժամանակներուն, մեր Եկեղեցւոյ մէջ ազգային-եկեղեցական որոշումներ ընդունող օրէնսդիր այս գերագոյն մարմինը երկու ժողովներ գումարեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ, մին՝ 4 Ապրիլ 1995ին, իսկ միւսը՝ 27 Հոկտեմբեր 1997ին: Վերջինիս պարագային, Ազգային-Եկեղեցական Ժողովը ստիպուած եղաւ գոհանալու միայն Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Վեհափառ Կաթողիկոսի ընտրութեամբ, Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովի դահլիճին մէջ տեղի ունեցած ոճիրին հետեւանքով: Առաջինը, սակայն, յանձին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա.ի, Կաթողիկոս մը ընտրելէ բացի քայլ մըն ալ անդին գնաց, բերելով շարք մը առաջարկներ⁽²⁷⁾ ուսումնասիրելու, նախապատրաստելու եւ յառաջիկային գումարուելիք Ազգային-Եկեղեցական Ժողովի մը առթիւ համապատասխան որոշումներ ընդունելու միտումով: Առանց երկարաբանութեան, այստեղ ներկայացուած եւ մեզ հետաքրքրող առաջարկներէն մի քանին արժանի են յիշատակութեան.

- 1) Հայ Եկեղեցիէն ներս կատարել ծեսի բարեկարգութիւն եւ այժմէականացնել զայն⁽²⁸⁾:
- 2) Դրականօրէն լուծել Հայ Եկեղեցւոյ միութեան հարցը⁽²⁹⁾:
- 3) Հաստատել Սահմանադրութիւն եւ մօտ ժամանակներս հրաւիրել եպիսկոպոսաց ժողով⁽³⁰⁾:
- 4) Կաթողիկոսութեան կառավարման տարիք համարել 75ը⁽³¹⁾:

(27) Տե՛ս, «Էջմիածին», ԾԲ տարի, Ապրիլ 1995, էջ 41-46:

(28) Տե՛ս, անդ, էջ 43:

(29) Նոյնը:

(30) Անդ, էջ 44:

(31) Նոյնը:

- 5) Սրբացնել 1915 թուականի ցեղասպանության բոլոր կոհերը⁽³²⁾:
- 6) Կատարել որոշ փոփոխություններ կուսակրօնության ասպարեզին մէջ⁽³³⁾:
- 7) Անուսնացեալ քահանաները կարողանան դառնալ կամ ընտրուիլ թեմակալ առաջնորդներ⁽³⁴⁾:
- 8) Անուսնացեալ քահանաները կարողանան դառնալ եպիսկոպոս⁽³⁵⁾:
- 9) Արժանաւոր ամուրի անձերը առանց կուսակրօնության ուխտ կատարելու դառնան քահանայ՝ հետագային անուսնանալու թոյլտուութեամբ⁽³⁶⁾:
- 10) Կանանց սարկաւազ ձեռնադրելու թոյլտուութեան ստացում⁽³⁷⁾:

Ահաւասիկ, 1995 թուականի Ազգային-Եկեղեցական Ժողովին մէջ արժարժուած առաջարկութիւններէն ու թելադրութիւններէն կարելոր հոյլ մը, որոնք կրնային շինիչ ատաղձը դառնալ բարեկարգութեան բարձրացող շէնքին, դժբախտաբար, ոչինչ իրականացաւ, Գարեգին Ա. Կաթողիկոսի եղերաբախտ վախճանով:

Եկեղեցւոյ պատգամը եւ առաքելութիւնը ժամանակին մէջ թարգմանելու եւ վանոնք այսօրուան ու վաղուան մարդուն հաղորդակից դարձնելու իմաստով, Հայ Եկեղեցւոյ բարեկարգումը անլետաձգելի անհրաժեշտութիւն մըն է: Պէտք է պաշտօնի կոչուի եկեղեցական եւ աշխարհական ներկայացուցիչներէ բաղկացած կարող յանձնախումբ մը՝ հեղինակաւոր տուուչութեամբ

(32) Նոյնը:

(33) Նոյնը:

(34) Անդ, էջ 45:

(35) Նոյնը:

(36) Նոյնը:

(37) Նոյնը:

պատրաստելու եւ յառաջիկայ Ազգային-Եկեղեցական Ժողովին ներկայացնելու համար Հայ Եկեղեցւոյ բարեկարգութեան լրջօրէն ուսումնասիրուած թղթածրարը: Պայմանաւ որ Ազգային-Եկեղեցական Ժողովն ալ իր կարգին, կապուած ըլլայ մեր Եկեղեցւոյ պատմութիւնը, աստուածաբանութիւնը, առաքելութիւնը, ասանդութիւնը, կանոնական իրաւունքը, գաղափարախօսութիւնը, ազգային նկարագիրն ու ոգին ճանչցող որակեալ պատգամաւորներէ, որպէսզի արդիւնաւէտ ըլլայ «հաւատք եւ քարոզութիւնք» մեր:

Խօսելով մեր Եկեղեցւոյ բարեկարգութեան մասին, չենք կրնար բարի նախանձով եւ անկեղծ հիացումով մը չանդրադառնալ վերջին տասնամեակներուն Հռովմէական Կաթողիկէ Եկեղեցւոյ մէջ կատարուած ընդհանուր բարեկարգումներուն:

Ո՞վ կրնար պատկերացնել, որ Հռովմէական Կաթողիկէ Եկեղեցւոյ նման հզօր, իր Աթոռին գերագահութեանը վրայ յենած, պապական անսխալականութեան սկզբունքին կառչած, վարդապետական, օրէնադրական եւ հաստատութենական անխախտելի դրուածքներով դեկավարուող Եկեղեցի մը, 11.10.1962-8.12.1965ին, երկու Սրբազան Քահանայապետերու՝ Յովհաննէս ԻԳ.ի եւ Պօղոս Զ.ի Աթոռակալութեան ներքոյ, պիտի գումարէր Վատիկանի Բ. Ժողովը, եւ պատմական 16 փաստաթուղթերով վերատեսութեան պիտի ենթարկէր իր կեցուածքը հանդէպ աշխարհի, Յայտնութեան Վարդապետութեան, եկեղեցւոյ, միջ-եկեղեցական յարաբերութեան (էկումենիզմի), կրօնքի ապատութեան եւ ծիսական բարեկարգութեան մասին:

Սոյն ժողովը շրջադարձային եւ գերազանցապէս էական նշանակութիւն մը ունեցաւ Կաթողիկէ Եկեղեցւոյ կեանքին մէջ, ընդ որում, ներկան արգասաւորուեցաւ անցեալին ճոխութեամբը, բայց ոչ թէ խունացած հայեցակէտերու հրամայականով, ալ ներկային պահանջած

պայմաններով: Այսպիսով, երկարաձիգ դարերու ամբարած հոգեւոր մշակոյթը՝ նոր որակ եւ իմաստաւորում ստացաւ ներկայի կիրարկելիութեան դաշտին մէջ, վասնպի հինին ու նորին միջեւ ստեղծուեցաւ հաղորդակցութիւն մը, աւանդութեան հսկայ Կանգունածն ու այժմէականը իրարմէ հեռացնող լայն բացուածքը միացաւ ոսկի կամարով մը: Եւ սոյն հրաշալիքը Կաթողիկէ Եկեղեցւոյ մէջ իրականացաւ շնորհիւ այն ականաւոր աստուածաբաններուն, որոնք իրենց գիտական առաքելութեան դէտ նպատակին դարձուցած էին՝ միջնադարեան աստուածաբանական մտածողութիւնը, ի մասնաւորի՝ Թովմաս Ակուինացիի, ինչպէս նաեւ միւս մեծահռչակ դէմքերու գրական հարուստ թողօնը փոխանցել այսօրուան հաւատացեալ մարդուն՝ իր լեզուով եւ ըմբռնողութեան կարելիութիւններով: Փաստօրէն, Վատիկանի Բ. Ժողովը հանդիսացաւ արդի պայմաններուն յատուկ խօսքի, լեզուամտածողութեան, աշխարհահայեացքի եւ իմաստի տեսակէտէ, Կաթողիկէ Եկեղեցւոյ ամբակառոյց այն կամուրջը, որուն վրայէն կրցաւ անցնիլ հոգեւոր հսկայ աւանդութեամբ ծանրաբեռնուած հին եկեղեցին՝ հանդիպելու համար նորին հետ:

Եկեղեցին, դարերու ընթացքին ստեղծած իր հոգեւոր ամբողջ մշակոյթով, աշխարհահայեացքով եւ կրօնական փիլիսոփայութեամբ, գրաւոր եւ բերանացի աւանդութեամբ, մասնաւոր մտածողութեամբ եւ առաքելութեամբ, իր էութեամբ եւ աստուածային օրէնքով ըստանձնած պատմական իր բոլոր պատասխանատուութիւններով, ինչպէս նաեւ մարդկային ընկերութեան մէջ իր առաջնորդող մասնաշատուկ դիրքով, պէտք է անպայմանօրէն ըլլայ ժամանակի պահանջներուն, ընկերային-հասարակական եւ մշակութային կեանքի փոփոխութիւններուն ու վարգացումներուն անսացող, ժամանակին հետ առաջ ընթացող ու վարգացող Եկեղեցի մը՝

մտահոգ իւրաքանչիւր անհատի եւ հանրութեան փրկութեան վերաբերեալ կենսական հարցերով:

Յորչափ որ Եկեղեցին անկենդան կառոյց մը ըլլալէ աւելի՝ մարդոցմէ կապմուտ ու Տիրոջ առջեւ խմբուած ու ապրող համայնքն է, եւ, քանի որ «Աստուած՝ մեռելներու Աստուածը չէ, այլ՝ ողջերու»⁽³⁸⁾, ապա ուրեմն ան իր ներքին դրուածքով ու արտաքին նկարագիրով չի՛ կրնար ըլլալ հաստատութենական բնոյթ կրող նստըւածք մը մարդկային ընկերութեան մէջ. ընդհակառակը, Քրիստոնէութիւնն ալ իր ընկերային խորքին մէջ ուրիշ բան չէր, եթէ ոչ հրէական քարացած դրուածքին դէմ հոգեւոր եւ կրօնա-բարոյական շարժում մը:

Հայ Եկեղեցւոյ բարենորոգութեան համար մեզի պէտք են նոր Մաշտոցներ, Ս. Սահակներ, Ագաթանգեղներ, Եսնիկներ, Դաւիթ Անյաղթներ, Եղիշէներ ու Կորիւններ, Շնորհալիներ ու Լամբրոնացիներ, Որոտնեցիներ ու Տաթեւացիներ, Գէորգ Դ.եր ու Խրիմեան Հայրիկներ, Վապգէն ու Գարեգին Ա. Կաթողիկոսներ:

Հայ Եկեղեցւոյ մէջ բարենորոգութեան շարժումը պէտք չունի՛ կրօնամոլ, աւանդապաշտ, նորութիւններ չհանդուժող, բնական վարգացումներու նկատմամբ թշնամական ոգի ցուցաբերող, շարունակ ողբացող, տրտնջացող, ապուրին մէջ մալ փնտրող, յոռետես ու ինքնահաւան տեսաբաններու, որոնց ապարդին պահպանողականութիւնը միմիայն մեկուսացումի եւ ինքնալճացումի կ'առաջնորդէ մեր Եկեղեցին:

Ընդհակառակը, Հայ Եկեղեցւոյ բարենորոգութեան շարժումը կարիքն ունի նախ գործին հաւատացողներու, արդիւնաշատ անհատականութիւններու, պայքարիլ գիտցող, վստահութիւն ներշնչող, որոշումներ առնելու քաջութիւն ունեցող, համարձակ, իրատես, առաջնորդելու կարողութեամբ լեցուն, շնորհալի (քարիվմա-

(38) Մատթ. ԻԲ, 32:

թիք) ու տեսլապաշտ եկեղեցական եւ աշխարհական գործիչներու:

Պէտք է բարենորոգուի՝ Հայ Եկեղեցին: Չհասնինք հոն, որ մեր ժողովուրդի պաւակները ստիպուած ըլլան որդեգրելու յոյն դասական իմաստուններէն Դիոգինէսի մը փիլիսոփայութիւնը: Այս իմաստասէրն էր որ հրաժարած էր նիւթական բոլոր այն ստացուածքներէն, որոնց կարիքը ինք չունէր: Ան ջուր խմելու համար իր քով պահած էր ընդամէնը բաժակ մը: Պատահեցաւ, որ աղբիւրի մը մօտ կը տեսնէր պատանի մը, որ հոտող ջուրը իր ափով կը խմէր: Ասկէ զգաստանալով, Դիոգինէս, իր բաժակը քովէն հեռու նետեց ու ըսաւ. «Այլեւս ես քեզի պէտք չունիմ»:

Թող տուէք, Հայ Եկեղեցւոյ բարենորոգութեան մասին մեր համեստ առաջարկներն ու մտահոգութիւնները ելրափակել Երջանկայիշատակ Գարեգին Ա. Վեհափառ Կաթողիկոսի խոհուն մտածումներով, որոնք իբրեւ «Փակման Խօսք» արտասանուած են 1995 թուականի Ազգային-Եկեղեցական Ժողովի աւարտին.

«Բարեկարգութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ պէտք է ըլլայ մեր հեռակէտը, սեւեռակէտը, նշանակէտը, ինչ որ կ'ուզէք, ըսէք: Եւ բարեկարգութիւն կը նշանակէ Երուսաղէմի նախկին Պատրիարքներէն Թորգոմ Գուշակեան պայծառիմաստ մեծ Պատրիարքի բացատրութեամբ բարուք պահպանումը այն կարգին, որ կեանք է, ոչ թէ միայն կառոյց, այսինքն՝ Եկեղեցին բարեկարգել այնպէս, որ ան դառնայ սքանչելի մէկ ուժ, գործուն ներկայութիւն եւ կենսունակ ներգործութիւն մեր ժողովուրդի կարիքին համար: Թող իմ այս առաջին խօսքին վերջին բառերը ըլլան “աշխատինք վասն շինութեան եւ բարեկարգութեան Եկեղեցւոյս Հայաստանեայց եւ ազգիս Հայոց”»⁽³⁹⁾:

(39) Հմմտ. «Էջմիածին», ԾԲ տարի, Ապրիլ, 1995, էջ 64:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՆԺԱՄԱՆՅԵԼԻ ԱՐԺԷՔԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԿԵԱՆՔԻՆ ՄԷՋ

*«Քանպի հայր մեր պՍուրբ Աւետարանն գիտեմք,
եւ մայր՝ պԱռաքելական Եկեղեցի կաթողիկէ»։ (Եղիշէ)*

Ա. ՓԱՌԱԻՈՐ ԱՆՑԵԱԼ ՄԸ

21-րդ դարը, ժամանակի տեւողութեան եւ ըմբռնումին մէջ փոքրիկ ակնթարթի մը նմանող ընդամէնը չորս ամիսներու կարճատեւ հոսքէն ետք, մարդկային պատմութեան եւ մշակութային կեանքին պիտի արձանագրուի իր բնորոշ 2 0 0 1 թուանշանով: Տարեգրութիւն մը, որ իր մասնաւոր շողարձակումով այնքան իմաստալից եւ կարեւոր պիտի դառնայ համաքրիստոնէական եւ յատկապէս մեր ազգային կեանքի պատմութեան մէջ, վասնպիսի հայ ժողովուրդը՝ ի Հայաստան եւ ի Սփիւռս աշխարհի պատկառելի շուքով մը պիտի անդրադառնայ Հայաստանի մէջ Քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700-ամեակին:

Արդարեւ, քրիստոնէայ ժողովուրդներու բազմամտական ընտանիքին մէջ եւ ընդհանրապէս հոգեւոր-մշակութային կեանքի մը ենթահողին վրայ, հայ ժողովուրդը կը հանդիսանայ առաջինը, որ պետական հեղինակաւոր որոշումով մը իր հոգին ամբողջապէս բացած է Աւետարանի լոյսին:

Քրիստոսէ ետք 301-ը Հայոց դարձի թուականն է: Տրդատ Գ. ընդունելով Քրիստոնէութիւնը, Մկրդ-

տութեան Ս. Խորհուրդը կը ստանայ ձեռամբ Գրիգոր Պարթևի. մեր պատմութան մէջ դարագլուխ կազմող լուսապակ անհատականութիւն մը, որուն մեր ժողովուրդը իբրեւ գերագոյն յարգանք եւ երախտիք շնորհած է «Լուսաւորիչ» պատուանունը:

Որքան ալ գիտական վարկածներ Հայոց Քրիստոնէութեան դարձի վերոյիշեալ 301 թուականը տարութերել փորձեն, միեւնոյնն է, հայը առաջինն է, որ հեթանոսական փլատակներուն վրայ յաղթանակող նոր կրօնքը ճանչցած է պետական պաշտօնական եւ ամբողջական կշռոյթով մը:

Այս փաստը սակայն առիթ մը չէ ազգային մասպարծութեան. ընդհակառակը՝ այն կարելոր ապդակ մըն է անգամ մը եւս ճանչնալու եւ գնահատելու հոգեւոր-մշակութային այն մնայուն առաքելութիւնը, որուն անունը Հայաստանեայց Եկեղեցի է:

Եկեղեցին ծնունդն է քրիստոնէական հաւատքին եւ վարդապետութեան: Հայ Եկեղեցին, սակայն, հոգեւոր-մշակութային գերագոյն արգասիքն է հայ ժողովուրդին: Անոր ստեղծումը պարզ դիպում մը չէ. այլ՝ պատմական անհրաժեշտութիւն մը՝ պայմանաւորուած քաղաքական, հոգեւոր-մշակութային, ընկերային եւ հասարակական կեանքի խաչաձեւումներով:

Այս երեւոյթին մէջ արդէն սաղմնաւորուած է անոր գոյութենական առանձնայատուկ արժէքը հայ ժողովուրդի պատմութեան մերթ այնքան օրհասական ալեկոծումներուն մէջ, ներկայի դժուարին մարտահրաւէրներուն դիմաց եւ ապագայի լուսաժպիտ հորիզոններուն վրայ:

Հեթանոս հայուն ազգային նկարագիրը պայծառ ու ցայտուն գիծերով չի ներկայանար պատմութեան թանձր մշուշին մէջ: Իր ընկերային եւ քաղաքական

դրուածքը կուռ եւ համատարր յօրինուածք մը չունի: Իր շրջակայքի աշխարհակալ տէրութիւններուն համեմատութեամբ ան Վուրկ է ռազմիկ եւ տիրակալ ցեղի մը նշանակելի կարողութիւններէն, որոնք գերապանցապէս պայմանաւորուած են կենսավայրին աշխարհագրական աննպաստ պայմաններուն բնական բերումով:

Հայը, ինչպէս բնութագրած է Քերթոզահայր Խորենացին, «ածու փոքր, թիով շատ սահմանափակ եւ զօրութեամբ տկար» եղած է, որ թէպէտ բազմիցս նըւաճուած է տիրակալ պետութիւններու կողմէ, սակայն մարդկային քաղաքակրթութեան եւ մշակութային գանձարանին ընծայաբերած է իր ինքնայատուկ եւ հարուստ ներդրումները, որոնք, յիրաւի՛, «արժանի են գրոյ յիշատակի»:

Մատենագրական հազիւ թէ քանի մը պատանիկներ կ'անդրադառնան հեթանոս հայուն բանահիւսական բարձր ճաշակին: Ան ընդհանրապէս չունենալով սեփական գիր, չէ կրցած ներկայանալ մըտաւոր կեանքի բարձր թռիչքներով, ստեղծագործելով ուրոյն գրականութիւն եւ կերտելով պատմութիւն մը, որոնք ազգային գաղափարախօսութեան խորիսիւր կը կապմեն:

Նախաքրիստոնէական շրջաններուն ստոյգ է թէ պետական եւ քաղաքականապէս յաջող հանգրուաններ ունեցած ենք, որոնց գագաթնակէտը կը կապմէ Մեծն Տիգրան. բայց այնքան վաղանցիկ շրջափայլումներով, որ իցիւ թէ նշմարելի ըլլային ընդհանուր ազգաց պատմութեան թատերաբեմին վրայ:

Քրիստոնէութիւնն էր որ ամուր դրոշմ մը տուաւ մեր ազգային նկարագրին, գիտակցական վարթումով մը շեշտեց մեր ցեղային անհատականութիւնը, բարեբաստիկ իթան դարձաւ այբուբենի եւ գրակա-

նութեան ստեղծումին, հելլենական եւ սեմական մշակոյթներուն կոթողային գործերու բազմարդին թարգմանութիւններով պատուաստեց մեր ստեղծագործ հանճարին առողջ սաղմերը, անհամեմատելիօրէն ընդլայնեց մեր աշխարհահայեացքը՝ ազգային խոսքի անդաստանը ոռոգելով առանձնայատուկ ու բարեբեր կենսափիլիսոփայութեամբ, եւ, ի վերջոյ, կեանքի այս նոր արեւելումն էր որ գարնանային թարմ շունչով արգասաւորեց մեր երեւակայութիւնը՝ առաջացնելու մտաւոր կեանք ու կերտելու համար սեփական պատմութիւն. ահաւասիկ հոգեւոր, մշակութային, քաղաքական եւ ընկերային կեանքի հիմնական ազդակներ, որոնց միաձուլումով միայն կոփուեցաւ մեր ազգային գաղափարախօսութեան ոսկեձոյլ խարիսխը:

Արդարեւ, Ե. դարը, որ մեր մշակոյթի պատմութեան Ոսկեդարը կը հանդիսանայ, իր հոգեմտաւոր երկունքին մէջ միաժամանակ ծնունդ տուաւ Հայոց ազգային գաղափարախօսութեան. մինչ այդ էական պակաս մը՝ Կորս գերականցապէս ամբողջացաւ Հայաստան աշխարհի Քրիստոնէութեան դարձով. ըսքանչելի կերտուածք մը, որուն սաղմերը իր ծնունդէն դէռ 150 տարիներ առաջ ամբողջապէս շաղախուած էին Աւետարանի լոյսով:

Եթէ Հայաստան աշխարհի դիրքը սահմանափակուած մնար միայն իր կրօնական ոլորտին մէջ, եթէ Եկեղեցին չընդէլուկուէր պետական-քաղաքական ու ազգային-հասարակական կեանքի դրուածքին հետ, եթէ ան իր հոգեւոր-մշակութային սպրումի հրաքորբ քուրային մէջ, թէկուզ իր ծիսական առօրեային մեկնելով չստեղծէր անհրաժէշտութիւնը Հայոց Այբուբենի հրաշակերտումին, Աստուածաշունչի հայերէն եւ հայատառ թարգմանութեան, ու չկոփէր Հայոց ազգային գաղափարախօսութիւնը, քաղաքա-

կան, կրօնական ու մտաւորական ոչ մէկ իրական ուժ պիտի կարենար ապահովել մեր գոյութիւնը Բիւզանդական, Սասանեան եւ հետագային Արաբական տիրապետութեանց կապմալուծող բեռին տակ:

Ազգային այս գաղափարախօսութիւնը ամբողջապէս իր կուռ եւ պերճախօս արտայայտութիւնը գտաւ Վարդանանց Պատերապմին՝ «Վասն Յիսուսի, վասն Հայրենեաց» կարգախօսին մէջ:

Քաջն Վարդան եւ իր լուսապսակ զինակիցները, ամենալայն մասնակցութեամբը հոգեւոր եւ աշխարհիկ զանգուածներու, այս գաղափարախօսութեան դարբնած պողպատեայ վահանով գացին նահատակութեան ընդառաջ, իրենց «Վարդագոյն արեամբ պսակեցին եկեղեցին», ու ընծայեցին անոր խիստ բնորոշ ազգային եւ ժորովրդավարական դիմագիծ մը:

Հոգեւորը չկաշկանդեց ազգային վարթօնքը, իսկ ազգայինն ալ չխաթարեց զուտ հոգեւոր-կրօնականին առաքելութիւնը հայ իրականութեան մէջ. ընդհակառակը, մարմին եւ հոգի փոխյարաբերութեան մը ներդաշնակ դրսեւորումը իր բարձրագոյն համադրումը գտաւ հայ կեանքին եւ պատմութեան մէջ. իրողութիւն մը, որ այնքան գեղեցիկ պատկերաւորումով արտայայտած է Երջանկայիշատակ Գարեգին Ա. Կաթողիկոս:

«Մեր Եկեղեցին հոգին եղած է մեր ժողովուրդին, ու ժողովուրդը, իր կարգին, մարմինն անոր: Առանց առաջնոյն, երկրորդն՝ անատակ կեանքի: Առանց վերջնոյն, առաջինը՝ անընդունակ ստեղծագործութեան: Հայութիւնը՝ ծնունդ երկուքին ներդաշնակութեան»:

Հայ Եկեղեցին կրօնական պարզ ժողովարան մը չէ մեզի համար, այլ ազգային ամենամուխրական տաճար մը, միեւնոյն ատեն՝ պաշտամունքի եւ մշա-

կոյթի պանթեոնն մը, ուր խտացած է մեր դարաւոր կեանքը իր բոլոր իրադարձութեանց օղակաւորումներով: Հայը ձիգ դարերու եւ ժամանակի մերթ արգասաբեր եւ մերթ հողմածուփ յորձանքին մէջ, իբրեւ անկապտելի շտեմարան, իր ազգային Եկեղեցիին մէջ ամբարած է իր աւանդութեանց եւ արեւելեան մշակոյթին ամբողջ ճոխութիւնը՝ իմաստասիրութիւն, ինքնուրոյն աստուածաբանութիւն, մասնաւոր լեզունամտածողութիւն, գրականութիւն, ժամանակագրութիւն, պատմութիւն, ճարտարագիտութիւն, երաժշտութիւն, նկարչութիւն, եւ այլն:

Թերեւս չենք ունեցած Պարսիկին հպօրութիւնը, Հռոմին մեծութիւնը, Արաբին հարստութիւնը, ոչ ալ Հելլենին հանճարը, սակայն առաջինը եղած ենք էսպէս ըմբռնելու Քրիստոնէութեան ոգին, խորապէս գնահատելու անոր բարոյական դրուածքին վեհութիւնը, համակ նուիրուելու անոր փրկարար եւ կենսատու Խորհուրդին անբացատրելի տրամաբանութեանը, ընդհուպ, բիւրաւոր մարտիրոսներու թափած սրբասուրբ արեամբ եւ վկայողական նահատակութեանց ամենաթանկ գինով բարձր բռնած ենք քրիստոնէական հաւատամքին ջահը Փոքր Ասիոյ այլակրօն եւ յաճախ բիրտ միջավայրին մէջ:

Բռնակալութեան շատ մըրիկներ յուլած են մեր աշխարհը, պատմութեան մահաշունչ հովերը գորշ անպերով մթագնած են Հայոց կապոյտ եւ ջինջ երկնակամարը, վաշկատուն ցեղեր եւ նուաճող ազգեր իրենց բիր նիպակներն ու տէգերը խրած են հայ ժողովուրդի արինաքամ սրտին մէջ, մահ ու անարժեք յուրոցքով խուժած եւ ասպատակած են անոնք մեր երկիրը, արինսի եւ արցունքի անհամար վտակներ ոռոգած են մեր հայրենի հողը: Եկեղեցին այդ բոլոր ճգնաժամերուն մէջ գորովագութ մօր մը քնքոյշ բազուկներով ջանացած է սփոփել եւ

վերստին համախմբել իր վարատական հօտը. կամ յողմայոյ վոթորիկներէ դէպի անծանօթ հորիպոններ քշուող հայուն, թէկուզ օտար երկինքներու տակ, իր հայածէս եւ վեհացնող արարողութեամբ ան դարձած է միւսիթարութեան մշտադալար ովասիս մը, միեւնոյն առեն՝ իր հայեցի ինքնութիւնը պահպանելու հոգեւոր եւ իմացական պօրեղ պրահահանդերձ մը՝ ըՍփիւռքի համայնակուլ ափերուն վրայ:

Ընկերային եւ քաղաքական ոչ մէկ ուժ կրնայ հայուն յարատեւօրէն եւ մնայուն, 1700 տարիներու փառաւոր ու հնամենի անցեալով մը իր աւանդութեանց, հողին ու ազգային արմատներուն կապել այնպէս, որքա՛ն Եկեղեցին, իր նուիրագործած ոսկեղնիկ լեպուով, հրաշակերտած Այբուբենով եւ հոգեթով աղօթքներով. գոյութենական արժէքներ, որոնք հայ ինքնութեան ոսկի կոթողը կը հանդիսանան:

Մեր նախահայրերը Հայ Եկեղեցիին ընդմէջէն կը խօսին մեր սրտին, մեր բիւրաւոր նահատակներու եւ սուրբերու պսակեալ շարքերը անոր արարողական տօնակարգին միջոցաւ է որ կը յայտնուին մեզի, ու մենք, հոգիի ամենաթրթռուն եւ նուիրական պզտումներով կը հաղորդուինք անոնց հետ, անոնց ոգեղինացած յիշատակներուն յոյսով բոցավառելու մեր յոյսը, անոնց քաջարի գործերով ներշնչուած գօտեպնդելու մեր անկոտրում կամքը, եւ անոնց ուխտին հաւատարմութեամբ վերանորոգուած՝ կեանքին յորձանքն ի վեր մղելու համար մեր դժուարին գոյապայքարը:

Դեռ երէկ, Եղեռնի եւ Յեղասպանութեան դժընդակ տարիներուն, մահուան ճիրաններէն մապապուրծ, վտարանդի իրենց պապենական հողերէն, մեր հայրերը իրենց արժաթով ու ոսկիով փրկութեան առագաստ չբացին դէպի Սփիւռքի ասպնջական ա-

փերը՝ Արեւելքէն մինչեւ Արեւմուտք: Անոնք իրենց հոգիին մէջ կը կրէին այն անկապտելի գանձը՝ որ Հայաստանեայց Եկեղեցի կը կոչուի: Անոր հիմերը հաստատուած են ո՛չ թէ երկրի, այլ հայութեան սրբտին մէջ՝ որպէս սրբութիւն, ինքնութիւն եւ հաւաքական գիտակցութիւն:

Քրիստոնէութիւնը ապատութեան կրօնքն է: Ան մարդ արարածը հողանիւթ, իր մանուկ Յիսուսին Խորհուրդով, աստուածամանութեան արժէքին կը բարձրացնէ ու ատով իսկ մարդոց մէջ հաւասարութեան սկզբունքը կը հիմնէ: Ստրկանալու զգացումը խոտոր է հայու հպարտ բնութեան, քանզի ան քաջ գիտէ, թէ ինք իր Եկեղեցիին միջոցաւ ապատութեան կոչուած է: Այս իմաստով, Հայ Եկեղեցին դարեր շարունակ եղած է հայուն անկախութեան եւ ապատասիրութեան բուռն տենչին լիալիր յագուրդ տուող ներշնչարանը: Օտարին լուծը թօթափելու ի ինդիր մեր ազգային-ապատագրական գրեթէ բոլոր շարժումները՝ Վարդանանցէն մինչեւ Սարգսրապատ, անոր ծոցէն ծնունդ առնելով ձեւաւորուած են, Սրբազան Պատարագամատոյցին «Ապատութի՛ւն եղբարց մերոց գերելոց»-ով խրոխտացած են ու առաջնորդուած են անոր յաղթական ղօղանջներուն բուն բիւններով:

Կիլիկեան մեր վերջին պետականութեան անկումէն ետք, 1375 թուականին, Հայ Եկեղեցին իր կարելիքի զաւկունքը օտարին առողջ ախորժակէն պահպանելու յանձնատուութեամբ եւ բոլորանուէր սիրով յօժարած է ստանձնել ազգին բարոյական, ընկերային եւ քաղաքական ղեկավարութիւնը: Ան առաջնորդած է ազգին մահախուճապ նաւը դարերու փրփրակոծ եւ ամեհի կոհակներուն վրայ: Հայը ինչ որ ունի ազնիւ ու բարի իր էութեան խորը՝ անով յայտնագործած ու արտայայտած է:

Բ. ՆԵՐԿԱՅԻ ՄԱՐՏԱՀՐԱԻԷՐՆԵՐՈՒՆ ԴԻՄԱՑ

Ժամանակավրէպ է սակայն առաջնորդուիլ կոյր համոզումով եւ մնալ ամբողջապէս կաշկանդուած պզտականի ոլորտին մէջ՝ առանց իրատես անդրադարձի մը դէպի այսօրուան իրականութիւնը: Գեղօններ հիւսել անցեալի փառքերուն մասին՝ ապարդիւն է, երբ եկեղեցիին ճամբան առաւել քան երբեք փշալից է այժմ: Ժամանակներն ու մարդոց բարքերը փոխուած են հիմնովին: Գիտութիւնն ու ճարտարարուեստը յարաճուն յայտնագործումներով կեանքին ու կենցաղին մէջ փոխած, լուսաւորած եւ արտաքնապէս դիւրացուցած են շատ բան: Ընդհակառակը՝ այս աներեւակայելի ու բարեբեր նուաճումներուն զուգահեռ, մարդոց ընկերային-հասարակական կեանքի եւ յարաբերութեանց ծիրէն ներս ըստեղծուած են շատ մը անդամալուծող հակասութիւններ եւ բարդոյթներ: Երբեմնի բարիին, գեղեցիկին, հնամենիին ու աւանդականին համեմատութեամբը՝ մոլեգին ընթացքով ծայր առած է ընդհանրապէս կեանքի, պատմականի, բարոյականի եւ նուիրականի արժէքազրկում մը: Արժէք ունի՝ ան որ գին ունի, եւ անպայմանօրէն կապուած է եկամտաբեր շահի կամ նիւթական այլ բարիքներու հետ:

Քաղաքակրթութիւններ, մշակոյթներ, աշխարհահայեացքներ, ամբողջ ընկերութիւններ, ազգեր ու ժողովուրդներ շարժման մէջ են. հինը փոխարինուած է նորով: Յատկապէս Արեւմուտքի մէջ, լայն թափով սկսած է վարզանալ բազմազգ եւ բազմամշակութային դրուածք մը, որ իր համայնակուլ ձուլարանին մէջ կը սպառնայ կապմալուծել ու փոշիացնել ամէն ինչ որ ինքնուրոյն է, ինքնութիւն է, նուիրականացած անհատականութիւն է, ձուլելու համար իր նոր ընկերութիւնն ու անոր կուռքը՝ նոր մարդը: Մարդ, որ «ձերբապատուած» է գոյնի, ցեղի, մշակոյթի, կրօնի ու

ազգի պատկանելիութենէ:

Արդի եւ ժամանակակից մարդուն կրօնքը՝ տընտեսութիւնն է: Ներկայիս ոչ մէկ քաղաքական կամ ընկերային ուժ կրնայ դիմադրել անոր հրապոյրին: Մարդ արարածը այսուհետեւ արտադրութիւնն է տնտեսական յարաբերութիւններու, ո՛չ կրօնքի, ո՛չ բարոյականի, ո՛չ մշակոյթի, ո՛չ նկարագրի եւ ո՛չ ալ մարդկային ստեղծագործ համակեցութեան կամ կենցաղավարութեան: Ան է այսօր յաջողապէս գոյատեւելու միակ երաշխիքն ու գրաւականը՝ անհատ մարդոց, ընկերութիւններու, ազգերու եւ պետութիւններու:

Այս մարտահրաւէրներուն եւ ժամանակի հրամայականներուն դէմ յանդիման կը գտնուի նաեւ մեր Եկեղեցին: Էապէս եւ բազմակողմանի իմաստով փոխուող հասարակարգի մը մէջ՝ գրեթէ անկարելի է կառչած մնալ յաճախ իհատ սկզբունքային եւ վարդապետական հնաբոյր թուացող դրուածքներու: Եկեղեցիին բովանդակութիւնը եւ հաւատոյ պարունակութիւնը, որ մեծաւ մասամբ ծիսական-արարողական կեանքի մը միջոցաւ կը փոխանցուի, երբեմնի մոգական ուժը չունի պարզ ունկնդիրը շահելու իր հաւատացեալներու հետպիտէտ նօսրացող շարքերուն, վանսլի հիմնական տկարութիւն մը յառաջացած է հաղորդակցութեան մէջ: Ակամայ հակուած ենք դիտելու, թէ կարծէք հակոտնեայ երկու աշխարհներ կը հպին իրարու՝ Եկեղեցին եւ մարդը, առանց այդ հպումէն ստեղծել կարենալու իրական մերձեցում մը կամ արգասաբեր հանդիպում մը: Եկեղեցին հաղորդակից չէ արդի մարդուն:

Հաղորդակցութեան այս պակասը շատ աւելի ծանր ձեւով արտայայտուած է վաղուան ընկերութիւնը կազմող այսօրուան երիտասարդութեան եւ Եկեղեցի փոխ-յարաբերութեանց մէջ: Արդի երիտա-

սարդը իւրացուցած է այլ լեզուամտածողութիւն մը, պարգացուցած է արժէքներ գնահատելու այլ մօտեցում մը, որդեգրած է ուրիշ խորհելակերպ մը եւ իր անձնական ու հասարակական կեանքին մէջ ընդունած է կեանքի այնպիսի նպատակներ, որոնք անպայմանօրէն յարիր չեն Եւեղեցւոյ հրամցուցածներուն: Հետեւաբար, ժամանակակից երիտասարդութեան բարոյական համանուագը կամ ժողովածուն, այլ խօսքով՝ իր «Տանաբանեայ Պատուիրանները» նոյնպէս տարբեր են եւ բոլորովին այն չէ, ինչ որ կը փորձէ տալ իրեն Եկեղեցին:

Գաղափարներ, ինչպէս՝ «համակարգիչ», «համակարգիչային խաղեր», «համացանց – էնթերնէթ», «է-փոստ – ի-մէյլ», «բջջային հեռախօս», «նորաձեւութիւն», «փօփ-երաժշտութիւն», «հեռուստացոյց», «հեռուստագնում – թելեշոփինկ», «հեռուստաշուկայավարում – թելեմարքեթինկ», «տեսաերիպ», «տեսախցիկ», «գովապղ», «սեռայնութիւն – սեքս», «մարզական – սպորտ», «ֆութպօլ». ահաւասիկ այս եւ նման բազմաթիւ ըմբռնումներ շատ աւելի հաղորդակից ու հասկնալի է արդի երիտասարդութեանը, քան՝ դասական-կրօնական այնպիսի մտածումներ, անուններ, արտայայտութիւններ, գաղափարներ կամ ըմբռնումներ, որոնց իմաստային խորքը օտարացած են իրեն կամ այլեւս ոչինչ կ'ըսեն իր առօրեային. օրինակ՝ «Հայր Աստուած», «Որդի Աստուծոյ», «Սուրբ Հոգի», «Ամենասուրբ Երրորդութիւն», «Յիսուս Քրիստոս՝ Փրկիչ աշխարհի», «Անարատ Յղութիւն», «Մարիամ Աստուածածին», «Աստուածամայր», «Վերափոխում», «Պայծառակերպութիւն», «Առաքեալ», «Աստուածաշունչ», «Ս. Աւետարան», «Ծաղկապարդ», «Աւագ Շաբաթ», «Չարչարանաց Խորհուրդ», «Փրկագործութեան Խորհուրդ», «Յարութիւն», «Համբարձում», «Հոգեգալուստ», «Ս. Հա-

դորդութիւն», «մեղք», «մեղանշականութիւն», «Ա-
ղանական մեղք», «եօթը մոլութիւններ եւ եօթ առա-
քինութիւններ», «քաւութիւն», «դժոխք», «սատա-
նայ», «Յայտնութիւն», «Երկրող Գայուստ», «Վերջին
Դատաստան», եւ այլն:

Այսօրուան ընկերութեան եւ պետական աշխար-
հիկացած(*) դրուածքի Եկեղեցիին ուղղուած հիմնա-
կան դժուարութիւններէն մին՝ կրօնքը անհատական
մօտեցումի կամ ամբողջապէս անձնական հետա-
քրքրութեանց ծիրին մէջ սահմանափակելն է: Ան
արդի ընկերային կառոյցին մէջ չի ներկայացներ հա-
ւաքական կեանքին եւ գիտակցութեան մաս կապմող
հոգեւոր-բարոյական այն անհրաժեշտութիւնը, որուն
շուրջ համախմբուած պիտի ըլլար հասարակական
կենցաղը: Կրօնքը թերեւս կը վերաբերի անհատ
մարդուն, բայց ո՛չ ընդհանուրին. ժամանակին կար-
գախօսը ա՛յս է: Արեւմտեան քաղաքակրթութիւնը Ե-
կեղեցիին ձեռքէն վաղուց արդէն խլած է հասարա-
կութեան վրայ բարոյական սկզբունքներ, խղճի զգա-
ցում եւ կրօնաբոյր ապրումներ թելադրելու իրաւուն-
քը: Այսուհետեւ անհատը ի՛նք կ'որոշէ կրօնական եւ
ղաւանական իր պատկանելիութիւնը. պետական եւ
քաղաքացիական օրէնքը հիմնովին անոր կը վերա-
պահէ ըլլալու ընդհանրապէս անաստուած, անկրօն
կամ ընդունելու բոլորովին այլ սկզբունք մը:

Աշխարհիկացած այս մտայնութիւնը ամենա-
սուր կերպով արտայայտուած է կրթական մարզին
մէջ, երբ հանրային դպրոցական եւ ուսումնական
ծրագրէն ներս կրօնքի դասաւանդումը միանգամայն
վանց առնուած է կամ աշակերտը ապատ ձգուած է
որոշելու կրօնքի պահերուն մասնակցիլ թէ ոչ:

Հոս է որ Եկեղեցիին կը գտնուի հիմնական եւ

(*) Աշխարհավար, *secular, laïque*

լուրջ խոչընդոտի մը առջեւ, վասնպի վաղուան սերունդը կը պատրաստուի հիմնովին աշխարհիկացած հոգեբանութեամբ եւ գիտելիքներով, որոնք էական աղերս չունին Եկեղեցիին ու կրօնքին հետ:

Եթէ կարելի չէ պետական կրթական ծրագրին մէջ պարտաւորիչ դարձնել կրօնական գիտելիքներուն դասաւանդումը հասարակական դպրոցներէն ներս, ապա քաղաքացիական օրէնքներու «ապատ» դրուածքին բերումով, Եկեղեցին եւս կրնայ իրաւունք վերապահել ունենալու ուղղակի իր կողմէ ղեկավարուող, իր անմիջական հովանաւորութիւնը վայելող կրթական անձնական հաստատութիւններ կամ օժանդակելու կրթական համակարգ մը, ուր աշխարհիկ առարկաներուն կից շեշտուած պիտի ըլլայ նաեւ կրօնքին ուսուցումը:

Այս կարելիութիւնը ամօքիչ սպեղանի մը կրնայ ըլլալ Եկեղեցիին մարմնոյն վրայ բացուած կոտուացող վէրքին, որով ան եթէ ոչ լայն հանրութեանը, ապա ընկերային-հասարակակալ կեանքին մէջ հոգեւոր-կրօնական ուսում ջամբելով որոշակի հաւաքականութեան մը՝ Աւետարանին բերած թօխմորին գեղեցիկ օրինակով, հոգեւոր-բարոյական չափանիշերու եւ արժէքներու կեանքին կը շաղախէ խմորի այն մեծ զանգուածը, որ կը կոչուի ժամանակակից հասարակութիւն:

Հայաստանեայց մեր Եկեղեցին սոյն հնարաւորութիւնը կրնայ իրագործել Հայաստանի միջավայրին մէջ, ցորչափ որ մեր պետութիւնը արեւմտեան երկիրներու որդեգրած օրինական-սահմանադրական դրոյթներուն հետեւելով, կը յամենայ իր երկրի կրթական մարզին մէջ բերել հեղինակաւոր օրէնք մը՝ ի նպաստ Եկեղեցւոյ եւ կրօնքի դասաւանդումին:

Արդ, որքան ալ ներքին համոզում մը գոյացուցած ըլլանք, թէ 1700 տարիներու առաքելական փա-

ռահեղ անցեալի մը պասկը կրող մեր Եկեղեցին «Թերի չէ իր հաւատքով՝ որ լրացուի, եւ ոչ ալ հինգած է՝ որ նորոգուի», այսուհանդերձ, միամտութիւն է կարծել թէ Եկեղեցին մշտապէս կրնայ մնալ իր երբեմնի գաղափարախօսական եւ բարոյական բարձրութեան վրայ, իր դրական դերովն ու կենսապօրութեամբը, առանց թարմացնելու եւ վերանորոգելու իր ներքին ուժերը:

Գ. ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄԸ ԷԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՔ

Ստոյգ է, որ Առաքելական շրջանի եւ այսօրուան Եկեղեցին նոյնը չէ եւ չի ալ կրնար ըլլալ: Ինքն իր մէջ չպարզացող որեւէ մէկ հաստատութիւն, միեւնո՛յն է, աստուածային թէ մարդկային, որ ճկունութեամբ եւ հեռանկատ իմաստութեամբ չի յարմարիր ժամանակի եւ կեանքի փոփոխութիւններուն, հասարակարգին եւ ըկերութեան հետ որուն մէջ ինք կը գտնուի, չ'ապրիր այն վարգացումը զորս կը պահանջուի, հետպիտէ ու ինքնըստինքեան մեկուսացումի եւ մահուան կը դատապարտուի:

Եկեղեցիին բարեկարգումը էական պահանջք է: Կարշիլ իբրեւ թէ աւանդական սկզբունքներու եւ ժամանակի բնական հոսքին դէմ ստեղծել պահպանողական ուղղութիւն մը՝ նոյնիսկ վնասակար է. վանալի յառաջդիմութեան կասեցումը տկարութեան եւ անկարողութեան նշան է, որ կ'ընդարմացնէ Եկեղեցիին աշխոյժ եւ կենսահաղորդ կեանքը ու զինք կը զրկէ մարդկային հասարակութեան մէջ կեանքը Տիրոջ ներկայութեամբ իմաստաւորող եւ Անոր փրկարար Խորհուրդին մասին վկայութիւն տուող իր հիմնական առաքելութենէն:

Աղանդաւորներու եւ աղանդաւորական շարժումներու բազմացումը իրենց բոլոր երանգաւո-

րումներով, Եհովայի Վկաներին մինչեւ Մունականներուն ներխուժումը Եկեղեցւոյ դաշտին ներս, պատահական չէ, եւ սիսալ է այս երեւոյթը վերագրել միմիայն ներկայի քաղաքական եւ տնտեսական ճրգնաժամերուն: Աղանդաւորներու բազմացումը նաեւ եկեղեցւոյ գործօն ներկայութեան պակասը եւ իր կղերին անլուծինը կը մատնանշէ:

Եկեղեցին իր հոգեւորականաց դասով եւ աշխարհականաց լայն մասնակցութեամբ պէտք է իր կարեկցող, օգնող եւ բարեգործ հեղինակութիւնը զգալի դարձնէ ընկերային կեանքի բոլոր բնագաւառներուն մէջ:

Այսօրուան կրօնքը միայն ներհայեցողականը չէ, այլ նաեւ գերապանցապէս գործնական-հովուականն է: Հովուական չի նշանակեր ծուխի մը ընդամէնը ծիսական-արարողական պահանջքները գոհացնել: Բառն ինքնըստինքեան կը յուշէ արդէն, որ խօսքը՝ հօտը պահելու, պահպանելու, ինսամելու, վարգացրնելու եւ, ի վերջոյ, առաջնորդելու մասին է:

Եկեղեցին պէտք է իր նուիրապետական եւ ծիսական դրուածքով բացուի դէպի մեր ընկերութեան եւ հասարակարգի բոլոր շերտերը: Եկեղեցւոյ նուիրապետութիւնը իր հեղինակութիւնը թէ՛ Եկեղեցին եւ թէ՛ մարդկային ընկերութեան մէջ կրնայ դրականապէս արդիւնաւորել միայն ծառայութեան ճամբով, զոր գերապանցապէս ուղղուած պէտք է ըլլայ դէպի մարդոց առօրեայ կեանքը՝ իր ընկերային-հասարակական, նիւթական-բարոյական, հոգեկան եւ ֆիզիքական բոլոր ոլորտներով:

Տնտեսութեան պարտադրող համընդհանրացումի(*) եւ աղանդաւորներու քայքայիչ գործունէութեան դէմ, այսօրուան կրօնքին մեծագոյն դերը պի-

(*) *Globalisation*

տի ըլլայ՝ Եկեղեցւոյ ծառայասիրութիւնը ուղղել ամբողջապէս իր հօտի ջղուտ առօրեային՝ գործապրկութեան, աղքատութեան, հիւանդութեան, բարոյական անկումներու, արտագաղթի, վաղուան գորշութեան, երկրի ու պետութեան ապագային հանդէպ ստեղծուած համատարած անվստահութեան, նոր սերունդի դաստիարակութեան եւ այլ մարպերուն մէջ:

Եկեղեցիին նուիրապետութիւնը, իր նիւթական եւ բարոյական կարելութիւններէն որքան ալ մեծ միջոցներ յատկացնէ կղերականաց նոր սերունդներ հասցնելու գործին, իցիւ թէ կարենայ արձանագրել այն բարեբեր արդիւնքը, զոր ստոյգ պիտի ունենայ, եթէ երբեք իր գործունէութեան եւ մասնաւոր առաքելութեան դաշտին մէջ համապատասխան տուչութեամբ մը ներգրաւէ աշխարհական տարրը:

Այս պարագային, տուչութեան կամ Եկեղեցւոյ անունով լիափօրուած ըլլալու պահը կարելոր պիտի նկատուի, որպէսպի Եկեղեցւոյ եւ իր աշխարհական տարրի միջեւ ծառայական սերտ կապը, որ տրամադրուած է ընկերային հասարակարգին, նաեւ իր հոգեւոր եւ գաղափարախօսական լեցուն արտայայտութիւնը գտնէ Քրիստոսի Անձին եւ Իր հաստատած Փրկագործական Խորհուրդին մէջ:

Բարեգործութիւնը եւ ընկերային հասարակարգին մէջ գործօն դեր ունենալը մեր Եկեղեցւոյ կարելորագոյն նուաճումներէն մին եղած է Դ. դարուն, Մեծն Ներսէս Հայրապետի կաթողիկոսութեան օրերուն: Եթէ Եկեղեցին, տակաւին այդ վաղ ժամանակաշրջանին, Հայաստանի ընկերային-հասարակական կեանքին մէջ յաջողապէս կապմակերպած չըլլար իր բարեգործական հաստատութիւնները, հիւանդանոցները, ծերանոցները, անկելանոցները, աղքատահնամար եւ ընդհանրապէս ձեռք չմեկնէր ընկերային կեանքին լուսանցքը մղուած մարդոց, դժուար թէ ըն-

դամէնը դար մը տեւող այդ կարճ ժամանակամիջոցի ընթացքին, Քրիստոնէութիւնը իր արմատները հայ սրտին եւ մշակոյթին մէջ այնպէ՛ս խոր ու ամուր տարածած, իսկ իր տունկը հեթանոս հողին վրայ այնպիսի՛ ճոխութեամբ ընձիւղած ըլլար, որ քիչ ետք, Սասաններու բռնի կրօնափոխութեան դէմ ազգովին ըմբոստանար, եւ ի խնդիր քրիստոնէական հաւատքին եւ ինքնութեան պաշտպանութեան յանձնատու ըլլար նահատակութեան:

Եկեղեցին իր ընդերքին խորերը կը պահէ իր հաւատքին անաղարտ պաշարը, որ միշտ կրնայ բռիսիլ իր Ս. Աւետարանի եւ առաքելութեան զուլալ ակունքէն: Որքան ալ բարդացած թուի այսօրուան կեանքը իր նիւթական պայմանաւորուածութիւններով, եւ ինչքան ալ խրթին ու պատասխանատու ըլլան վաղուան մարտահրաւէրները, ան իր հոգեւոր պարունակին մէջ կրնայ մշտանորոգ կենսունակութեամբ վերստեղծել այն ուժականութիւնը՝ կրել կարենալու համար նաեւ այս եւ գալիք ժամանակներուն բերած ծանրածանր խաչերը, ի խնդիր մարդկային ընկերութեան մէջ աստուածային շունչի ներկայութեան, հոգեւոր եւ բարոյական դրուածքի, խղճի եւ սրբաբոյր ապրումներու պահպանութեան:

Արդարեւ, հոս է որ Եկեղեցին իր հոգեւորական եւ աշխարհական սպասաւորներու գիտակից, հաւաքական եւ ծառայողական առաքելութեամբ, իր յուսադրիչ ներկայութիւնը եւ իր հոգեւոր-բարոյական հեղինակութիւնը հրամայական եւ նոյնիսկ անփոխարինելի պիտի դարձնէ հոն՝ ուր տնտեսական եւ քաղաքական բարօրութիւնը ընկրկած է, խիղճին ձայնը մարդոց սիրտերուն մէջ տկարացած է, հաւատքին թռիչքը խոնարհիլ, սիրոյ հուրը անթեղել եւ յոյսին յոյսը դէպի վաղուան բոցավառ արշալոյսը աղօտիլ սկսած են:

Ո՛չ այլ մարդակերտ հաստատութիւն մը, այլ մեր միաժնաէջ եւ աստուածակառոյց, մեր տառապած, մարտիրոսացած, հաւատքի բազում վկայութիւններով պասկուած, ազգի լուսոյ խորան Եկեղեցիին է սեպուհ պարտականութիւնը, իր կենսայորդ երակներէն անուցանել իր հայկազուն հօտը այն երկնային եւ հոգեւոր անունդով, որով այսօրուան անկարելին վաղը կը դառնայ կարելի, աներեւակայելին՝ երեւակայելի, իսկ անհաւատալին՝ ստոյգ իրականութիւն:

Իր ծառայասիրական կեանքին մէջ, անցեալի փառապանծ իրագործումներուն եւ երրորդ հազարամեակի մարտահրաւերներուն ընդառաջ գացող մեր Եկեղեցին, իր հոգեւորական եւ աշխարհական ուժերուն անխտիր եւ հաւասար մասնակցութեամբ, կրնայ ներթափանցել մարդոց առօրեային մէջ, ու անոնց ծանր մտահոգութեանց սեղանին դնել վերապարթօնք ապրող եւ հիներուն մէջ միշտ նոր իր կոչումն ու դիմագիծը՝ իբրեւ ազգային ինքնութեան խարիսի, միամնութեան ռահվիրայ, հոգեւոր գերագոյն արժէք, բարոյական հեղինակութիւն եւ ապագայի մթութեան մէջ փարոս մը ստոյգ կողմնորոշումի:

Այսպէս, թող Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին, 1700 տարիներու անցեալի նուիրականութեան եւ սրբութեան բարձունքէն հսկէ Հայոց իր փոքր ածուին վրայ, ու մերթ նախանձախնդիր, մերթ խանդակաթ Սրբութեան Մայր՝ իր գոգը առաջնորդէ իր սիրատուն պաւակները:

ՏԱՌԱՊԻԼ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՎ, ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՒՆ ՀԵՏ ԵՒ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՒՆ ՀԱՄԱՐ

1. ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Գուցէ ոմանց տարօրինակ թուի յօդուածիս խորագիրը, եթէ նկատի ունենանք որ «տառապիլ» բայը արդի հայերէնի մէջ «նեղութիւն», «վիշտ», «անձկութիւն», «ցաւ» եւ «չարչարանք» կը նշանակէ: Նոյնպէս դասական հայերէնի մէջ՝ «տառապիլ» բայը հիմնականօրէն բացասական բովանդակութիւն ունի ու կը կիրառուի՝ «տառապանալ», «թշուառանալ», «նկուն լինել», «աշխատ լինել», «խոնարհիլ», «չարչարիլ», «կրել վնեղութիւն եւ վանձկութիւն», «հեծել» եւ այլ իմաստներով:

Կրօնական-Աստուածաշնչական ըմբռնողութեամբ սակայն, տառապանքը վերջնագոյն նախապայմանն է նոր հնարաւորութեանց ստեղծման: Երբ տառապող արդարի միտքն ու հոգին «ինչո՞ւ»ներու տարափ մը կը խուժէ, տառապանքին միակ արդարացունը կամ պատասխանը կ'ըլլայ՝ տառապողի հանդիպումը Աստուծոյ հետ կամ անոր փրկութիւնը:

Այստեղ կ'ուրվեմ ձեր ուշադրութիւնը սեւեռել դասական Կոյճ օրինակներու՝ Յոբ Երանելիի եւ Յիսուսի վրայ: Երկու պարագաներուն ալ տառապանքը կ'իմաստաւորուի սքանչելի “Theodicy”ով կամ «աստուածարդարացում»ով մը:

Բայց տառապանքը միայն անհատական չէ, այլ

նաեւ՝ հաւաքական: Իսրայէլ 40 տարի կը դեգերէր անապատին մէջ, ու տառապալից կ'որոնէր երկիրն աւետեաց եւ փրկութեան, անդ ապատութեան մէջ պաշտելու համար վԱտուած, ապատութեան մէջ ըլլալու համար լիարժէք մարդ՝ նմանատիպ Ատուծոյ, եւ հաւաքականութեան:

Աքսորի շրջանին նստած Եփրատի ափերուն, ան տառապալից անձկութեամբ կ'ուխտէր իր վերադարձը՝

*«...Թէ մոռացայց զքեզ Երուսաղէմ,
Մոռացի՛ զիս աջ իմ,
Կցեսցի լեզու իմ ի քիւս իմ թէ ո՛չ յիշեցից զքեզ.
Կցեսցի՛ թէ ոչ յիշեցից զքեզ...»* (Սաղմ. 137, 5)

մինչեւ որ Ելրաս՝ Օրէնքն ու Տապանակ Ուխտին իր ձեռքին, հայրենադարձներուն հետ ցնծութեամբ մուտք կը գործէ Երուսաղէմ, վերաշինելու Սողոմոնեան տաճարը՝ սելեռակէտը ապգի մը կրօնական ու պաշտամունքային կեանքի:

Հոն՝ ուր անտանելի կը դառնար կեանքը, հոն՝ ուր ի դերել կ'ելլէին բոլոր յոյսերը, հոն՝ ուր անելանելի կը թուէին բոլոր ճամբաները, անգոյութեան սահմանագիծին առջեւ ընկրկած մարդը, իր ցաւին ու տառապանքին, տուայտանքներուն ու որոնումներուն մէջ յանկարծ իր աղերսը, օգնութեան իր ողբաձայն կանչը կը բարձրացնէր առ Ատուած՝

«Տառապէաք եւ խնորհաք զքեզ Տէր».

եւ տե՛ս, կը ստանար Անկէ յուսացուած փրկութիւնը:

Հակասութեան խորհրդաւոր օրէնք: Մէկ կողմէն տառապանք, միւս կողմէն՝ փրկութիւն: Մահ եւ յարութիւն, որոնում եւ յայտնութիւն:

Ահաւասիկ, բովանդակային այս ենթահողին վըրայ, «տառապանք» բառը կը ստանայ նոր որակ ու երանգ, իմաստային խորք եւ ըմբռնողութեան այլ հորիզոն:

Այսպիսով, «տառապիլ»ը կը դառնայ ոչ միայն վերջնագոյն նախապայման մը նոր հնարաւորութեանց ստեղծման, այլ հոգեկան-բարոյական անհրաժեշտութիւն մը, քաթէկորիկ հրամայական մը՝ անելանելի թուացող վիճակի մը մէջ կերտելու նոր սկիզբ մը, լճացումի մէջ անգամ երկնելու նոր վերածնունդ մը. անշուշտ, եթէ երբեք ինդրոյ առարկայ հարցերուն չենք մօտենար մակերեսայնութեան ակնոցով ու չենք դիտեր զանոնք հարեւանցի, իբրեւ ժամանակավրէպ երեւոյթներ:

Անդրադառնալով Եկեղեցիին, նախ հաստատենք, որ Եկեղեցին «ի՛նչ» մը չէ, այլ՝ «ո՛վ» է: Մե՛նք ենք Եկեղեցին՝ ապրող ու շնչող: Մեր նախնեաց ստեղծած Ոսկեդարի գրականութեամբ եւ Աստուածաշունչի հայերէն թարգմանութեամբ՝ Հա՛յ Եկեղեցի: Մենք ծնած ենք այս Եկեղեցիին մէջ, եւ որքան ալ անմեղի, կարծէք, apriori ընկալուած իրականութիւն մըն է, այսուհանդերձ անոր ծնունդ տուողը մենք չենք, այլ ընդամէնը ժառանգորդներն ենք ազգային-կրօնական այս գերագոյն աւանդին, տառապած ու տառապող, վկայած ու վկայող Եկեղեցիի մը՝ անցեալի ու ներկայի մէջ: Ահա թէ ինչո՛ւ կը տառապինք Հայ Եկեղեցիով:

Կը տառապինք Հայ Եկեղեցիին հետ, քանզի նորէն մե՛նք ենք այդ Եկեղեցին. մեր աւապանի սուրբ մկրտութեամբ, որով անդամ դարձած ենք ի Քրիստոս հաւատացող այն Հաւաքին, որուն Հայ Եկեղեցի կ'ըսենք եւ ուրկէ կոչուած ենք նոյն Քրիստոսի Մարգարէութեան, Քահանայութեան եւ Թագաւորութեան պաշտօնին: Յորչափ որ միս-արիւն եւ մորթի անջնջելի գոյն դարձած է մեղի այս Եկեղեցիին ինքնութիւնը, կը տառապինք անոր հետ, որովհետեւ մե՛րն են անոր ցաւերն ու վիշտերը, հպատակումներն ու ընդվզումները, իյնալու եւ ապրելու փորձերը, ընդարմացումներն ու որոնումները, եւ ի վերջոյ, բա-

րեկարգուելու եւ վերածննդեան նոր շրջան մը սկսելու ձգտումները:

Եւ ճիշդ հո՛ւս կ'իմաստաւորուի տառապանքը Հայ Եկեղեցիին համար, վասնպի կը հաւատանք անոր պատմական առաքելութեան նաեւ ներկայի մէջ, կը հաւատանք անոր խորհրդաւոր ոյժին՝ մոխիրնետրէն որպէս փինիկ ծնելու, կեանք եւ յախտենականսէն բաժին բաշխելով իր հաւատացեալներուն:

2. ԵԿԵՂԵՑԻՆ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Եթէ պահ մը կանգ առնենք յունարէն Ecclesia գաղափարին վրայ, որ սովորաբար հայերէնի մէջ արտայայտուած է «Եկեղեցի» կամ «համայնք» հոմանիշ բառերով, պիտի տեսնենք թէ ան յունարէն Եօթանասնից (=LXX) թարգմանութեան մէջ հասկըցուած է իբրեւ Տիրոջ առջեւ համախմբուած Իսրայէլը՝ Աստուծոյ ընտրեալ ժողովուրդը, որ իր ծագումով յար եւ նման է Հելլէններու Polis հասկացողութեան, որպէս ժողովուրդին հաւաքը կամ համախմբումը: Եթէ նախնական Եկեղեցին ինքզինք իբրեւ Ecclesia կը ճանչնար, կ'որդեգրէր Աստուծոյ կողմէ ընտրուած ընկերային հասարակութիւն մը, ժողովուրդ մը ըլլալու հրէական գաղափարը, սակայն կը տարբերէր անկէ այն իրողութեամբ, որ սա փրկուած էր Քրիստոսի Փրկագործութեան Խորհուրդով ու Օրէնքի փոխան՝ այսուհետեւ կը հաւատար Յարուցեալ Տիրոջը:

Եկեղեցին, ուրեմն, իբրեւ Ecclesia՝ Տիրոջ առջեւ խմբուած համայնքն է, հաստատուած Քրիստոսի Փրկագործութեան Խորհուրդի կատարումով (= Խաչելութիւն, Յարութիւն, Համբարձում, վնասիլն ընդ Աջմէ Հօր), որ իր լրումին կը հասնի Հոգեգալստեան դէպքով:

Յիսուսի շուրջ հաւաքուած աշակերտներու հոյ-

լը դեռ մեր հասկցած Եկեղեցին չէ, ոչ ալ սրբոց այն դասը որ փրկուած է յաւիտենական ժամանակներու՝ Քրիստոսի Երկրորդ Գալստեան կամ Աստուծոյ Արքայութեան համար, որ վերջնականապէս պիտի գայ: Եկեղեցին՝ Քրիստոսի Փառաւորումին (= վնասիլն ընդ Աջմէ Հօր) ու անոր Երկրորդ Գալստեան միջեւ գտնուող իրականութիւնն է: Այլ խօսքով, ան ի Քրիստոս հաւատացողներու այն Ecclesiaն է, որ Ս. Հոգիի բաշխած առատաձիր շնորհներով առաջ կ'ընթանայ դէպի փրկութիւն:

Այս փաստը ինքնին ցոյց կու տայ արդէն, որ Եկեղեցին ունի սկիզբ մը, կ'ապրի պարգացում մը եւ պիտի ունենայ վախճան մը կամ կատարելութիւն մը՝ Քրիստոսի Երկրորդ Գալուստով: Քանի Եկեղեցին ժամանակի մէջ ապրող եւ պատմութեան հետ պարգացող ընկերային-հասարակական միաւոր մըն է, չի կրնար ըլլալ քարացած, անփոփոխ կառոյց մը՝ զուրկ պարգացումէ ու բարեկարգումներէ: Եթէ երբեք այդպէս ըլլար, Եկեղեցին վաղուց պէտք է որ լճացած կամ մեռած ըլլար, ինչպէս եղած է տիտուր ճակատագիրը ուրիշ հին կրօններու կամ կրօնական հասարակութիւններու: Հակառակ աւետարանական ճշմարտութիւններու մնայուն ու յաւիտենական բնոյթին, անշուշտ, այսօրուայ Եկեղեցին իր արտաքին կերպին մէջ նոյնը չէ, ինչ որ առաքելական դարերու Եկեղեցին էր, եւ հակառակը: Ժամանակի պարգացումը, մշակոյթներու եւ մտայնութեանց փոփոխութիւնները, ընկերային կեանքի բարեկարգումը Եկեղեցիին եւ նոյնիսկ Քրիստոնէութեան ու անոր վարդապետութեան մէջ փոփոխած կամ աւելցուցած են շատ բան, որ անձանօթ էին նախնական Եկեղեցիին: Այսպէս օրինակ՝ Դ. եւ Ե. դարերու, ինչպէս նաեւ հետագայ շրջանի քրիստոսաբանական վէճերը, Ս. Հոգիի ի Հօրէ թէ յՈրդւոյ բիւնան հարցերն ու վերջին շրջանի մարեմաբանական դոգմաները՝ Եկեղեցիին մէջ միան-

գամայն յետասանուտ երեւոյթներ են, հարկադրուած տարբեր ժամանակաշրջաններու ընկերային-հասարակական պահանջքներէ, պատմական դէմքերու եւ դէպքերու հետ առնչուած պարագաներէ: Դ. եւ Ե. դարերու Հաւատոյ Հանգանակը, բնականաբար, նոյնը չէ, ինչ որ առաքելական շրջանի Եկեղեցիի Դաւանութիւնն էր: Դ. եւ Ե. դարերու այսպէս կոչուած Նիկիա-Կոստանդնուպոլսական Դաւանութիւնը, որ այսօր, Պատարագի ընթացքին կը կիրառենք մեր Եկեղեցիներուն մէջ, շատ աւելի բարդ եւ խճողուած կառոյց մը ունի, քան նախնական Եկեղեցիին այն պարզունակ Հաւատամքը, որ քանիցս արտայայտուած է Գործք Առաքելոց գիրքին մէջ. «Նապովրեցին Յիսուս, որ մատնուեցաւ, չարչարուեցաւ ու մեռաւ խաչին վրայ, եւ որուն Աստուած յարութիւն տուաւ մեռելներէն»:

Ահաւասիկ վարգացումը, բարենորոգումներն ու բարեփոխութիւնները կենսական անհրաժեշտութիւններ են Եկեղեցիին համար, որպէսզի ան, յարմարելով ժամանակի ոգիին եւ մտայնութեանը՝ կարենայ ապրիլ ի ինդիր մարդուն եւ անոր փրկութեան, ցորչափ որ ան չի շեղիր հիմնական սկզբունքներէն եւ սրբազան աւանդութիւններէն:

Այս իմաստով, Լատիններու ծանօթ ասացուածքին համաձայն, Եկեղեցին՝ *Ecclesia semper reformanda* կը կոչուի, այսինքն՝ ժամանակի եւ պատմութեան հետ վարգացող Եկեղեցի մը, որ ընկերային-հասարակական կեանքին մէջ կը բերէ իր գերակշռող ու փրկարար նպաստը:

Անդրադառնալով եկեղեցական աւանդութեան, ան ալ վերջինիս հետ կ'ապրի իր վարգացումը համապատասխան ձեւերով: Աւանդութիւններ պէտք է արժեւորուին ու ծառայեն որոշակի նպատակներու: Եկեղեցիի մը յառաջդիմութիւնը անխուսափելիօրէն կը դանդաղի, եթէ իր ծոցին մէջ ծնած դարաւոր ար-

ժեքներ, աւանդութիւններ, իրենց նուիրականութեան, գուցէ եւ հնամենիութեան բերումով, իբրեւ անձեռնմխելի աւանդներ ընկալուին ու դրուին ժամասակի ոգիին ու պահանջներուն բոլորովին հակառակ դիրքորոշման մէջ:

Որքան ալ կարծենք թէ աւանդութիւններ միայն նուիրական ու անձեռնմխելի են, այնուամենայանիւ պատմական փաստերը մեզի կը ներկայացնեն բոլորովին տարբեր պատկեր մը, նոյնիսկ արեւելեան ամենաաւանդապաշտ Եկեղեցիներէն՝ Հայ Եկեղեցւոյ մէջ: Օրինակ՝

ա) Մինչեւ ԺԳ. դար, Հայ Եկեղեցւոյ ծիսական հնամենի աւանդութիւններէն մին էր պահոց շրջանը անցընել բացարձակապէս բուսական սնունդով⁽¹⁾: ԺԳ. դարէն վերջ պահոց ուտիք համարուեցաւ նաեւ ձկնեղէնը, հաւանաբար ժամանակի լատինական ապրեցութեան հետեւանքով:

բ) Մինչեւ ԺԹ. դար, Հայ Եկեղեցւոյ մէջ հնագոյն աւանդութիւն էր Ս. Չատիկի տօներու տոմարական կարգը դասաւորել ըստ Էսսեան Հինգհարիւրեակի, երբ Յոյներ նոյնը կը կատարէին հետեւելով Իրիոն Բիւզանդացիի հաշուարկին: Հետեւելով վերջինիս, իւրաքանչիւր Հինգհարիւրեակի մէջ, 95 տարին անգամ մը Էսսեան եւ Իրոնեան տոմարներու միջեւ կ'առաջանային չորս տարբերութիւններ, ըստ որում, Յոյները իրենց Չատիկը կը տօնէին Ապրիլ 6-ին, իսկ Հայերը՝ 13-ին: Չատկական տօնակատարութեանց

(1) *Տե՛ս Եսայի Վրդ. Նչեցի, Առ Տէր Մատթէոս, հրտ. Ճոաբաղ, 1861, էջ 208 = Ամենայն պահէ՛ անձո՛ւկ եւ անձէ՛թ եւ անգի՛նի՛ (պարտ է) պահել, զի քրիստոնէից կանոն է: Կանոնագիրք Հայոց, Ա., Կանոնք Յովհաննու Մանդակունւոյ, աշխ. Վագգէն Յակոբեանի, էջ 493-497: Կանոնք Սուրբ Ժողովոյն Կարնոյ = «Ի պահս սուրբ Չատիկի աղուհացիցն Քառասնորդացն... ի փափուկ կերակուրս ամենեւի՛ն մի՛ յուծանիցեն՝ մի՛ ի ձէթ, մի՛ ի գինի եւ մի՛ ձուկն բայց միայն հաց եւ յաղ» (Անդ, Բ, էջ 253, եւ այլն):*

այս տոմարական տարբերությունները պատմության մէջ կը կոչուին «Ծռապատիկ»ներ⁽²⁾, որոնց համդիպման առիթով մեծ կռիւներ տեղի կ'ունենային Հայերու եւ Յոյներու միջեւ, յատկապէս այնպիսի բնակավայրերու մէջ, ուր երկու համայնքներն ալ կը ներկայանային հոծ թուով: 1824-ին, 12 դարերու երկարատեւ պայքարէ ետք, Հայ Եկեղեցին, զատկական տոմարի հարցով, կը վիջի յունաստան-օրթոտոքութեան առաջ եւ փաստօրէն կ'ընդունի Իրինոս Բիւզանդացիի տոմարական կարգը, որու դէմ մեր եկեղեցական Հայրերէն ոմանք նոյնիսկ նպովքներ սահմանած էին. «Բայց մեզ քաւ եւ մի՛ լիցի հաւանել ժամանակագրութեանն Իրինոսի շփոթելոյ, եւ յաճախելոյ արտաքոյ աստուածային գրոց. եւ մի՛ ընդունիլ զթիւ տոմարի նորա զխաբդականս, եւ լիցուք ընդ նպովիւք սուրբ Հարցն»⁽³⁾:

զ) Մեր Եկեղեցւոյ մէջ ծիսական ասանդութիւն է Ս. Պատարագի Հաղորդութեան շրթունքի կամ բերանի մատակարարման ձեւը: Հակադրուելով լատին միսիոնարներուն, Ս. Գրիգոր Տաթեւացին նոյնիսկ նպովքով արգիլած էր Ս. Հաղորդութեան ե՛լ ձեռքի մատակարարման ե՛լ սրբագործուած հացը առանց Հաղորդութեան բաժակին (գինիին) մէջ թաթխելու հաւատացեալներուն բաշխելու արեւմտեան սովորութիւնը⁽⁴⁾:

Ըստ Հայ Եկեղեցւոյ մէջ կիրառուած ծիսական կարգի, հաղորդուող հաւատացեալը Ս. Հաղորդութեան վսեմութեան առջեւ այնքան նուաստ կը նը-

(2) *Տե՛ս Աբէլ արեղայ, Վասն Մոյրման Զատկին Բանք Թուղթը Մեր Մատենագրութեան Մէջ, Ազգ. Մատ. ՄԼԸ, Վիեննա, 1993, էջ 144-164:*

(3) *Տե՛ս Անանիայի Շիրակունոյ Մնացորդ Բանից, Ի Զատիկն Տեառն, հրտ. Ա. Պ., Պետերբուրգ, 1877, էջ 22: Աբրահամեան Ա., Յովհաննէս Իմաստասէրի Մատենագրութիւնը, Երեւան, 1965:*

(4) *Տե՛ս Գրիգոր Տաթեւացի, Գիրք Հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 553, 597-600:*

կատուէր, որ արժանի չէր Անոր հետ ունենալու ձեռքի որեւէ շփում:

Պարագան այսօր բոլորովին այլ է: Ինչպէս Գասատայի, նոյնպէս եւ Հիւսիսային Ամերիկայի հայկական շատ ծուխերու մէջ, այլապան հիւանդութիւններէ եւ վարակներէ պզուշանալու հետեւանքով, հետպիտէ կ'ընդհանրանայ Ս. Հաղորդութեան ձեռքի մատակարարման ձեւը: Հաղորդութեան պահուն, հաւատացեալը իր ձեռքին վրայ կ'ընդունի Ս. Հաղորդութիւնը եւ ապա պայն կը տանի իր բերանը: Ընդհանրացող նոր սովորութիւն մը, որ բնականաբար խոտոր է Հայ Եկեղեցւոյ ծիսական ոգիին:

դ) Այս շարքին կը պատկանի նաեւ պատարագիչ քահանայի օրը միայն մէ'կ Պատարագ մատուցանելու, միայն մէ'կ նշխար օրհնելու, ինչպէս նաեւ տուեալ Եկեղեցիին մէջ ընդհանրապէս օրը ոչ մէկէ աւելի Պատարագի արարողութիւններ կատարելու աւանդութիւնը⁽⁵⁾:

Սակայն այսօրուայ իրականութիւնը մեզի կը ներկայացնէ բոլորովին տարբեր պատկեր մը. հոգեւորականներու թիւի խիստ սահմանափակումը թեան պատճառով, յաճախ հոգեւորականը ստիպումը կ'ըլլայ նոյն օրը այս կամ այն ծուխին մէջ կատարելու մէկէ աւելի պատարագներ՝ արտօնութեամբ կամ հրահանգովը իր թեմակալ առաջնորդ եպիսկոպոսի:

ե) Նմանապէս հնագոյն աւանդութիւն է Հայ Եկեղեցւոյ մէջ գրաբար լեզուի կիրառութիւնը: Հայ Եկեղեցւոյ ծիսական-արարողական պաշտօնական լեզուն գրաբարն է: Սակայն գրաբարը վաղուց արդէն մեռած լեզու մըն է, հանրային կեանքի մէջ անգործածելի: Հայ հաւատացեալը ի վիճակի չէ այլեւս ընկալելու եկեղեցիին մէջ մատակարարուող պաշտա-

(5) Նոյնը:

մունքն ու ծէսը, վասնպի գրաբարը դադրած է հաղորդակցական միջոց մը ըլլալէ: Լեզուն հաղորդակցութեան միջոց է, որով ան իր վրուցակիցին կամ ունկնդրողին կը փոխանցէ միտքեր ու բովանդակութիւններ: Եկեղեցական արարողութեանց եւ յատկապէս խորհրդակատարութեանց ընթացքին փաստացիօրէն նկատած ենք, որ ներկայ հաւատացեալը, հակառակ իր գործադրած կեդրոնացումի եւ զգաստութեան բոլոր ճիգերուն, հաղորդակից չէ կատարուող արարողութեանը, առանց անոր ալ յաճախ կրկնութիւններով խճողուած երկարաշունչ աղօթքներուն:

Այս պարագային ակնյայտ վտանգը այն է, որ ծէսը ականայ կը շեղի իր հիմնական նպատակէն: Ծէսին ու արարողութեանց հիմնական նպատակը՝ քայլ առ քայլ նախապատրաստել ու առաջնորդելն է հաւատացեալը՝ հանդիպում ունենալու համար Քրիստոսի կամ Անոր խորհուրդին հետ: Բոլորովին անկախ այն իրողութենէն, թէ մարդ որքան առաւել կամ նուազ հաւատացեալ է, դժբախտաբար, վերոյիշեալ փաստը իցիւ թէ գտնէինք մեր Եկեղեցիներուն մէջ:

Մաշտոցեան գիւտի ամբողջ միտք բանին եւ մըղիչ ոյժը՝ Ե. դարուն Հայ Եկեղեցւոյ մէջ լուսարէն եւ ասորերէն լեզուներով կատարուող հաղորդականութենէ զուրկ ծիսական կեանքի մը հաղորդականութեան ստեղծումն էր հայ ժողովուրդին՝ իր ընթացիկ խօսակցական հայերէն լեզուով եւ համապատասխան այբուբենով:

Կը թուի թէ պէտք է երկրորդ Մաշտոց մը ծնի, որպէսպի ծիսական գրաբարը արդի աշխարհաբարի վերածէ, հաղորդականութիւն ստեղծելով մատակարարուող նիւթի եւ զայն ունկնդրողի միջեւ: Հակառակը պնդելու պարագային, հարկ է իբրեւ պարտադիր նիւթ ընդունիլ գրաբար լեզուի դասաւանդումը

բոլոր հայկական վարժարաններին ներս, ժամանակակից հայ մարդուն մօտ կարենալ ապահովելու համար նուազագոյն հաղորդականութիւն եկեղեցւոյ ծիսական-արարողական կեանքին մէջ:

Անկախ նկարագրուած վերոյիշեալ փաստէն, հոս դրական անդրադարձով կը նշենք, թէ Անթիլիաս եւ Պոլիս տպագրուած նորագոյն Մաշտոցներու եւ ծիսարաններու մէջ, լայն տեղ տրամադրուած է արեւմտահայ աշխարհաբար լեզուին, իսկ աստ եւ անդ, գոնէ Հիւսիսային Ամերիկայի եւ Գանատայի Եկեղեցիներուն մէջ, սկսած է ուղղակի աշխարհաբար ընթերցումը Աւետարաններու եւ առաքելական թուղթերու, ինչ որ գուցէ դեռ քանի մը տասնեակ տարիներ առաջ՝ սրբապղծութիւն կը նկատուէր:

Ահաւասիկ, թուարկուած այս մի քանի յարացոյցները կը հաստատեն, որ աւանդութիւններն ալ, անկախ շերմեռանդական յարգելի զգացումներէ եւ գեղագիտական ճաշակէ, ժամանակի պահանջներուն բերումով, ենթակալ են փոփոխութեան կամ վարզացման. անշուշտ, կրկին կ'ուրկենք շեշտել, պայմանաւ որ այդ փոփոխութիւններն ու վարզացումները հիմնականօրէն չհակառակին տուեալ աւանդութեան ոգիին կամ էութեան:

3. ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Եկեղեցին, իբրեւ ի Քրիստոս հաւատացողներու հաւաք՝ անբողջական միաւոր մըն է, միութիւն մը, որ կը հիմնուի Հաղորդութեան վրայ: Հաղորդութիւնը պարզապէս կը հանդիսանայ Եկեղեցիին էութիւնը: Հաղորդութիւն Տիրոջ Խօսքի, Մարմնի ու Արեան Խորհուրդի. «Քանի անգամ որ այս հացը ուտէք եւ այս բաժակը խմէք՝ պատմեցէք Տիրոջ մահը մինչեւ որ ան գայ» (Ա. Կորնթ. ԺԱ, 26):

Աստուծոյ Խօսքը՝ Աւետարանը եւ Ս. Հաղորդու-

թեան Խորհուրդը, գերագոյն եւ իրական գրաւականներն են Քրիստոսի ներկայութեան՝ Եկեղեցին մէջ եւ Իր հաւատացեալներուն միջեւ: Քրիստոսի այս ներկայութեան առջեւ է որ կը հաւաքուի հաւատացեալ դասը, եւ այսպէս կը կապմէ Տիրոջ առջեւ համախմբուած Եկեղեցին կամ Աստուծոյ ժողովուրդը, իր հոգեւորականաց եւ աշխարհականաց դասերով:

Այս երկու հիմնական դասերն, անշուշտ, աշխարհական եւ հոգեւորական, իրարմէ բաժան եւ իրարու հակադիր միաւորներ կամ դասակարգեր չեն Եկեղեցի կոչուած այս ամբողջութեան մէջ, այլ մէկ ժողովուրդ եւ մէկ Մարմին են Քրիստոսի՝ Աստուծոյ Խօսքի սպասարկութեան եւ ծառայութեան համապատասխան պաշտօններով:

Այս իմաստով, Պօղոս Առաքեալ Ա. Կորնթացւոց Թուղթի ԺԲ. գլուխին մէջ խօսելով «Քրիստոսի խորհրդաւոր մարմնի» մասին, կը շեշտէ. «Ինչպէս որ մէկ է մարմինը եւ ունի շատ անդամներ, եւ մարմնի այդ շատ անդամները բոլորը մէկ մարմին են, այնպէս ալ՝ Քրիստոս. քանզի մէկ Հոգիով մէկ մարմին ըլլալու համար մկրտուեցանք մենք ամէնքս՝ թէ՛ Հրեաներ, թէ՛ հեթանոսներ, թէ՛ ծառաներ, թէ՛ ապատներ. եւ ամէնքս ալ այդ մէկ Հոգին խմեցինք... Արդ, դուք մարմինն էք Քրիստոսի եւ անդամները անոր անդամներէն» (Ա. Կորնթ. ԺԲ, 12-13, 27):

Հոգեւորականը, Աստուծոյ Խօսքի սպասարկութեան մէջ, ծառայ է ժողովուրդին, եւ ոչ հակառակը – Ժողովուրդ, որ ինչպէս վերը նշեցինք, աւապանի Ս. Մկրտութեամբ նոյնպէս կոչուած է Քրիստոսի Մարգարէութեան, Քահանայութեան եւ Թագաւորութեան պաշտօնին:

Հայ Եկեղեցին, ի սկզբանէ անտի, այո՛, եղած է նուիրապետական, բայց երբե՛ք՝ կղերապետական: Դեռ եւս Ե. դարէն սկսեալ, իր ապգային-եկեղեցական պատմութեան մասնաւոր վարգացումով, ան ըս-

տեղծած է իր մէջ ժողովրդավարական իւրայատուկ դրոյթ մը, եւ պայն, իբրեւ մեծագոյն բարիք, պահած մինչեւ մեր օրերը:

Հայ Եկեղեցւոյ ժողովրդավարական կարգը որքան ալ խրթին ըլլայ իր գործնական ձեւերուն մէջ, կ'արտայայտուի սա մէկ նախադասութեամբ. ժողովուրդը կ'ընտրէ իր հոգեւոր առաջնորդները՝ ամենամեծէն ամենափոքրը: Այսպէս օրինակ, Ամենայն Հայոց Կաթողիկոսը կ'ընտրուի Ազգային-Եկեղեցական Ժողովին կողմէ, Եպիսկոպոսը՝ Թեմական Պատգամաւորական Ժողովի կողմէ ու կը հաստատուի Կաթողիկոսի կողմէ, իսկ հովիւր՝ ծուխին կողմէ ու կը վաւերացուի թեմակալ եպիսկոպոսէն:

Եկեղեցւոյ վարչական կառոյցին մէջ, ահաւասիկ, կը տեսնենք, որ գնահատելի իրաւասութիւններով օժտուած է հայ աշխարհիկ դասը: Բայց նոյն գնահատանքը անոր պիտի չկրնանք տալ հոգեւոր մարզին մէջ: Դժբախտաբար, հայ աշխարհականը այսօր Եկեղեցիին կողմէ ոչ մէկ տուչութիւն ունի, Եկեղեցւոյ առաքելական դաշտին մէջ աւետարանական, քարոզչական համապատասխան գործունէութիւն ծաւալելու համար: Եկեղեցական եւ կրօնական գիտելիքներու պակասը դարձած է այնքան գերակշռող ու համատարած, որ աշխարհականը ինքնաբերաբար մղուած է նկուն դիրքի մէջ:

Աւետարանելը եւ Քրիստոսի մասին հաւատոյ վկայութիւն տալը պարտականութիւնն է իւրաքանչիւր լաւ Քրիստոնեայի: Անշուշտ, հիմնական տարբերութիւն մը կայ քարոզելու եւ վարդապետելու միջեւ: Քարոզել կրնայ իւրաքանչիւր լաւ քրիստոնեայ. դժուարութիւնը վարդապետելու կամ Եկեղեցւոյ դաւանական հարցեր ուսուցանելու մէջ է, որ բնականաբար, յատուկ պատրաստութիւն եւ գիտելիք կը նախադրէ: Այս իմաստով է որ ԺԴ. դարուն, երբ Հայաստանի մէջ գործող լատին քարոզիչներ եւ Ունի-

թոր եղբայրներ, Հայ Եկեղեցւոյ ծիսական եւ աստուածաբանական ասանդութեանց խոտոր ուսմունքներ կը քարոզէին, եւ որոնց դէմ սուր պայքար կը մղէին յատկապէս Ապրակունեաց, Տաթեւի եւ Գլաձորի համալսարանները, Ս. Գրիգոր Տաթեւացին մասնաւոր իշխանութեան կը վերածէր զայն ու կը դարձնէր իրաւունքը միայն անոնց, որոնք յատուկ արարողութեամբ կը ստանային վարդապետական եւ ծայրագոյն վարդապետական աստիճանները:

Ի տես կոչումներու եւ հոգեւորականաց այսպիսի պակասի, որ մեր դարուն դարձած է լուրջ մտահոգութիւններէն մէկը ընդհանուր Եկեղեցիին, ե՛ւ հայ, ե՛ւ օտար, պէտք է որ Հայ Եկեղեցին իր աշխարհիկ ոյժերը, բացի վարչականէ, ներգրաւէ նաեւ կրօնական, եկեղեցական, առաքելական եւ քարոզչական աշխատանքներու մէջ: Ոչ միայն այս, այլ ցաւօք կը տեսնենք, որ մեր Եկեղեցիիին մէջ տարբեր դրդապատճառներով սահմանափակուած է ծառայութեան դաշտը նոյնիսկ որոշ եկեղեցականաց. ծառայութիւններ եւ պարտաւորութիւններ, որոնք աստիճանի եւ կոչումի բերումով պարտ էին անոնք արդէն իսկ կատարել:

ա) Եկեղեցւոյ նուիրապետական կարգը եռաստիճան է. Սարկաւագութիւն, Քահանայութիւն եւ Եպիսկոպոսութիւն: Կաթողիկոս, եպիսկոպոս թէ վարդապետ ձեռնադրութեամբ կամ օծումով իրենց շնորհուած Կոչումին հուրեանը մէջ՝ բոլորն ալ քահանաներ են: Քահանայութիւնն է այստեղ հականը եւ ոչ թէ ծառայութեան մասնաւոր մարպերը, ուրկէ, բնականաբար, կ'առաջանան իրաւունքներն ու իշխանութիւնները եկեղեցական համապատասխան կարգերու:

Ի տարբերութիւն քահանայի, եպիսկոպոսը մասնաւոր իշխանութիւն մը ունի օժելու եւ առաջնորդելու թեմական վիճակ մը, լատիններու բացատ-

րութեամբ՝ potestas ordinis եւ potestas iurisdiktionis կոչուածները: Այսուհանդերձ, եպիսկոպոսն ալ, սակայն, ընդամէնը քահանայ մըն է, ինչպէս նաեւ՝ կուսակրօն վարդապետը: Կուսակրօնութիւնը առաւելութիւն մը չէ քահանայութեան նկատմամբ: Կուսակրօնութիւնը վանական կեանքի մէկ արգասիքն է, որ յետսամուտ է մեր Եկեղեցիին մէջ: Գիտենք, որ մինչեւ Ե. դար, մեր կաթողիկոսներն ու եպիսկոպոսները ամուսնացած էին, իսկ Կաթողիկոսական Աթոռն ալ ժառանգական էր մինչեւ Ս. Սահակ Պարթեւ, քանի որ անոր բախտ չէր վիճակուած ունենալու արու վաւակ մը⁽⁶⁾: Մեր դասական մատենագրութեան մէջ միայն ցաւով կը յիշուի այս դէպքը: Լուսապսակ պատմիչներ իրենց երկերուն մէջ տիրութեամբ արձանագրած են անկումը Արշակունեաց թագաւորութեան եւ բնական դադարեցումը Կաթողիկոսական Աթոռի ժառանգականութեան՝ պարթեւական սերունդէն Ս. Գրիգոր Լուսաւորչի⁽⁷⁾:

Ամուսնացեալ քահանայն, մեր Եկեղեցոյ մէջ եր-

(6) «Յառաջ քան զամս քազումս խորհուրդք անմխիթարք նեղէին զիս, անդադար զմտաւ ածելով եւ աղաչելով զԲարձրեայն՝ շնորհել ինձ արու որդի, որպէս եւ նախնեաց իմոց, որք յառաջ քան զիս էին ամուսնացեալք յաղագս որդէծնութեան...»: «...Եւ վասն զի ոչ գոյր իւր արու որդի, բայց միայն դուստր մի, գոր էր տուեալ կնութեան Համագասպայ տեառն Մամիկոնէից եւ Հայոց սպարապետի, որ ծնաւ ի Համագասպայ երիս արու որդիս. զսուրբն Վարդան եւ զսուրբն Հմայեակ եւ զերանելին Համագասպեան». տե՛ս Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց, Երեւան, 1982, էջ 64-68, 84:

(7) «Եւ ընդ ահեկէ բեմին որ ցուցաւ քեզ աթոռ չորեքկուսի ծովագոյն սառնակերպ՝ զնստումն գահու քահանայութեանն եւ թագաւորութեանն ցուցանէ [...]: Եւ նափորտն քեհեգեայ, գոր տեսանէիր ծայեայ եւ եղեայ ի վերայ սկտեղն, եւ գունդն ոսկի որ կայր մերձ նափորտանն՝ նշանակէ միւսն զքահանայութիւնն, եւ միւսն զթագաւորութիւնն: Եւ զի ոչ ոք էր արկեայ դիւրեաւ զնափորտն, եւ ոչ այն ոք էր որ զգունդն ունէր ի ձեռին՝ լո՛ւր ստուգապէս, զի լոքսցէ մերձ ընդ մերձ թագաւորութիւն յազգէդ Արշակունեաց, եւ քահանայութիւն ի ցեղէ արժանաւոր քահանայապետին Գրիգորի», հմմտ. Փարպեցի, անդ, 76:

կար ատեն մղուած էր լուսանցքային վիճակի մը մէջ եւ կը նկատուէր ընդամենը ծիսակատար մը, զուրկ վարչական-ժողովական կարողութիւններէ. այլ խօսքով, երկրորդ կարգի քաղաքացի մը մեր Եկեղեցիին մէջ: Ե՛լ Դուրեան, ե՛լ Գուշակեան, ե՛լ Օրմանեան լուսամիտ եւ լուսահոգի պատրիարքները, Հայ Եկեղեցւոյ բարեկարգութեան վերաբերեալ իրենց յօնուածներուն մէջ անդրադարձած են այս հարցին ու առաջարկած՝ ամուսնացեալ կարող քահանաներու բարձրացումը եկեղեցական դասին մէջ, ընդհուպ մինչեւ վարդապետական աստիճանի:

Այս առնչութեամբ, Մաղաքիա Արք. Օրմանեան իր հանրածանօթ «Հայոց Եկեղեցին»⁽⁸⁾ աշխատութեան մէջ կը նշէ.

«Ամուսնացեալ քահանաներու առջեւ բաց եղող պաշտօններն են աւագերէցութիւն, առաջնորդական փոխանորդութիւն, կրօնական ժողովականութիւն, եւ ուրիշ ժողովներու եւ խորհուրդներու անդամակցութիւն՝ ուր բոլոր եկեղեցականներն ալ ընտրելի են: Առաջնորդութիւններու պարապութեան ատեն ալ տեղապահութեան կը կոչուին, բայց ոչ վարդապետական եւ ոչ եպիսկոպոսական աստիճաններու կը բարձրանան, բայց եթէ այրի մնալէ ետքը կուսակրօն կղերին դասակարգը անցնելով: «Ինչչափ ալ այդ սեղմեալ դրութիւնը մեր օրով օրէնքի կարգ անցածի չափ ընդհանրացած ըլլայ, սակայն ո՛չ հին օրէնք է եւ ո՛չ կանոնական պահանջ: Մանաւանդ թէ երբ եպիսկոպոսութեան բնութիւնը լաւ ուսումնասիրուի, պիտի տեսնուի թէ անիկա քահանայական պաշտօններու եւ «հոգ հոգւոց» կոչուած ծառայութեանց բովանդակութիւնն է, եւ տիրապէս ամուսնացեալ քահանայութեան յատուկ եւ սեփական պաշտօններուն լրումն է: Հին ատեն եպիսկոպոսներ երիցագոյն քահանա-

(8) Մաղաքիա Արք. Օրմանեան, Հայոց Եկեղեցին, Կ. Պոլիս, 1911:

ներուն մէջէն կ'առնուէին, եւ այս կերպով «քահանայապետ» անունը կ'առնէին, որ է ըսել ամբողջ վիճակի մը քահանաներուն պետը, ինչպէս որ իւրաքանչիւր եկեղեցւոյ քահանաներուն գլխաւորն ալ «աւագերէց» կը կոչուի: Այսօր ալ բնաւ կանոնական արգելք մը չկայ, որ նորամուտ սովորութիւնը, որչափ ալ տարածուած ըլլայ, հնաւանդ եկեղեցական կանոններուն տեղի չտայ, եւ ամուսնացեալ կղերին առջեւ բաց ըլլան եկեղեցականութեան բարձրագոյն աստիճանները: Այս պարագային ազգը մեծապէս օգուտներ ալ կ'ունենար, որովհետեւ այս կերպով ամուսնացեալ կղերը կ'ապաստէր ստորնութեան վիճակէ մը, որ ոչ մի կերպով չ'արդարանար, եւ որուն բուն պատճառները՝ իրեն վրայ դրուած պատահական պրկումներն են: Ներկայ դրութեան հետեւանքով, անոնք որ քիչ մը վարգացում ստացած են, ընդհանրապէս կը խուսափին ստանձնել կենցաղական ընթացք մը, ուր թէ՛ շատ դժուարութիւններ կան, եւ թէ՛ բարոյական իղձեր գոհունակութիւն չեն գտներ, նիւթական օգուտներ ալ նուազ են: Հետեւապէս միայն համետ եւ միջակ կարողութեան անձեր, որոնք բարձր ձգտումներ չունին, անոնք միայն քահանայական աստիճանին հետամուտ կ'ըլլան: Ահա իսկական իրականութիւնը, որուն պատճառաւ ամուսնացեալ քահանայութիւնը Արեւելքի մէջ ստորնութեան մէջ կը մնայ, եւ ըսելու իսկ պէտք չկայ, թէ հաւատացեալներն են որ այդ կացութեան վնասները կը կրեն: Որպէսզի այդ բանին դարման մը մատուցուի, մենք կը կարծենք, թէ բաւական է որ եպիսկոպոսական ընտրելիներու մասին եկեղեցւոյ հնաւանդ եւ կանոնական ձեւը նորէն ձեռք առնուի: Երբոր քահանայական դասակարգին առջեւ յառաջդիմելու ասպարէզը կ'ընդարձակուի, ազգայիներուն վարգացեալ դասակարգն ալ դժուարութիւն չ'զգար այլեւս ամուսնաւոր քահանայութեան շարքին մէջ մտնել, եւ ասով

դասակարգին պատիրը ապգայնոց աչքին առջեւ կը բարձրանայ, եւ քահանաներն ալ արժանաւորագոյն կերպով կը լրացնեն իրենց կոչումին պարտաւորութիւնները, եւ կը համապատասխանեն դարուս վարգացման աստիճանին (...)⁽⁹⁾:

«Թեմակալութեան նուիրապետական պաշտօնները, թէ հաստատուն անուանմամբ եւ թէ առժամեայ տեղակալութեամբ, կուսակրօն կղերին յատուկ են: Այդ դասակարգին կրնան մտնել ոչ միայն ամուրիներ, այլ եւ քահանայական ձեռնադրութենէ առաջ կամ ետքը այրիացեալներ: Եպիսկոպոսական աստիճանն ալ, ինչպէս առիթը ունեցանք ըսելու, կուսակրօն դասակարգին մէջ եղողներուն պահուած է այսօր, առանց բացառութեան: Վեղար կրելու եւ գաւապան բռնելու արտօնութիւններն ալ նոյնպէս ամուսնացեալ կղերին չեն տրուիր: *Թէպէտեւ Եկեղեցին կանոնական արգելք մը դրած չէ, որ ամուսնացեալ քահանաներն ալ, երբոր պահանջուած ուսումն ունին քարոյ խօսելու իշխանութիւն ստանան վարդապետութեան աստիճանով եւ գաւապանի տուչութեամբ*»⁽¹⁰⁾:

Ճիշդ է որ Հիւսիսային Ամերիկայի ու Գանատայի թեմական վիճակներուն մէջ ամուսնացեալ քահանաներ այսօր աւելի արդար դիրք մը ունին, սակայն եկեղեցական աստիճանի բարձրացում դեռ նշմարելի չէ, հակառակ անոր որ անոնցմէ շատեր վարչական աւելի կարողութիւն եւ ուսում ունին, քան շատ մը կուսակրօն հոգեւորականներ:

Համոզուած ենք, որ հարկ է էականը՝ բոլոր հոգեւորականներու քահանայ ըլլալու առաջնահերթ գաղափարը կամ գիտակցութիւնը վարգացուի մարդոց մօտ: Քահանաներ, որոնք գուցէ եկեղեցական

(9) Հմեմ. անդ, 170-171:

(10) Հմեմ. անդ, 173:

շատ աւելի դժուարին կոչում ունին իրենց քրիստոնէսավայել, օրինակելի ընտանիքով Եկեղեցիին եւ համայնքին մէջ հաւատոյ վկայութիւն տալու Քրիստոսի մասին, քան կուսակրօն հոգեւորականը:

բ) Անդրադառնալով սարկաւազներուն, ցաւով կը հաստատենք, որ մեր Եկեղեցւոյ վարչական-ընկերային կեանքին մէջ, ընդհանրապէս չգալի չէ անոնց ներկայութիւնը: Սարկաւազն, այսօր, դարձած է ընդամէնը խորանի զարդ մը կամ երգիչ մը: Մինչդեռ Եկեղեցիին մէջ անոր ծառայութեան դաշտը շատ աւելի ընդարձակ էր քան այն փաստը, որ կը տեսնենք ներկայիս: Ի վուր չէ որ ընդհանրական Եկեղեցին սարկաւագութիւնը ընդունած է իբրեւ նուիրապետական կարգ: Արդարեւ, սարկաւագը իշխանութիւն ունի ոչ միայն Եկեղեցւոյ բեմէն Ս. Աւետարանը «գեղգեղելու», այլ նաեւ աւետարանելու կամ քարոզելու: Ան ո՛չ միայն լիազօրութիւն ունի Ս. Պատարագի ընթացքին վերաբերում կատարելու՝ Ս. Սկիհր խորհրդարանէն բերելով խորան, այլ նաեւ **անհրաժեշտութեան պարագային** աղօթելու, օրհնելու եւ Ս. Հաղորդութիւն բաշխելու հաւատացելոց, հիւանդաց, վշտացելոց, ճանապարհորդաց եւ խոստովանողաց: Սարկաւագը կրնայ նաեւ ոչ թէ խորհուրդներ, այլ արարողութիւններ կատարել, ինչպէս օրինակ՝ քահանայի բացակայութեան պարագային թաղման կարգ եւ սեղանի օրհնութիւն:

Անդրադառնալով սարկաւագի քահանային կողմէ արբազործուած Հաղորդութիւն բաշխելու իրաւունքին, հարկ է այստեղ ի մասնաւորի արձանագրել, որ այս կապակցութեամբ որոշակի շփոթ առաջացուցած է Նիկիոյ Ա. Տիեպերական Ժողովի ԺԷ. կանոնը, ինչպէս նաեւ նոյնի համառօտ կրկնութիւնը Կանոնք Բ. Նիկիականք ԺԸ.ին մէջ:

«Լուր էհասա ի սուրբ եւ մեծ ժողովն Նիկիայ, թէ ի տեղիս տեղիս սարկաւագունք արեհնս տան եւ մկր-

տութիւն առնեն. եւ ընդդէմ թուեցաւ գործն Առաքելական կանոնաց եւ մեծ ամենայն ժողովոյս. բայց աղէ որք ոչ ունին իշխանութիւն մատուցանել պատարագ՝ նոցա վիճարդ համարձակ լինի վնարմինն Քրիստոսի բաշխել. այլ որք մատուցանեն պատարագ՝ նոքին եւ բաշխեացեն, եւ սարկաւագին իշխանութիւն լիցի հանել ի սեղանն եւ իջուցանել եւ վզուշութեամբ ի սպասու կալ եպիսկոպոսին, այլ եւ ընդ երիցունսն խառն արեհնս առնուլ կանոնք ոչ հրամայեն»⁽¹¹⁾:

Ինչպէս վերը յիշեցինք, նոյնի համառօտ կրրկնութիւնը Կանոնք Բ. Նիկիականք ԺԸ.ին մէջ կ'ըսէ.

«Ոչ է պարտ սարկաւագի արեհնս տալ, եւ ոչ նստել ընդ երիցու»⁽¹²⁾:

Մեկի համար միշտ հարց էր թէ ինչպէ՞ս կրնայ ըլլալ որ եկեղեցական իրաւունքի վրայ այնքան խարխուլած Եկեղեցի մը, որպիսին է Լատին Եկեղեցին, եպիսկոպոսի եւ քահանայի կողքին, ըստ 1983 թուականի CIC-ի 910-րդ յօդուածի⁽¹³⁾, իշխանութիւն կու տայ նաեւ սարկաւագին՝ Ս. Հաղորդութիւն բաշխելու ժողովուրդին, կարծէք, անտեսելով Նիկիոյ Տիեպերական Ժողովի Ս. Հայրերու որոշումը:

Այս հարցը միանգամայն կը լստականայ, երբ կը դիմենք վերոյիշեալ Ժողովի ուղղակի յունարէն բնագրին, ուր ինդրոյ առարկայ պարագան կը ներկայանայ բովանդակային բոլորովին այլ կառոյցի մը մէջ.

«Սուրբ եւ մեծ ժողովը լսած է այն մասին, թէ որոշ վայրերու եւ քաղաքներու մէջ, սարկաւագներ Հաղորդութիւն կու տան քահանաներուն, որը միանգամայն խոտոր է ե՛լ [եկեղեցական] կանոններուն ե՛լ

(11) Հմմտ. Կանոնագիրք Հայոց, Ա., աշխ. Վազգէն Յակոբեանի, Երեւան, 1964, էջ 129:

(12) Հմմտ. Կանոնագիրք Հայոց, Բ., աշխ. Վազգէն Յակոբեանի, Երեւան, 1971, էջ 75:

(13) «Minister ordinarius sacrae communionis est Episcopus, presbyter et diaconus», CIC, 1983, p. 412.

աւանդութեանց. անոնք, որ իրենք իշխանութիւնը չունին պատարագելու, Քրիստոսի մարմնով կը հաղորդեն՝ պատարագելու իշխանութիւնը ունեցողներուն: Իմացուած է նաեւ այն մասին, թէ որոշ սարկաւազներ եպիսկոպոսներէ առաջ կ'ընդունին Հաղորդութիւնը: Հարկ է որ այս բոլորը անմիջապէս վերջ գտնեն, եւ սարկաւազներ մնան իրենց սահմաններուն մէջ, գիտակցելով, որ եպիսկոպոսի սպասաւոր-սարկաւազը՝ նուազ է քան քահանայն: Ուստի, պէտք է որ անոնք Հաղորդութիւնը, ըստ կարգի, քահանայէն վերջը ընդունին [...]: Արտօսելի չէ նաեւ, որ սարկաւազներ նստին քահանայներու միջեւ, որ հակառակ է կարգի ու կանոնաց: Եթէ մէկը այս կարգադրութենէն վերջ դեռ չ'ուլեր հնապանդիլ, թող զրկուի սարկաւազութեան աստիճանէն»⁽¹⁴⁾:

Սոյն թարգմանութենէն յտակ կ'ըլլայ, որ խօսքը պատեղ ոչ թէ սարկաւազի Հաղորդութիւն քաշխելու իշխանութեան սահմանափակման մասին է աշխարհականաց կամ ժողովուրդին, այլ միայն հանդէպ քահանային կամ եպիսկոպոսին:

Այս բացատրութենէն մեկնելով, պարզ կը դառնայ նոյն կանոնի մէջ արձանագրուած այն հրահանգը, թէ ինչո՛ւ սարկաւազը, ըստ նուիրապետական կարգի, կը հաղորդուի ոչ առաջ քան եպիսկոպոսն ու

(14) *Sb' u Carl Joseph von Hefele, Concilsgeschichte, Bd. 1, Freiberg, 1873, p. 423.*

Ἡλθεν εἰς τὴν ἀγίαν καὶ μεγάλην σύνοδον, ὅτι ἔν τισι τόποις καὶ πόλεσιν τοῖς πρεσβυτέροις τὴν εὐχαριστίαν οἱ διάκονοι δι-θάσσιν, ὅπερ οὕτε ὁ καινῶν οὕτε ἡ συνήθεια παρέδωκε, τοὺς ἱεροσάκκοις μὴ ἔχοντας προεργερεῖν τοῖς προεργερεῖσι διδόναι τὸ σῶμα τοῦ Χριστοῦ. κἀκεῖνο δὲ ἐγνωρίσθη, ὅτι ἡδὴ τινὲς τῶν ἐπισκόπων καὶ πρὸ τῶν ἐπισκόπων τῆς εὐχαριστίας ἀπτόνται. ταῦτα μὲν οὖν ἴκταται περιηγήσθω· καὶ ἐμμενέτωσαν οἱ διάκονοι τοῖς ἰδίοις μέτροις, εἰδότες ὅτι τοῦ μὲν ἐπισκόπου ὑπηρεταὶ εἰσὶ, τῶν δὲ πρεσβυτέρων ἐλάττους τυγχάνουσι· λαμβανέτωσαν δὲ κατὰ τὴν τάξιν τὴν εὐχαριστίαν μετὰ τοὺς πρεσβυτέρους, ἢ τοῦ ἐπισκόπου διδόντος αὐτοῖς ἢ τοῦ πρεσβυτέρου. ἀλλὰ μὴδὲ καθήσθαι ἐν μέσῳ τῶν πρεσβυτέρων ἐξέστω τοῖς διακόνοις· παρὰ κωνόνα γὰρ καὶ πικρὰ τάξις ἐστὶ τὸ γινόμενον. εἰ δὲ τις μὴ θέλοι πειδμαστῆναι καὶ μετὰ τούτους τοὺς ὄρους, κεκαίσθω τῆς δια-κονίας.

քահանան, եւ ան դասին մէջ նոյնպէս կը նստի ոչ թէ քահանայից միջեւ, այլ անոնցմէ վերջ:

Ըստ երեւոյթին, Եկեղեցիի նուիրապետական կարգի մէջ դեռ ամբողջապէս չէր պարզուած սարկաւագաց տեղն ու դիրքը, ու որոշ հեղինակաւոր սարկաւագներ, չարաշահելով իրենց հանգամանքը, պատճառ կը դառնային շփոթ վիճակներու ստեղծման, ըստ որում, Դ. դարու սկիզբը, Եկեղեցւոյ Հայրերը ստիպուած կ'ըլլան, ի շարս այլ կարգապահական կանոններու, հաստատելու նաեւ վերոյիշեալը:

Համեմատելով յունարէն բնագրին հետ, տեսանք, որ կանոնիս հայերէն վաղ թարգմանութիւնը այնքան ալ յաջող կատարուած չէ, որու հետեւանքով մթագնած է միտք բանին, եւ պատճառ դարձած հետագայի խեղաթիւրումներուն:

Բնական է, որ աւելի ուշ ժամանակաշրջաններուն ապրած եկեղեցական մեր Հայրերը, նկատի ունենալով կանոնիս հայկական անյաջող թարգմանութիւնը, չէին կրնար քաջալերել սարկաւագներու այս ուղղութեամբ բերած բնական ծառայութիւնը Հայ Եկեղեցիին մէջ, բացի անհրաժեշտութեան պարագաներէ՝ ինչպէս եպիսկոպոսի արտօնութեամբ հիւանդաց այցելութիւն տալէ, եւ այլն:

գ) Անդրադառնալով սարկաւագական կարգին, չենք կրնար մեր ուշադրութեան ծիրէն դուրս ձգել **սարկաւագուհիներու**⁽¹⁵⁾ հարցը, որ նոյնքան այժմեական եւ կարեւոր է մեր Եկեղեցւոյ կենսունակութեան համար:

Յատկապէս ԺԱ. դարէն վերջ, Կիլիկեան Հայաստանի տարածքին կը վարգանայ հոյակապ աւանդութիւն մը, որը հետզհետէ աւելի կապմակերպուելով, կարծէք, իր ոսկեդարը կ'ապրի ԺԷ. դարուն,

(15) Այս մասին տե՛ս Աբել արեղայ, Հայ Եկեղեցու Սարկաւագուհիները, Նիւ Եորք, 1991:

Սինիքի մէջ, Մովսէս Գ. Տաթևացի Կաթողիկոսի օրով: Խօսքը Հայ Եկեղեցւոյ սարկաւազուհիներու ականդութեան մասին է, որը եղած է փայլուն մէկ արտայայտութիւնը հայ կրօնաւորական կամ վանական կեանքի⁽¹⁶⁾:

Ի տարբերութիւն ուրիշ շատ մը օտար եկեղեցիներու, Հայ Եկեղեցին արժանի համարած է իր կուսաններուն ու միանձնուհիներուն շնորհելու սարկաւազութեան աստիճանը, գուցէ սկզբնական շրջանին կուսանոցներու ներքին պահանջքները բաւարարելու նպատակով, բայց աւելի ուշ՝ նաեւ ժողովրդապետութիւններու մէջ բերելու համապատասխան ծառայութիւններ, ինչպէս որբախնամութիւն, հիւանդաց եւ աղքատաց ծառայութիւն, եւ այլն:

Կուսանոց-վանքեր ու միաբանութիւններ հաստատուած են Հայաստանի վանապան շրջաններու, ինչպէս նաեւ արտասահմանի մէջ, որպիսիք են՝ Հալիճորի Ս. Աստուածածնի կուսանաց անապատը, Աստուածածնի կուսանաց անապատները Շենհերի, Շոռոթի ու Նորատունի մէջ, Ս. Կատարինէի կուսանոց-վանքը Նոր Ջուղայի մէջ, Թիֆլիսի Ս. Ստեփաննոս կուսանոց-վանքը, ինչպէս նաեւ Սրբուհի Գալֆայեան կուսանոց-վանքը Պոլսոյ մէջ:

Դժբախտաբար, այսօր, եկեղեցական այս հնամենի ականդութիւնը գրեթէ մատնուած է մոռացութեան: Թէեւ յուսադրող, բայց զայն վերակենդանացնելու փորձերը Լիբանանի «Թռչնոց Բոյն» կոչուած որբանոցի տարածքին մէջ, հովանաւորութեամբ Կիլիկեան Աթոռի եւ յանձին «Գալեանեանց» նորաստեղծ կուսանաց-միաբանութեան, այնքան համեստ են, որ իցիւ թէ Սփիւռքահայ Եկեղեցիին մէջ դառնալին խայծ մը նոր պարթօնքի:

Այսօր, սարկաւազուհին, մեր Եկեղեցւոյ մէջ աւե-

(16) Անդ, 23-47:

լի՝ քան երբեք՝ ընելիք ունի: Երկրաշարժի հետևանքով, աղէտեալներուն սփոփելու դիտումով իր հոգեւոր քոյրերուն հետ Հայաստան ժամանած Մայր Թերեզյան, վարմանքով հաստատեց, որ մեր Եկեղեցւոյ մէջ «տուչութիւն» ունեցող ոչ մէկ կին կար, թէկուց իր հայրենակիցներուն հանդէպ ունեցած իր քրիստոնէական սէրը հիւանդապահութեամբ, խնամատարութեամբ եւ այլ բարեսիրական գործերով իրականացնելու: Պիտի ընդգծենք, որ այստեղ խօսքը Եկեղեցւոյ իշխանութեան կողմէ պաշտօնապէս շրնորհուած կրօնական այն տուչութեան մասին է, որ քրիստոնէական ծառայասիրութիւն նշանակող սարկաւազութիւն կը կոչուի: Եկեղեցւոյ մէջ հաստատուած եւ դէպի Քրիստոս իրականացող այս գիտակցուած ծառայասիրութեան սարկաւազութենէն, ամիստ՛ս, զո՛ւրկ եւ զրկուած է այսօր հայուն հին: Անոր ինչ որ եկեղեցասէր տիկնանց այս կամ այն միութեան մէջ լոկ կարկուտանով կամ խոհանոցով զբաղելու պարտականութիւնն է վերապահուած: Մինչդեռ, թէկուց մասնակի ձեւով վերաշնորհուելու է կրօնական այն կոչումը, որ ան հանդուրժողութեան փայլուն ոգի ունեցող Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ մէջ երբեմն ստեղծած է:

Այս ուղղութեամբ, մեր Եկեղեցւոյ Հայրերէն Մըխիթար Գոշ Վարդապետ, իր 1184 թուականին խըմբագրած «Դատաստանագիրք»ին⁽¹⁷⁾ մէջ կը յանձնարարէ. «Մի՛ ինչ նոր եւ անարգ վարկցիս զայս, քանպի ի սրբոյ Առաքելոյն անդութենէ ուսանիմք... յանձն առնեմ ձեզ... զքոյր մեր, որ է սպասաւոր [= սարկաւազուի] Եկեղեցւոյն»⁽¹⁸⁾:

դ) Եպիսկոպոսական Ժողովը, Ազգային-Եկեղե-

(17) Միխիթար Գոշ, Գիրք Դատաստանի, աշխ. Խ. Թորոսեան, Երեւան, 1975:

(18) Հմկմ. սևդ, 136-137:

ցական ժողովէն յետոյ, Հայ Եկեղեցւոյ վարչական եւ հոգեւոր կառոյցին մէջ գործող կարեւորագոյն մարմինն է: Ազգային-Եկեղեցական ժողովը սովորաբար կը հրաւիրուի Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմէ **միայն բացառիկ առիթներով**, ազգային-եկեղեցական, ինչպէս նաեւ դաւանական հիմնական հարցերու վերաբերեալ որոշումներ ընդունելու, տնօրինումներ կատարելու կամ Աթոռի թափուր ըլլալու պարագային՝ Կաթողիկոսի ընտրութիւնը իրականացնելու նպատակով: Նկատի ունենալով այն փաստը, որ սոյն ժողովը կը գումարուի միայն բացառիկ առիթներով, միաժամանակ՝ գործնական գետնի վրայ եւս հնարաւոր չէ անոր յաճախակի գումարումը, ուստի, ինքնաբերաբար, Եպիսկոպոսական ժողովը կը դառնայ վերջինիս հեղինակաւոր ու գործադիր մարմինը՝ գլուխը Եկեղեցւոյ եւ պայն առաջնորդող ոյժը ե՛ւ մասնակի-թեմական ե՛ւ ընդհանուր եկեղեցական մակարդակի վրայ: Ան է որ, ի վերջոյ, անսալով ժամանակի պահանջքներուն, ընկերային-հասարակական եւ մշակութային կեանքի փոփոխութիւններուն ու վարգացումներուն, արդարեւ, Եկեղեցին կը դարձնէ «Ecclesia semper reformanda» մը կամ ժամանակի հետ առաջ ընթացող եւ վարգացող Եկեղեցի մը՝ մըտահոգ իւրաքանչիւր անհատի եւ հանրութեան փրկութեան վերաբերեալ կենսական հարցերով:

Ի դէպ, այստեղ հարկ է ընդգծել, որ Ազգային-Եկեղեցական ժողովը Հայ Եկեղեցիին յատուկ, անոր ժողովրդավարական ոգիին ու պատմական յօրինուածքին բնորոշ մէկ արգասիքն է: Համեմատելով վերջինիս հետ եւ մեկնելով Եկեղեցւոյ զուտ վարդապետական հայեցակէտէն, Եպիսկոպոսական ժողովը, ե՛ւ հեղինակութեամբ ե՛ւ գործելու եղանակով, բոլոր պարագաներուն, չի՛ կրնար ընկալուիլ իբրեւ ըստորադաս մարմին մը Եկեղեցւոյ վարչական կառոյցին մէջ, քանի որ ան կը հիմնուի ոչ թէ մարդկա-

յին, այլ գերապանցապէս «Աստուածային իրաւունքի» վրայ:

Ընկերային-հասարակական, բարոյագիտական, եկեղեցական ու բարենորոգչական ընթացիկ հարցեր լուծելու համար, բոլորովին հարկ չկայ սպասելու Ազգային-Եկեղեցական Ժողովի մը գումարման, երբ գոյութիւն ունի Եպիսկոպոսաց Ժողով մը, որու գումարումով Հայ Եկեղեցին ստոյգ պիտի չտուծէ իր ժողովրդավարական սկզբունքին մէջ:

Եղո՛ւկ, անցնող 25 տարիներուն⁽¹⁹⁾, մեր եպիսկոպոսաց յաջողած չէ գումարել եպիսկոպոսական ժողով⁽²⁰⁾ մը, համապատասխան դիրքորոշում որդեգրելու համար ի՛նչ խօսք՝ վերը նշուած մտահոգութեանց կամ ընդհանրապէս եկեղեցական եւ ընկերային-հասարակական կեանքի կարեւորագոյն խնդիրներու նկատմամբ, որպիսիք են՝ վիժեցում, դիահրկիպում, հեշտամահութիւն (euthanasia), եւ այլն: Առկայ հարցերով չզբաղիլ եւ կամ վանոնք անտեսել, չի նշանակեր թէ անոնք գոյութիւն չունին:

Ահաւասիկ, այս եւ նման հարցերով կը տառապինք Հայ Եկեղեցիով, Եկեղեցիին հետ եւ Եկեղեցիին համար, եւ կը յուսանք որ անձկութեամբ սիրելով մեր Եկեղեցին, այս տառապանքին ընդմէջէն պիտի տեսնենք վարդաւեղեղ արշալոյսը բարենորոգչական նոր սկիզբի եւ հոգեւոր-մշակութային վարթօնքը հաւատաւոր ժողովուրդիս:

(19) Վերջին Եպիսկոպոսաց Ժողովը գումարուած է 1969ին, Ս. Էջմիածնի մէջ:

(20) Անշուշտ, գիտակից ենք այն փաստի մասին, որ Եպիսկոպոսական Ժողովի մը գումարումի յաջողութեան հիմնական արգելի հանդիսացած են Սփիւռնի եւ Հայրենիքի քաղաքական պայմանները, որոնց ակամայ ենթարկուած է մեր Եկեղեցին. միաժամանակ՝ Աթոռներու բաժանումը, որու հետեւանումով կարելի չէ եղած ի մի հաւաքել Հայ Եկեղեցւոյ բոլոր եպիսկոպոսները, գործադրելի որոշումներ ընդունելու ամբողջ Եկեղեցիին համար: